

# ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

## ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԲՈՒԴԱՊԵՇՏԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԱՐԱՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌՑԱՆՑ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

# ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԵՎ ԿԻԲԵՌՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԲՈՒԴԱՊԵՇՏԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌՑԱՆՑ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

**Հոկտեմբեր, 2021թ.**

Ադրիան վան դեր Վիլկ

Եվրոպայի խորհուրդ

*Սույն աշխատության մեջ արտահայտված կարծիքները հեղինակներինն են և ոչ միշտ են արտացոլում Եվրոպայի խորհրդի պաշտոնական քաղաքականությունը:*

Քաղվածքների վերարտադրումը (մինչև 500 բառ) թույլատրվում է, բացառությամբ առևտրային նպատակների համար՝ տեքստի ամբողջական պահպանման, հատվածը համատեքստից դուրս չօգտագործելու, թերի տեղեկատվություն չտրամադրելու, ընթերցողին՝ տեքստի բնույթի, շրջանակի կամ բովանդակության վերաբերյալ այլ կերպ՝ չմոլորեցնելու պայմանով:

Սկզբնաղբյուրի տեքստում նշվում է՝ «Եվրոպայի խորհուրդ, հրապարակման տարի»: Փաստաթղթի ամբողջական կամ մի մասի վերարտադրման/թարգմանման հետ կապված բոլոր այլ հարցումները հասցեագրվում են Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության տնօրինությանը (F-67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Սույն փաստաթղթի հետ կապված բոլոր այլ նամակագրությունը հասցեագրվում է Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության գլխավոր տնօրինությանը:

Փաստաթղթի ամբողջ կամ մի մասի վերարտադրման/թարգմանության վերաբերյալ հարցումները հասցեագրվում են Եվրոպայի խորհրդի Հաղորդակցության տնօրինությանը (F- 67075 Strasbourg Cedex կամ publishing@coe.int):

Այս փաստաթղթի հետ կապված ցանկացած այլ նամակագրություն հասցեագրվում է Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության գլխավոր տնօրինությանը:

Շապիկի ձևավորում և էջատում՝ Եվրոպայի խորհրդի փաստաթղթերի և հրատարակությունների արտադրության բաժին:

Շապիկի լուսանկարը՝ Shutterstock

Սույն հրապարակումը Փաստաթղթերի և հրապարակումների վարչության խմբագրական բաժնի կողմից չի խմբագրվել՝ տպագրական և քերականական սխալներն ուղղելու նպատակով:

© Եվրոպայի խորհուրդ, դեկտեմբեր 2021 թ

Տպագրվել է Եվրոպայի խորհրդում:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | |
|---|---|
| **ԱՄՓՈՓԱԳԻՐ** | **6** |
| **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** | **9** |
| **ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌՑԱՆՑ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ** | **12** |
| ԵՐԵՎՈՒՅԹԸ՝ Ի՞ՆՉ, ԻՆՉՊԵ՞Ս ԵՎ ՈՐՏԵ՞Ղ | 12 |
| ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ | 13 |
| ՎԻԿՏԻՄԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ | 14 |
| ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑԱԾ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ | 16 |
| **ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ** | **18** |
| ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԸ | 19 |
| ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ | 20 |
| ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԵՏ | 22 |
| **ԲՈՒԴԱՊԵՇՏԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ** | **24** |
| ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ | 24 |
| ԲՈՒԴԱՊԵՇՏԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | 25 |
| Առաջին լրացուցիչ արձանագրությունը | 25 |
| Նախապատրաստվող երկրորդ լրացուցիչ արձանագրությունը | 25 |
| ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ և ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ | 26 |
| **ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌՑԱՆՑ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ** | **29** |
| ԿՆԽՎՄԿ ԿՈՄԻՏԵԻ ԹԻՎ 35 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ | 29 |
| ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ՝ ՍԵՔՍԻԶՄԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ | 30 |
| ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ | 31 |
| ԵՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ | 32 |
| ՏՈՒԺՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵՄ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ | 32 |
| ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ 108+ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ | 33 |

ԹՎԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՄ ՕՐԵՆՔԸ 34

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿԸ 35

ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻՆ ԱՌՑԱՆՑ ՀԱԿԱԶԴԵԼՈՒ ԵՄ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ 36

**ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 33-ՐԴ, 34-ՐԴ ԵՎ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ 38**

ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՌՑԱՆՑ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ 39

Առանց անձի համաձայնության նրա պատկերների կամ տեսանյութերի տարածում 40

Շահագործում, հարկադրանք և սպառնալիքներ պարունակող առցանց սեռական հետապնդում 42

Սեռականացված բուլինգ 44

Բուդապեշտի կոնվենցիայի կիրառելի դրույթները 44

ԱՌՑԱՆՑ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ՀԵՏԱՄՏՈՒՄ 46

Լրտեսող/հետամտող ծրագրերը, GPS-ի կամ աշխարհագրական տեղորոշման միջոցով տուժողին հետևելը 48

Ահաբեկում, սպառնալիքներ և վերահսկում իրերի համացանցի (IoT) միջոցով 50

Բուդապեշտի կոնվենցիայի կիրառելի դրույթները 51

ԱՌՑԱՆՑ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ 54

**ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ 55**

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 55

ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ 59

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ 64

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ 69

ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ, ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ, ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 71

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ 78

**ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 82**

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 82

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 84

**ՀԱՎԵԼՎԱԾ 1.
ՊԱՏԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՆՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԱՌՑԱՆՑ ՍԵՌԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՁԵՎ 87**

**ՀԱՎԵԼՎԱԾ 2.
ԱՌՑԱՆՑ ՍԵՔՍԻՍՏԱԿԱՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ՝ ՕՐԵՆՔՈՒՄ ՈՒ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ 90**

**ՀԱՎԵԼՎԱԾ 3.
ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ 95**

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 98**

# ԱՄՓՈՓԱԳԻՐ

Այս ուսումնասիրությունն անդրադառնում է այն հարցին, թե որքանով կարող են երկու միջազգային փաստաթղթերը՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և բռնության դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Ստամբուլի կոնվենցիա) և կիբերհանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Բուդապեշտի կոնվենցիա), օգնել հաղթահարել կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը՝ համակարգված քաղաքականության, կանխարգելման, պաշտպանության, քրեական հետապնդման և միջազգային համագործակցության շնորհիվ:

Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը իրական (անցանց) կյանքում կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի շարունակականությունն է՝ կոնտինուումը: Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ձևերի մեծ մասն արդեն իսկ սահմանված հանցագործություններ և իրավախախտումներ են, թերևս համացանցի միջոցով ընդլայնված, ուժեղացված կամ ընդհանրացված: Դրանց բացասական ազդեցությունը տուժողների և, ընդհանուր առմամբ, հասարակության վրա շատ մեծ է, իսկ անպատժելիությունը ավելի շուտ կանոն է, քան բացառություն:

Ստամբուլի կոնվենցիան շատ կարևոր գործիք է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեմ պայքարում, քանի որ այն մարդու իրավունքների անքակտելիությունը սահմանող առավել համապարփակ պայմանագիրն է, որն անդրադառնում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր ձևերին: Մինչդեռ Բուդապեշտի կոնվենցիան կիբերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ միջազգային օրինական պարտավորեցնող ամենաարդիական փաստաթուղթն է, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության համար:

Այս ուսումնասիրությունը դասակարգում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տարբեր ձևերը, սահմանում է դրան առնչվող հիմնական հասկացությունները, անմիջական հղումներ է կատարում Ստամբուլի կոնվենցիայի 33, 34 և 40 հոդվածներին՝ լրացնելով Բուդապեշտի կոնվենցիայի համապատասխան դրույթներով: Այնուհետև վերլուծվում են այդ ոլորտում ինտեգրված քաղաքականության, կանխարգելման, պաշտպանության և քրեական հետապնդման վերաբերյալ Ստամբուլի կոնվենցիայի դրույթները և լուսաբանվում դրանց կիրառումը՝ հաշվի առնելով կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բոլոր կողմերը:

Ուսումնասիրության հեղինակների կարծիքով Ստամբուլի կոնվենցիան և Բուդապեշտի կոնվենցի-

ան կարող են փոխլրացնել միմյանց դինամիկ կերպով: Ստամբուլի կոնվենցիայի առանձնահատկությունն այն է, որ այն կանանց նկատմամբ բռնությունը դիտարկում է որպես բռնություն, որը կիրառվում է կանանց նկատմամբ նրանց կին լինելու պատճառով: Բուդապեշտի կոնվենցիան բազմաթիվ միջոցներ է նախատեսում առցանց և նոր տեխնոլոգիաների օժանդակությամբ կատարված հանցագործությունների հետաքննության և էլեկտրոնային ապացույցների ապահովման համար, ինչպես նաև էլեկտրոնային ապացույցներ պարունակող ցանկացած այլ հանցագործության համար:

Սակայն կիբերհանցագործությունների ոլորտը մինչ օրս հիմնականում գենդերային չեզոք բնույթ է կրում, քանի դեռ կանանց նկատմամբ առցանց հանցագործությունները կիբերհանցագործությունների շրջանակներում չեն դասակարգվում որպես առանձին խումբ: Հաշվի առնելով գենդերային հավասարության գաղափարը ընդհանուր քաղաքականության մեջ ներդաշնակեցնելու ուղղությամբ գործադրվող ջանքերը, Ստամբուլի կոնվենցիայի լայն շրջանակը և համապարփակ մոտեցումը ծառայում է որպես նման ջանքերը խթանելու առանցքային կարևորության գործիք և որպես հիմք կիբերհանցագործության ոլորտում կանանց նկատմամբ բռնության երևույթի համակարգային ճանաչման համար:

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ աշխարհում համացանցի մատչելիության շարունակական աճի և թվային տեխնոլոգիաների ավելի լայն կիրառման պայմաններում կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը նոր դրսևորումներ է ստանում: Ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնությունը, որը տեղի է ունենում անցանց՝ տանը, դրսում կամ աշխատավայրում, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օժանդակությամբ սաստկանում, տարածվում և խորանում է: Ի հայտ են գալիս նաև բռնության նոր ձևեր: Կանանց նկատմամբ բռնությունն ազդում է կանանց վրա նրանց գենդերի և ինտերսեկցիոնալ բնութագրիչների պատճառով, այն տարածվում, արտահայտվում և վերականգնվում է առցանց տիրույթում և կոնտինուումում (Kelly, 1988):

Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը տեղի է ունենում տարբեր հարթակներում և տարբեր գործիքների օգնությամբ, ինչպես հանրությանը լայն հասանելի, այնպես էլ մասնավոր բնույթի, ինչպիսիք են սոցիալական ցանցերը, անձնական հաղորդագրությունների հավելվածները, էլ. նամակները, ծանոթությունների հավելվածները, ֆորումները, մեդիայի մեկնաբանությունների բաժինները, տեսախաղերի կամ տեսակոնֆերանսների հարթակները: Բռնությունը հաճախ տեսանելի է հանրության համար և տարածվում է անսահմանափակ՝ կրկնակի վիկտիմիզացիայի ենթարկելով տուժողներին: Բռնության այս ձևերը կիրառվում են տարբեր իրավահամակարգեր ունեցող բազմաթիվ երկրներում՝ առանց միջնորդների պարտավորությունների և իրավախախտների պատասխանատվության գիտակցման: Հետևաբար՝ դժվար է գնահատել թե՛ երևույթը, թե՛ դրա ազդեցությունը, իսկ իրավախախտները շահում են ակնհայտ անպատժելիությունից, մինչդեռ տուժողներն անօգնական են և աջակցության բացակայություն են զգում վիկտիմիզացիայի յուրաքանչյուր փուլում: Առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը լուրջ ազդեցություն է թողնում կանանց կյանքի, նրանց և նրանց խնամքի տակ գտնվողների ֆիզիկական և հոգեբանական առողջության, ապրուստի, հեղինակության, քաղաքական մասնակցության և առցանց ներկայության վրա:

Ի հեճուկս այդ ազդեցությունը փաստող գրականության աճող զանգվածի, իրավախախտումների ճնշող մեծամասնությունը մնում է անպատիժ: Այս ուսումնասիրության նպատակն է գնահատել, թե որքանով են Եվրոպայի խորհրդի երկու իրավական փաստաթղթերը՝ Ստամբուլի կոնվենցիան և Բուդապեշտի կոնվենցիան, օգնում կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեմ պայքարում՝ քաղաքականության, կանխարգելման, պաշտպանության, քրեական հետապնդման և միջազգային համագործակցության հարցերում:

Ստամբուլի կոնվենցիան Եվրոպայում առաջին իրավաբանորեն պարտավորեցնող գործիքն է, որը սահմանում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հաղթահարման համապարփակ շրջանակ և հանդիսանում է կանանց նկատմամբ բռնության դեմ ուղղված առավել համապարփակ փաստաթուղթ: Այն մարդու իրավունքների ուղենշային փաստաթուղթ է, որն ընդգրկում է կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը: Կոնվենցիան ճանաչում է, որ կանանց նկատմամբ բռնությունն, ըստ էության, գենդերային բռնություն է և վերահաստատում է, որ կանայք և աղջիկները ենթարկվում են գենդերային բռնության ավելի բարձր ռիսկի, քան տղամարդիկ: Այդ իսկ պատճառով, Կոնվենցիան կիրառվում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր ձևերի նկատմամբ և նպատակ ունի պաշտպանել կանանց, կանխել, հետապնդել և վերացնել կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը:

Կոնվենցիայի Մասնակից պետություններից պահանջվում է ներառել կոնվենցիայի դրույթներն իրենց ներպետական օրենսդրության մեջ՝ կանխելով կանանց նկատմամբ բռնությունը, պաշտպանելով կանանց բռնությունից և արդյունավետորեն հետապնդելով իրավախախտներին: GREVIO-ն՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի փորձագետների խումբը, անկախ փորձագիտական մարմին է, որը պատասխանատու է Ստամբուլի կոնվենցիայի կատարման հսկողության համար, Կողմերի կոմիտեի հետ համագործակցությամբ ապահովում է կոնվենցիայի արդյունավետ կիրարկումը՝ գնահատման զեկույցների և Մասնակից պետություններին ուղղված  հանձնարարականների միջոցով:

Եվրոպայի խորհրդի կիբերհանցագործությունների մասին կոնվենցիան (Բուդապեշտի կոնվենցիա, Եվրոպայի խորհուրդ, 2001ա) իրավաբանորեն պարտավորեցնող պայմանագիր է, որը կարգավորում է կիբերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների հետ կապված խնդիրները: Այն պահանջում է Մասնակից պետություններից քրեական պատասխանատվության ենթարկել համակարգչային տվյալների և թվայնացված համակարգերի միջոցով կամ դրանց դեմ կատարած հանցագործությունները, ներառյալ երեխաների նկատմամբ սեռական բռնության վերաբերյալ նյութերի (ԵՍԲՆ)1 արտադրությունը, տարածումը կամ տնօրինումը, ինչպես նաև հեղինակային և այլ հարակից իրավունքների հետ կապված իրավախախտումները: Կոնվենցիայի կողմերից նաև պահանջվում է սահմանել լիազորություններ և ընթացակարգեր՝ ապահովելու հատուկ քրեական հետաքննության նպատակներով էլեկտրոնային ապացույցներ, ոչ միայն վերը նշված հանցագործությունների, այլ նաև ցանկացած հանցագործության համար, որի ապացույցները էլեկտրոնային են, և արդյունավետորեն նպաստել միջազգային համագործակցությանը և քրեական հետաքննության կամ նման հանցագործությունների վարույթի հետ կապված փոխադարձ իրավական օգնությանը: Բուդապեշտի կոնվենցիան լրացվում է թվային համակարգերի միջոցով այլատյացության և ռասիզմի վերաբերյալ լրացուցիչ արձանագրությամբ (Եվրոպայի խորհուրդ, 2003 թ.): Կիբերհանցագործությունների դեմ կոնվենցիայի կոմիտեն (T-CY) ապահովում է կոնվենցիայի և դրա լրացուցիչ արձանագրության արդյունավետ իրականացումը:

Ստամբուլի և Բուդապեշտի կոնվենցիաները փոխլրացնող են և կարող են նպաստել Մասնակից պետություններում կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեմ պայքարին: Այս ուսումնասիրության նպատակն է վերլուծել և գնահատել այն պաշտպանությունը, որն առաջարկում են վերոնշյալ երկու գործիքները տուժողներին, ինչպես նաև որոշել դրանց շրջանակը և սիներգիայի հնարավորությունները՝ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տարբեր դրսևորումների պարագայում2:

Ուսումնասիրության առաջին բաժնում սահմանվում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության երևույթը, ուսումնասիրվում են դրա տարբեր ձևերը, տուժողների վիկտիմիզացիայի բնութագրիչները և ներկայացվում այն բազմաթիվ դժվարությունները, որոնց հետ բախվում են տուժողները վերականգնման ընթացքում: Ուսումնասիրության երկրորդ մասում ներկայացվում է Ստամբուլի կոնվենցիան, դրա շրջանակն ու գործողությունը: Երրորդ մասում ներկայացվում է Կիբերհանցագործությունների մասին Բուդապեշտի կոնվենցիան, դրա չափանիշները և մոնիթորինգային հանձնաժողովի գործունեությունը: Չորրորդ մասում ներկայացվում է միջազգային և տարածաշրջանային նորմատիվային գործիքների ընդհանուր համայնապատկերը, որոնք մասնակիորեն անդրադառնում են բռնության որոշ ձևերին: Հինգերորդ մասը վերաբերում է Ստամբուլի կոնվենցիայի 33-րդ, 34-րդ և 40-րդ հոդվածներում կանանց նկատմամբ առցանց և

1. Փաստաթղթի վերջում ներկայացված է տերմինաբանական բառարանը:

2. Տե՛ս Եւրոպայի խորհուրդ 2018c, կիբերբռնությունների վերաբերյալ T-CY քարտեզագրման ուսումնասիրությունը դիտարկում է Բուդապեշտի կոնվենցիային և այլ պայմանագրերին, մասնավորապես Ստամբուլի կոնվենցիային համապատասխան միջազգային արձագանքները:

տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տարբեր ձևերի դասակարգմանը և սահմանումներին, անհրաժեշտության դեպքում դրանք լրացնելով Բուդապեշտի կոնվենցիայի դրույթներով: Ուսումնասիրության վեցերորդ մասում վերլուծվում է, Ստամբուլի կոնվենցիայի ինտեգրված քաղաքականության, կանխարգելման, պաշտպանության և քրեական հետապնդման իրավական չափորոշիչների կարևորությունը կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեմ պայքարի գործում: Զուգահեռաբար վերլուծվում են Բուդապեշտի կոնվենցիայի համապատասխան դրույթները: Ուսումնասիրության երկու հավելվածներն անդրադառնում են բռնության որոշ ձևերին: Վերջում ներկայացված է տերմինաբանական բառարանը:

Ինչ վերաբերում է երեխաների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությանը, և տեխնոլոգիապես օժանդակվող մարդկանց թրաֆիքինգին՝ սեռական շահագործման նպատակով, այս ուսումնասիրությունը որդեգրել է նույն մոտեցումը, ինչ Ստամբուլի կոնվենցիան.

> Նախագծողները որոշեցին, որ կոնվենցիան չպետք է անդրադառնա այն վարքի տեսակներին, որոնք արդեն իսկ արտացոլված են Եվրոպայի խորհրդի մյուս կոնվենցիաներում, մասնավորապես՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ կոնվենցիայում (CETS No. 197) և Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին կոնվենցիայում (CETS No. 201):

Հետևաբար, այս ուսումնասիրությունը չի անդրադառնում բռնության այն տեսակներին, որոնք պահանջում են առանձին կենտրոնացված մոտեցում: Միևնույն ժամանակ անհրաժեշտ են լրացուցիչ հետազոտություններ կանանց նկատմամբ բռնության ինտերսեկցիոնալ բնույթի, երեխաների առցանց շահագործման և չարաշահումների, ինչպես նաև սեռական շահագործման նպատակով մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ. այս երեք երևույթները սաստկանում են նոր տեխնոլոգիաների օժանդակմամբ և  հիմնականում վերաբերում են կանանց և աղջիկների նկատմամբ բռնության և հայրապետական կառուցակարգերի նույն կոնտինուումին (Եվրոպական կանանց լոբբի, 2017թ.): Եվրոպայի խորհրդի մակարդակով այս թեմաների վերաբերյալ լրացուցիչ ռեսուրսներ են Լանզարոտեի կոմիտեի նախագահի վերջին հայտարարությունը «Երեխաների պաշտպանությունը սեռական շահագործումից և չարաշահումից COVID-19 համավարակի ժամանակ» (Եվրոպայի խորհուրդ, 2020d), «Երեխաների առցանց սեռական շահագործման և բռնության հաղթահարում @ Եվրոպա» ծրագիրը, որն իրականացվում է Եվրոպայի խորհրդի Երեխաների իրավունքների բաժնի կողմից՝ Եվրոպայի խորհրդի կիբերհանցագործությունների դեմ ծրագրի գրասենյակի հետ համագործակցությամբ և Մարդկանց թվային թրաֆիքինգի վերաբերյալ ռեսուրսները, այդ թվում՝ «Մարդկանց թրաֆիքինգ. համացանցային հավաքագրում» վերտառությամբ ուսումնասիրությունը (Եվրոպայի խորհուրդ, 2007), ինչպես նաև առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ առաջիկա ուսումնասիրությունը:

Ի հավելումն, պետք է նշել, որ այս ուսումնասիրությունը որդեգրում է զոհակենտրոն մոտեցում, և չնայած այստեղ դիտարկվում են այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են տվյալների պաշտպանությունը, գաղտնիությունը, վերահսկողությունը, ինչպես նաև գովազդակենտրոն բիզնես մոդելը և համացանցային կորպորացիաների պատասխանատվությունը, այդ փոխկապակցված թեմաներն այս աշխատության առանցքը չեն:

Ուսումնասիրության հիմնական նպատակն է ցույց տալ, թե ինչպես կարող են կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունից տուժողներն օգտվել գոյություն ունեցող իրավական պաշտպանությունից, որը երկու կոնվենցիաների Մասնակից պետությունները պարտավոր են երաշխավորել իրենց իրավասության ներքո գտնվող անձանց համար:



# ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌՑԱՆՑ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ

## Երևույթը՝ ի՞նչ, ինչպե՞ս և որտե՞ղ

Երևույթի սահմանումը կարևոր է ավելի լավ հասկանալու համար, թե ինչպես կարելի է կանխել կանանց և աղջիկների նկատմամբ բռնության յուրաքանչյուր ձևը, ինչպես ավելի լավ պաշտպանել տուժողներին և ինչպես քրեական պատասխանատվության ենթարկել բռնության այդ ձևերի համար: Առաջին բաժնում մենք կուսումնասիրենք, թե ինչպես և ինչու է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը ներառում բռնության մի շարք շատ հատուկ ձևեր, որոնք զգալի ազդեցություն ունեն տուժողների վրա:

Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը իրական կյանքում բռնության տարբեր ձևերի հետ միասին գոյություն ունեցող կոնտինուում է: Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ձևերի մեծ մասն արդեն իսկ իրական կյանքում գոյություն ունեցող հանցագործություններ և իրավախախտումներ են, որոնք ընդլայնվում, սաստկանում կամ ընդհանրացվում են համացանցի և թվային տեխնոլոգիաների օժանդակությամբ, ինչպես օրինակ ընտանեկան բռնության դեպքում.

> Տրոլինգը, բանավոր վիրավորանքը, սեռավարությունը, առանց անձի համաձայնության սեռական բնույթի պատկերների տարածումը, լուսանկարների շահարկումները, կիբերհետամտումը, դոքսինգը, հաքինգը, մտավոր սեփականության վնասումը և DDOS հարձակումները կարող են տեղի ունենալ ինչպես բացառապես առցանց, այնպես էլ իրական կյանքի իրադարձությունների հետ կապակցված, ընդ որում դրանք գրեթե միշտ ունենում են հետևանքներ՝ թե՛ առցանց, թե՛ իրական կյանքում (Ging and Siapera, 2018):

Բռնության տեսակներից մի մասը բնորոշ են նաև թվային հարթակներին և գործիքներին, հատկապես դրանց ազդեցությամբ, մշտականությամբ և ներգրավված իրավախախտների թվի պատ-

ճառով, և «կապված են մոդերացման նոր տեխնոլոգիական հնարավորությունների, որոշակի հարթակների ալգորիթմական կանոնների, այս տեխնոլոգիաները արտադրող ընկերությունների և դրանցից օգտվող անհատների և համայնքների մշակույթի հետ» (տե՛ս նույն տեղը):

Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը տեղի է ունենում տարբեր հարթակներում. հիմնականում սոցիալական մեդիայի և դրա բազմաթիվ հնարավորությունների և տարածքների ներքո, ինչպես նաև վեբ կայքերում և ֆորումներում, որոնման համակարգերում, հաղորդագրությունների հավելվածներում, բլոգներում, ծանոթությունների կայքերում և հավելվածներում, մեդիա մեկնաբանությունների բաժիններում, առցանց տեսախաղերի զրուցարաններում, սթրիմինգի հարթակներում, տեսախաղերի հավելվածներում, վիրտուալ և ընդլայնված իրականության գործիքակազմերում, զրուցարանների հավելվածներում, տեսակոնֆերանսների գործիքներում, մասնագիտական հավելվածներում, կայքերում և այլուր:

> Տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը ներխուժող բնույթ ունի և տարածված է ամենուրեք, այն չի սահմանափակվում որևէ մեկ բնագավառով... Ցանկացած ոլորտում՝ հանրային թե մասնավոր, եթե այն գոյություն ունի, կարող է էլ ավելի լղոզվել և թուլանալ տեխնոլոգիայի պատճառով: Այս (նաև մասնագիտական/անձնական) տիրույթների միջև «համատեքստի խաթարումը» ... նշանակում է, որ բռնության տեսակի և տիրույթի տարբերակումը շատ բարդ է, եթե ոչ անհնար (Harris, 2020b):

## Կանանց նկատմամբ տեխնոլոգիապես օժանդակվող բռնություն

Կանանց նկատմամբ տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ձևերը մասնավորապես ընդգրկում են .

1. Առցանց սեռական հետապնդումը (ներառյալ կիբերֆլեշինգը կամ առանց անձի համաձայնության նրա սեռական պատկերների տարածումը, սեռական բնույթի մեկնաբանությունները, սեռական զրպարտությունը, սեռական նպատակներով անձի նմանակումը և դոքսինգը, ինչպես նաև սեռական և գենդերային հիմքով տրոլինգը, ֆլեյմինգը, ամբոխի հարձակումները, ափսքիրթինգը (կիսաշրջազգեստի կամ զգեստի տակից սեռական կամ անձնական բնույթի տեսանկարումը և համացանցում տարածումը), պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը (առանց անձի համաձայնության պատկերի կամ տեսանյութի տարածումը, կամ սեռական բնույթի լուսա- և տեսանկարումը կամ «վրեժխնդրության պոռնոգրաֆիան»), դիփֆեյքերը, տեսագրված սեռական բռնությունը և բռնաբարությունը, ներառյալ «ուրախ ապտակները» (ուղիղ հեռարձակմամբ կամ պոռնոգրաֆիկ կայքերում տեղադրված), սպառնալիքները և հարկադրանքը, այդ թվում՝ հարկադիր սեքսթինգը, սեռավարությունը, բռնաբարության սպառնալիքները և բռնաբարության դրդելը:
2. Սոցիալական մեդիայում առցանց հետամտման, հետևելու կամ լրտեսման ձևերը կամ հաղորդագրությունների փոխանակումը, գաղտնաբառերի գողությունը, կոտրող կամ հաքինգի սարքերի, լրտեսող ծրագրերի տեղադրումը, հետամտման նպատակով մեկ այլ անձ ձևանալու միջոցները, GPS-ի կամ աշխարհագրական տեղորոշման միջոցով հետևումը, ահաբեկումը, սպառնալիքները, խելացի կողպեքների կամ խելացի կենցաղային սարքերի միջոցով վերահսկումը:
3. Հոգեբանական բռնության ձևերը, ինչպիսիք են առցանց սեքսիստական ատելության խոսքը և ինքնավնասման կամ ինքնասպանության դրդումը, բանավոր հարձակումները, վիրավորանքները, մահվան սպառնալիքները, ճնշումները, շանտաժը, դեդնեյմինգը (անձի կամքին հակառակ իր նախկին անվան բացահայտումը՝ վնասելու նպատակով):

Աղջիկների նկատմամբ առցանց բռնության վերաբերյալ Plan International-ի վերջին զեկույցում նշվում է, որ «Հարձակման ամենատարածված ձևը վիրավորական և նսեմացնող խոսքն է, որի մասին հաղորդում են հետապնդումների ենթարկված աղջիկների 59%-ը, որին հաջորդում է նպատակային ամաչեցնելը (41%), մարմնի խայտառակումը և սեռական բռնության սպառնալիքները (երկուսն էլ՝ 39%) (Plan International, 2020):

## Վիկտիմիզացիայի հատկանիշներ

Աղջիկները խոցելի խումբ են և ենթարկվում են անչափահասների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող գենդերային հատկանիշներով բռնության հատուկ ձևերի: Կարևոր է նշել, որ ինտերսեկցիոնալ հատկանիշներով կանայք, ինչպիսիք են լեսբի, բի, քուիր և տրանս կանայք, տարբեր ռասաների ներկայացուցիչ կանայք, միգրանտ կանայք, հաշմանդամություն կամ քրոնիկական հիվանդություններ ունեցող կանայք, հատուկ համատեքստում գտնվող կանայք՝ ընտանեկան բռնության իրավիճակում կամ աղքատության մեջ ապրող կանայք, ինչպես նաև հանրահայտ կանայք՝ քաղաքական գործիչները, լրագրողները, կին իրավապաշտպանները կամ ակտիվիստները, ավելի շատ են ենթարկվում բռնության այդ տեսակներին: Եվրոպայի խորհրդի 2017թ. ուսումնասիրության համաձայն եվրոպացի լրագրողների 53%-ը ենթարկվել են կիբերհարձակման (Եվրոպայի խորհուրդ, 2017a), ԵՄ-ում կին պատգամավորների առնվազն 58,2%-ը սոցիալական ցանցերում առցանց սեքսիստական հարձակումների թիրախ են դարձել (IPU, 2018): Նախորդ պարբերությունում նշված Plan International-ի զեկույցում մասնավորապես ասվում է.

> Աղջիկների ավելի քան մեկ երրորդը (37%), ովքեր ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ են և ենթարկվել են բռնության, ասում են, որ թիրախավորվում են ռասայական կամ էթնիկ պատկանելության պատճառով, մինչդեռ իրենց ԼԳԲՏՔԻ համարողների կեսից ավելին (56%), ասում են, որ հետապնդվել են գենդերային ինքնության կամ սեռական կողմնորոշման պատճառով:

Նման տեսակի առցանց վիկտիմիզացիայի և տեխնոլոգիապես օժանդակվող գենդերային բռնության առանձնահատկությունները պայմանավորված են մի շարք հատկանիշներով:

1. Առաջին հատկանիշը տուժողի և իրավախախտի փոխհարաբերություններն են կամ դրանց բացակայությունը և այդ փոխհարաբերությունների տեսակը: Օրինակ՝ 2011 թվականի Մեծ Բրիտանիայում անցկացված հարցումը ցույց է տվել, որ հարցվածների կեսից ավելին (54%) առաջին անգամ հանդիպել է իրենց (առցանց) բռնարարին իրական կյանքում (Maple, Shart and Brown, 2011): Covid-19 համավարակի սկզբից ի վեր կանայք ավելի հաճախ են բռնության ենթարկվում օտարների կողմից, քանի որ ավելի շատ են շփվում առցանց: Այսպես, համավարակի շրջանում Բրիտանական ԳԼԻՏՉ ընկերության և «Վերջ տալ կանանց նկատմամբ բռնությանը» ՀԿ-ի կողմից անցկացված հարցման համաձայն «հարցվածների 84%-ը ենթարկվել են առցանց բռնության անծանոթների կողմից, որոնց նրանք չեն ճանաչել մինչ միջադեպը, հարցվածների 16%-ը բռնության են ենթարկվել ծանոթ անձի կողմից, իսկ 10%-ը՝ զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից... 9%-ը ենթարկվել են բռնության գործընկերոջ կամ վերադասի կողմից աշխատանքի վայրում» (Glitch և Վերջ տալ կանանց նկատմամբ բռնությանը, 2020):
2. Երկրորդ հատկանիշը բռնություն կատարելու համար օգտագործվող հարթակների և գործիքների քանակն է: Բռնության ձևերի մեծ մասը տեղի է ունենում տարբեր հարթակներում՝ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր, ընդ որում միաժամանակ բոլոր այդ հարթակներում կամ միաժամանակ տարբեր գործիքների կիրառմամբ: Տուժողը կարող է բռնության ենթարկվել իր կողմից օգտագործվող միաժամանակ բոլոր սոցիալական մեդիայի և հաղորդագրությունների

փոխանակման հարթակներում, ինչպես նաև տուժողի էլեկտրոնային փոստի միջոցով, անցանց, հեռախոսով կամ իրական հարձակվողների կողմից՝ տանը, աշխատավայրում և այլն: Օրինակ, Ֆրանսիայում վերջերս ընդունված Սեռական և սեքսիստական բռնության դեմ օրենքը հաշվի է առնում այն փաստը, որ «ամբոխի հարձակումները» (ռեյդերը) բնորոշ վարքագիծ է և մատնանշում է հետապնդումների կրկնվող բնույթը, բազմաթիվ վայրերը և այն փաստը, որ նույն տուժողին միաժամանակ կարող են հետապնդել մի քանի իրավախախտ (Legifrance, 2018):

3. Բռնության այս տեսակի երրորդ հատկանիշը բռնություն գործադրողների թիվն է ու բնութագրիչները: Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության որոշ տեսակներ իրականացվում են միաժամանակ մի քանի իրավախախտների կողմից, այդ թվում՝ ամբոխի հարձակումները, առցանց բուլինգը (երեխաների դեպքում) կամ սեռական հետապնդումը մի ամբողջ խմբի կամ համայնքի կողմից[3]: Առանց անձի համաձայնության նրա պատկերների տարածմանը նպաստում են տասնյակ, հարյուրավոր կամ, երբեմն, հազարավոր մարդիկ: «Ամբոխի մտածելակերպ» կոչվող վարքագիծը սոցիալական մեդիայի առանձնահատկությունն է, քանի որ իրավախախտները թաքնված են անանուն պրոֆիլների տակ, ունեն անպատժելիության և իրենց համայնքի կողմից աջակցության զգացում, կամ, եթե նրանք հրապարակումներ են անում իրենց իրական անունով, կապը տուժողի և իրական հարձակվողի միջև անապացուցելի է: Ալգորիթմների կառուցվածքը նպաստում է ամբոխի ձևավորմանը, քանի որ այդ ալգորիթմների համար մեծ քանակով մարդկանց ներգրավումն է առաջնահերթ: Չնայած վիրավորական լեզուն և տեսողական բովանդակությունը բացահայտելու ջանքերին, ալգորիթմը տեսանելի է դարձնում ծայրահեղ, նույնիսկ բռնի բովանդակությունը՝ առաջացնելով բևեռացում: Բացի այդ, «նման բովանդակության տարածմանը կարող են նպաստել բռնությունը փոխկապակցող հատկանիշները, օրինակ՝ հեշթեգները, որոնք կնատյացության տարբեր դեպքերը կարող են վերածել քարոզարշավի» (Harris and Megarry, 2014): Due Diligence Project-ի տնօրեն Զարիզանա Աբդուլ Ազիզը տարբերակում է առաջնային և երկրորդային իրավախախտներին: Առաջնային իրավախախտը վերբեռնում է վիրավորական բովանդակությունը, իսկ երկրորդային(ներ)ը՝ տարածում բովանդակությունը (Abdul Aziz, 2017):

4. Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության չորրորդ հատկանիշը բռնության առցանց տարածվածությունն է: Որքա՜ն է տևել դաժան վերաբերմունքը, որքա՜ն հաճախ է այն տեղի ունեցել, որքանո՞վ են մնայուն վնասակար տվյալները: Պատկերների վրա հիմնված դաժան վերաբերմունքի դեպքերի մեծ մասն ունեն տուժողին անվերջ վիկտիմիզացիայի ենթարկելու ներուժ, քանի որ տարածվում են հազարավոր օգտատերերի կողմից առցանց տիրույթում: Առցանց բռնության շատ ձևերին բնորոշ է կրկնողությունը և վնասակար բովանդակության հարատևությունը:

5. Երևույթի տարածվածության և մշտականության պատճառով, առցանց բռնությունն էական ազդեցություն է ունենում տուժողի կյանքի վրա: Բռնության ուժգնության պատճառով տուժողները կարող են ողջ կյանքի ընթացքում բազմակի հոգեբանական տրավմաների ենթարկվել: Բռնության այդ ձևերն ազդում են նրանց ընտանիքների, երեխաների, աշխատանքի, հարաբերությունների, մտավոր և ֆիզիկական առողջության և, ի վերջո, կյանքի տևողության վրա: Այդ երևույթի վերաբերյալ ԵՄ վերջին ուսումնասիրությունը գնահատում է կանանց նկատմամբ կիբերհետապնդումների և կիբերհետամտումների ընդհանուր վնասը տարեկան 49-89,3 միլիարդ եվրոյի սահմաններում՝ առողջապահական ծախսերի, իրավաբանական ծախսերի, աշխատաշուկայի և կյանքի որակի նվազման հետ կապված ծախսերի տեսքով (Եվրոպական խորհրդարանի հետազոտական ծառայություն, 2021թ.):

---

3. Տես, օրինակ, GamerGate-ը, կին տեսախաղերի դիզայների դեմ ուղղված հետապնդումների առցանց արշավ, որը ներառում էր առանց անձի համաձայնության անձնական տվյալների (դոքսինգ) և նկարների տարածումը, բռնաբարության և սպանության սպառնալիքները:

## Տուժողների առջև ծառացած մարտահրավերներ

Բռնությունից պաշտպանություն փնտրելիս տուժողները բախվում են տարբեր մակարդակի դժվարությունների՝

1. Բռնության ձևի բացահայտումը հաճախ դժվար է, քանի որ առցանց բռնության ձևերի մեծ մասը չունեն հստակ իրավական սահմանում և դրանցից շատերի միջև վերածածկ կա: Սոցիալական մեդիա հարթակների մեծամասնությունը օգտատերերին հասանելի շատ քիչ սահմանումներ է պարունակում, հազվադեպ են նշվում օրենքները, իսկ առցանց բռնության մասին հաղորդելու վերաբերյալ տեղեկատվությունը սակավ է և թերի: Բացի այդ, հաղորդման համար նախատեսված էջերում շատ հաճախ բացակայում է բռնության տեսակների վերաբերյալ ինտերսեկցիոնալ մոտեցումը:

2. Բռնության փաստագրումը կարևոր քայլ է, սակայն տուժողների մեծ մասը չգիտի, որ իրենք հնարավորություն և շատ դեպքերում պատասխանատվություն ունեն արձանագրելու վիրավորական բովանդակությանը (եթե այն հասանելի է)՝ մեղադրանք առաջադրելու նպատակով: Իրոք, տեղեկությունները կարող են անհետանալ, ջնջվել իրավախախտների կողմից կամ անհայտ մնալ տուժողի համար: Բացի այդ, իրավախախտների դեմ ապացույցները կարող են պահվել ամպում, այլ երկրներում կամ մասնավոր անցանց սարքերում: Բռնության վերաբերյալ հնարավորինս շատ ապացույցներ պահելը կարող է հեշտացնել դրա բացահայտումը:

3. Բողոք ներկայացնելը գենդերային բռնության տուժողների համար, որպես կանոն, բարդ խնդիր է: Այն, որ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեպքերի մասին հաղորդող տուժողին կլսեն և կհավատան իրավապահ մարմինների վերապատրաստված աշխատակիցները շատ երկրներում սուր խնդիր է: Նույնիսկ, երբ դա հնարավոր է երկրի որոշ մասերում, ավելի հեռավոր վայրերում դա կարող է խնդիր հանդիսանալ: Իրավապահ մարմինների աշխատակիցների մեծ մասը պատրաստված չէ տարբերակելու կանանց և աղջիկների նկատմամբ առցանց բռնության տեսակները, և նրանցից շատերը չգիտեն, թե ինչպես վարվել նման դեպքերում: Վերապատրաստման բացակայությունը ազդում է կանանց՝ արդյունավետ բողոքներ ներկայացնելու ունակության վրա: Բացի այդ, բողոքների քննարկման ժամանակ տուժողներին մեղադրելը համատարած երևույթ է: «Թաղային ոստիկանն ի վիճակի չէ երեկոյան ժամը 23:00-ին բողոք ընդունել պատկերի վրա հիմնված սեռական բռնության մասին», նշում է փաստաբաններից մեկը[4]: Բացի այդ, ոչ բոլոր ոստիկանական ստորաբաժանումներն են իրավասու հետաքննել նման դեպքերը, և տուժողները կարող են պարզապես չիմանալ, թե ում կարելի է բողոք ներկայացնել (Եվրոպայի խորհուրդ, 2018c):

4. Նման դեպքերի հետ կապված քննչական աշխատանքը աննախադեպ է: «Այնքան շատ զեկույցներ կան, այնքան շատ հաղորդագրություններ, մարդկանց նույնականացումը ժամանակատար է, ծառայություններ մատուցողներից տեղեկատվություն պահանջելը մեծ ռեսուրսներ է խլում: Երբ ներգրավված է միայն մեկ իրավախախտ, դա նորմալ է, բայց պատկերացրեք, երբ նրանց թիվը կազմում է 500 կամ նույնիսկ 3000: Ստիպված ենք ծառայություններ մատուցողներից տեղեկատվություն պահանջել նրանցից յուրաքանչյուրի մասին: Եթե չկա հանձնառու և շահագրգիռ քննիչ, ոչ ոք այդ գործը չի անի, ընդ որում այս կարգի գործերը նախաքննություն են պահանջում»[5]: Ավելին, երբ դեպքի ապացույցներն հիմնականում պահվում են օտար, բազմաթիվ, փոփոխվող կամ անհայտ իրավասության շրջանակներում գտնվող սերվերներում, օրինակ՝ ամպում, իրավապահների լիազորությունները սահմանափակվում են տարածքային

4. Հարցազրույց իրավաբան Մայիտրե Ֆրետիի հետ, սեպտեմբեր 2020, թարգմանված հեղինակի կողմից, www.frety-avocats.fr/:

5. Տե՛ս նույն տեղը:

սահմաններով: Ուստի, միջազգային համագործակցությունը գերակա նշանակություն ունի:

5. Մինչ օրս մի քանի օրենքներ են համակողմանիորեն անդրադառնում կանանց առցանց բռնության ողջ համայնապատկերին, իսկ պատժամիջոցները, երբ դրանք կիրառվում են, հաճախ չեն արտացոլում առցանց կամ տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ազդեցությունը տուժողի կյանքի վրա կամ դրա գենդերային բաղադրիչը: Բուդապեշտի կոնվենցիայի քարտուղարությունը եկել է այն ցնցող եզրակացությանը, որ կիբերհանցագործությունների միայն 1%-ն է հաղորդվում իրավապահ մարմիններին, ընդ որում հաղորդվածի 1%-ից պակասն է հասնում քրեական մեղադրանքի: Ուստի, իրականում պատժվում է կիբերհանցագործությունների չնչին մասը[6]:

6. Մեդիայում և ընդհանրապես հասարակության մեջ տուժողների մեղադրման և բռնության հանդուրժման ընդհանուր մշակույթն անդրադառնում է կանանց նկատմամբ գենդերային բռնության բոլոր ձևերի ընկալման և քրեականացման վրա, այդ թվում՝ առցանց և տեխնոլոգիաներով օժանդակվող բռնության: «Առանց աջակցության ծրագրերի և տուժողին մեղադրելու վտանգների մասին կրթության, վրեժխնդրության պոռնոգրաֆիայի տուժողները պաշտպանություն հայցելիս կարող են մեծ հուզական սթրես տանել: Վրեժխնդրության պոռնոգրաֆիայի որոշ տուժողներ հայտնում են, որ նույնիսկ, երբ դիմում են ոստիկանություն, ոստիկանության աշխատակիցներն իրենց են մեղադրում և մերժում են օգնությունը, քանի որ միջադեպն ընկալվում է որպես տուժողի մեղքով տեղի ունեցած (Citron and Franks, 2014; Wolak և Finkelhor, 2016): Սա նման է բռնաբարության զոհերի դեպքերին. նրանց երբեմն մեղադրում են իրենց նկատմամբ կիրառված բռնության համար, թեև ոստիկանության ծառայությունում իրականացվում է մասնագիտական վերապատրաստում (Sleath and Bull, 2012): Ուստի կարևոր է պատշաճ ձևով հաշվի առնել տուժողին մեղադրելու ոստիկանության վարքագիծը վրեժխնդրության պոռնոգրաֆիայի հաճախակի դարձող դեպքերում» (Tegan, Starr և Lavis, 2018թ.):

6. Հարցազրույց Կիբերհանցագործությունների դեմ պայքարի բաժնի ղեկավար և Կիբերհանցագործությունների դեմ Կոնվենցիայի կոմիտեի գործադիր քարտուղար Ալեքսանդր Սեգերի հետ, սեպտեմբեր 2020թ.:



# ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ԵՎ ԱՌՑԱՆՑ ՈՒ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ

Ստամբուլի կոնվենցիան և դրա բացատրական զեկույցն ընդունվել են Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2011 թվականի ապրիլի 7-ին: Այն բացվել է ստորագրման համար 2011 թվականի մայիսի 11-ին՝ Ստամբուլում Նախարարների կոմիտեի 121-րդ նստաշրջանի կապակցությամբ և ուժի մեջ է մտել 2014 թվականի օգոստոսի 1-ին: 2021 թվականի հոկտեմբերի դրությամբ կոնվենցիայի մասնակից են երեսունչորս պետություններ: Կոնվենցիան բաց է ցանկացած երկրի համար, որը պատրաստ է ընդունել դրա դրույթները:

Որպես կանանց իրավունքների ուղենշային պայմանագիր՝ Ստամբուլի կոնվենցիան կառավարություններին առաջարկում է միջոցառումների առավել համապարփակ փաթեթ՝ կանխելու և պայքարելու կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր ձևերի դեմ: Այն նման բռնությունը համարում է մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականության ձև և դրա վերացումը ամուր կապում է կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման հետ: Կոնվենցիան իր նախաբանում վկայակոչում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, Եվրոպական սոցիալական խարտիան և Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, ինչպես նաև Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան: Ստամբուլի կոնվենցիան նաև հիշեցնում է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (ԿԽՎՄԿ) և դրա հետագա ընդհանուր առաջարկությունները, Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան:

Տեքստը վերահաստատում է կանանց նկատմամբ բռնության կառուցվածքային և գենդերային

բնույթը և ներկայացնում է համապարփակ շրջանակ՝ վերջ դնելու կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը: Կոնվենցիան կառուցված է 4 հենասյուների շուրջ՝ կանխարգելում, տուժողների պաշտպանություն և աջակցություն, իրավախախտների քրեական հետապնդում և փոխհամաձայնեցված քաղաքականություն (Եվրոպայի խորհուրդ, 2020c):

## Ստամբուլի կոնվենցիայի շրջանակը

Ինչ վերաբերում է Ստամբուլի կոնվենցիայի շրջանակին (Հոդված 2) (Եվրոպայի խորհուրդ, 2011a), այն «գործում է կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի, ներառյալ ընտանեկան բռնության պարագայում» և «կիրառվում է խաղաղության և զինված հակամարտությունների իրավիճակներում», կարգավորելով յուրաքանչյուր իրավիճակ, երբ կանայք ենթարկվում են բռնության:

Կոնվենցիան ներկայացնում է մի շարք սահմանումներ և հասկացություններ՝ կանանց նկատմամբ բռնությունը սահմանելով որպես «մարդու իրավունքների խախտում և կանանց նկատմամբ խտրականություն» և գենդերային բռնության ձև, որը հանգեցնում է «ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական վնասի կամ կանանց համար տառապանքի» (Հոդված 3ա), թիրախավորելով կանանց՝ ելնելով նրանց սեռից և գենդերային պատկանելիությունից «սոցիալապես կառուցված դերերի, վարքագծի, գործունեության և հատկանիշների պատճառով» (Հոդված 3գ):

Բացի այդ, 3ա հոդվածում նշվում է, որ «սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայական զրկելը՝ հանրային կամ անձնական կյանքում», համարվում են կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնություն: «Կանայք» կատեգորիայի մեջ են մտնում նաև մինչև 18 տարեկան աղջիկները  (Հոդված 3զ):

4-րդ հոդվածում Կոնվենցիան Մասնակից պետություններին հորդորում է «ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցներ՝ խթանելու և պաշտպանելու յուրաքանչյուրի, հատկապես կանանց իրավունքը՝ բռնությունից զերծ ապրելու ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր ոլորտում»: 5-րդ հոդվածում կոնվենցիան ներառում է Մասնակից պետություններից պահանջվող պատշաճ ջանասիրության չափանիշը. «Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ ջանասիրություն  պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարված այն արարքները կանխելու, քննելու, պատժելու և հատուցելու ուղղությամբ, որոնք մտնում են սույն Կոնվենցիայի գործողության շրջանակների մեջ», հանձնարարելով կոնվենցիայի Մասնակից պետություններին մշակել ինտեգրված քաղաքականություն՝ կանխելու, պաշտպանելու և հետապնդելու կանանց և աղջիկների նկատմամբ բռնության բոլոր ձևերը՝ ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր կյանքում:

> Այս սկզբունքը ոչ թե արդյունք է պարտավորեցնում, այլ միջոցներ: Մասնակից պետություններից պահանջվում է կազմակերպել իրենց արձագանքը Կոնվենցիայում նշված բռնության բոլոր ձևերին, որպեսզի իրավասու մարմինները կարողանան կանխել բռնության նման դեպքերը կամ իրականացնել հետաքննություն, պատժել մեղավորներին և պաշտպանություն տրամադրել բռնության նման գործողություններից: Այս պարտավորությունը չկատարելու դեպքում պետությունը ենթարկվում է պատասխանատվության մի արարքի համար, որն այլ դեպքում վերագրելի է միայն ոչ պետական դերակատարին (Եվրոպայի խորհուրդ, 2011b):

Սահմանելով իրազեկման և կրթության միջոցով բռնության բոլոր ձևերի կանխարգելման ուղղությամբ մանրամասն պարտավորություններ, և նախատեսելով մասնագիտական վերապատրաստում և իրավախախտների հետ աշխատանք, կոնվենցիան ձգտում է կանխել այն վերաբերմունքը, որը թույլ է տալիս կամ օգնում է արմատավորել կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը:

Տուժողներին և վտանգի տակ գտնվողներին պաշտպանությունն ու աջակցությունը պետք է տրամադրվի զոհակենտրոն, հզորացնող եղանակով և մատչելի լինի բոլորին: Մեղավորներին պատժելուն միտված հետաքննությունը և քրեական հետապնդումը պետք է շարունակական բնույթ կրի: Վերոհիշյալ բոլոր քայլերը կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերին համապարփակ արձագանքի բաղադրիչներն են, ինչը բացառիկ է դարձնում այս աննախադեպ իրավական պայմանագիրը:

Թեև Ստամբուլի կոնվենցիան բացահայտ չի անդրադառնում կանանց նկատմամբ բռնության թվային հարթությանը, դրա շրջանակը, ինչպես սահմանված է 2-րդ հոդվածում, տարածվում է թվային տարածքում իրականացվող բռնության վրա, ինչպես նախատեսված էր կոնվենցիայի հեղինակների կողմից: Իրականում, Ստամբուլի կոնվենցիայի մի քանի հոդվածներ կիրառելի են թվային համատեքստում և մանրամասնորեն դիտարկվում են այս ուսումնասիրության մեջ: Օրինակ՝ 40-րդ հոդվածը կիրառելի է առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող սեռական հետապնդումների դեպքում՝ «սեռական բնույթի վերբալ, ոչ վերբալ կամ ֆիզիկական գործողությամբ դրսևորվող ցանկացած վարքագծի նկատմամբ, որը նպատակ ունի խոցելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, նվաստացնող կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելով»:

Կոնվենցիայի դրույթը հետամտման մասին (Հոդված 34) կիրառվում է նաև առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հետամտման նկատմամբ, որը սահմանվում է որպես «մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ շարունակաբար կատարվող սպառնալից գործողություններ, որոնք այդ անձի մոտ վախ են հարուցում սեփական անվտանգության համար»: 34-րդ հոդվածի շրջանակի ընդլայնումը և տարածումը թվային ոլորտի վրա հաստատվել է կոնվենցիայի բացատրական զեկույցում, որը հստակորեն սահմանում է «տուժողի հետ ցանկացած ակտիվ կապի ձգտումը կապի ցանկացած հասանելի միջոցով, ներառյալ ժամանակակից հաղորդակցման գործիքները և ՏՀՏ-ները», որպես նշված դրույթի իմաստով անցանկալի: Հաշվի առնելով այն լուրջ հոգեբանական հետևանքները, որոնք կանանց և աղջիկների վրա կարող են թողնել առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բազմաթիվ ձևերը, հոգեբանական բռնությունը քրեականացնելու Ստամբուլի կոնվենցիայի պահանջը (33-րդ հոդված) կարևոր նշանակություն ունի:

## Մոնիթորինգի մեխանիզմներ

Ստամբուլի կոնվենցիայի մոնիթորինգն ապահովում են մոնիթորինգի երկու տարբեր միմյանց հետ փոխկապակցված մարմինները:

GREVIO-ն՝ Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի փորձագետների խումբը, որն անկախ փորձագիտական մարմին է, վերահսկում է կոնվենցիայի իրականացումը: GREVIO-ն ներկայումս բաղկացած է 15 անդամներից, որոնք ունեն «բազմամասնագիտական փորձ և գիտելիքներ մարդու իրավունքների, գենդերային հավասարության, կանանց նկատմամբ բռնության ու ընտանեկան բռնության տուժողներին աջակցության և պաշտպանության ոլորտում»: GREVIO-ն իրականացնում է գնահատումներն ըստ երկրների՝ վերահսկելով Ստամբուլի կոնվենցիայի արդյունավետ կիրարկումը մասնակից պետություններում[7]: Երկրի գնահատման այս ընթացակարգերը ամփոփվում են երկրին հատուկ հարմարեցված ուղեցույցում՝ իրականացման մակարդակը բարձրացնելու համար և ներառում են ձեռնարկված միջոցների ելակետային գնահատում՝ կոնվենցիայի բոլոր պարտավորություններին իմաստ տալու համար: GREVIO-ի ելակետային գնահատման հաշվետվությունները հրապարակվում են համապատասխան մասնակից պետության մեկնաբանություններով[8]: GREVIO-ն եզակի դեր ունի

---

7. Զեկույցները հասանելի են հետևյալ կայքում՝ www.coe.int/en/web/istanbul-convention/country-monitoring-work;

8. Ստամբուլի կոնվենցիայի մոնիթորինգի մեխանիզմների մասին լրացուցիչ տեղեկություններին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումով՝ www.coe.int/en/web/istanbul-convention/about-monitoring1:

նման մանրամասն գործիքի կիրարկման մոնիթորինգում ... GREVIO-ն համարվում է եզակի հարթակ և ակնկալվում է, որ այն կգեներացնի կարևորագույն տվյալներ՝ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ազգային և միջազգային իրավական կարգավորումների խորը վերլուծության արդյունքում: Ակնկալվում է, որ այն նաև կնպաստի պետությունների միջև կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի լավագույն փորձի փոխանակմանը (Guney, 2020):

Մասնակից պետությունների կոմիտեն քաղաքական մարմին է, որը պատասխանատու է կոնվենցիայի կատարման մոնիթորինգի համար:

Կոմիտեի դերը նկարագրված է Կոնվենցիայի 67-րդ հոդվածում: Այն կազմված է կոնվենցիայի Մասնակից պետությունների ներկայացուցիչներից:

Հիմնվելով GREVIO-ի կողմից պատրաստված զեկույցների վրա՝ Կողմերի կոմիտեն ընդունում է առաջարկություններ, որոնք կարևորում են ձեռնարկվելիք միջոցները «GREVIO-ի եզրակացությունները կյանքի կոչելու համար և ... նպատակ ունեն խթանելու համագործակցությունը այդ Մասնակից պետության հետ՝ կոնվենցիայի պատշաճ իրականացման համար» (Եվրոպայի խորհուրդ, 2015a): Այն վերահսկում է այդ առաջարկությունների կատարումը երեք տարի հետո:

Իր նախնական գնահատման ընթացակարգի միջոցով GREVIO-ն կիրառում է Ստամբուլի կոնվենցիայի վերոհիշյալ հոդվածները թվային համատեքստում և վերահսկում դրանց կիրառումն առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության որոշ կողմերի վերաբերյալ, ներառյալ կիբերբուլինգը և առցանց սեռական հետապնդումը: Իր նախնական գնահատման զեկույցներում GREVIO-ն ընդգծել է մասնակից պետությունների լավ փորձը: Օրինակ, Ֆրանսիայի իրավական համակարգում նոր քրեական հանցագործությունների սահմանումը, ներառյալ կանանց և աղջիկների նկատմամբ կիբերբուլինգը, գովեստի խոսքերի է արժանացել Ֆրանսիայի վերաբերյալ գնահատման զեկույցում: Նմանապես, Սլովենիայի և Լեհաստանի քրեական օրենսգրքերի փոփոխությունները, որոնք ընդլայնեցին հետամտման հանցագործությունների շրջանակը՝ ներառելով դրա առցանց դրսևորումները, արժանացան GREVIO-ի գովասանքին: GREVIO-ն իր նախնական գնահատման ընթացակարգում դիտարկել է նաև Ստամբուլի կոնվենցիայի Մասնակից պետությունների կրթական պրակտիկաները. Պորտուգալիայում ողջունվեց գենդերի և քաղաքացիության վերաբերյալ ուղեցույցների համապարփակ փաթեթի ընդունումը, որը ներառում էր համացանցային անվտանգության ուղեցույցներ՝ կրթության բոլոր մակարդակների համար՝ նախադպրոցականից մինչև միջնակարգ կրթություն: Մոնակոյի  կիբերբուլինգը 6-ից մինչև 10-րդ բոլոր դասարաններում կանխելու ջանքերը լավ ընդունվեցին GREVIO-ի կողմից երկրի գնահատման ժամանակ, մինչդեռ Սլովենիայի ջանքերը գնահատվել են բավարար, քանի որ դրանք նպատակ ունեին բարձրացնելու երիտասարդների իրազեկվածությունը ժամադրության ժամանակ հնարավոր բռնության մասին, ներառյալ առցանց հարթությունում և բարելավել համապատասխան մասնագետների, ինչպես նաև բարելավելու ուսուցիչների և սոցիալական աշխատողների գիտելիքներն ու զգայունությունն աղջիկների և կանանց առցանց բռնության և հետամտման կանխարգելման և նրանց պաշտպանության համար:

Ի լրումն լավ փորձի, GREVIO-ի նախնական գնահատման հաշվետվությունները նաև ուշադրություն են հրավիրում այն ոլորտներին, որոնք պահանջում են Մասնակից պետությունների հետագա ուշադրությունը: Օրինակ, Ֆրանսիայի վերաբերյալ նախնական գնահատման զեկույցը կոչ է անում բարձրացնելու աղջիկների նկատմամբ բանավոր և սեռական կիբերբռնության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը և այդ ուղղությամբ շահապաշտպանությունը, մինչդեռ Նիդերլանդների նախնական գնահատման զեկույցը մատնանշում էր մասնագետների շրջանում կանանց նկատմամբ թվային բռնության մասին գիտելիքի պակասը: Նմանապես, Իսպանիայի իշխանություններին խորհուրդ է տրվում ուժեղացնել կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի,

ներառյալ դրանց թվային բռնության վերաբերյալ մասնագիտական խմբերի վերապատրաստման ջանքերը, այդ թվում՝ իրավապահների, ուսուցիչների, բուժքույրերի ու բժշկական այլ մասնագիտությունների :

Թեև GREVIO-ն գովաբանել է կանանց նկատմամբ թվային բռնությանն առնչվող ներպետական օրենքների ընդունումը, այն նաև հայտնաբերել է ընդհանուր թերություններ, որոնք հաճախ գերակշռում են: Օրինակ՝ պատժամիջոցները հիմնականում ուղղված են անձի անվտանգության, հեղինակության կամ ունեցվածքի պաշտպանությանը, սակայն բավարար ուշադրության չեն արժանանում նման բռնության այլ հետևանքները՝ սոցիալական, տնտեսական, հոգեբանական և մասնակցային վնասը: Ամենակարևորն այն է, որ ներպետական օրենքների մեծ մասը չեն դիտարկում թվային միջոցներով կատարված բռնությունը նույն հարթությունում, ինչպես կանանց և աղջիկների նկատմամբ կյանքի բոլոր այլ ոլորտներում իրականացվող բռնությունը:

GREVIO-ի առաջին ընդհանուր հանձնարարականը, որն ընդունվել է GREVIO-ի կողմից 2021 թվականի հոկտեմբերին՝ Ստամբուլի կոնվենցիայի 69-րդ հոդվածին համահունչ, էլ ավելի է պարզաբանում Ստամբուլի կոնվենցիայի կիրառումը կանանց նկատմամբ թվային բռնության առնչությամբ: Այն առաջարկում է կոնվենցիայի մանրակրկիտ մեկնաբանություն առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության համատեքստում և գործնական առումով պարզաբանում է այդ հարցում Մասնակից պետությունների պարտավորությունները՝ տրամադրելով կոնկրետ առաջարկություններ: Կանանց նկատմամբ իրական (անցանց) կյանքում տեղի ունեցող բռնության նման, թվային բռնությունը նույնպես իր բնույթով շատ բարդ և բազմաչափ է: Ընդհանուր հանձնարարականն առաջարկում է ամբողջական և բազմոլորտային մոտեցում՝ խնդիրը լուծելու Ստամբուլի կոնվենցիայի բոլոր չորս հենասյուների միջոցով:

## Ստամբուլի կոնվենցիայի հարաբերություններն այլ գործիքների հետ

Ստամբուլի կոնվենցիայի X-րդ գլխում՝ «Հարաբերություններ այլ միջազգային գործիքների հետ», ամփոփվում և բացատրվում են կոնվենցիայի փոխհարաբերությունները գոյություն ունեցող և *պլանավորված* ազգային և միջազգային փաստաթղթերի հետ (Եվրոպայի խորհուրդ, 2011b):

> Կոնվենցիայի բացատրական զեկույցում ընդգծվում է, որ Կոնվենցիան ներդաշնակորեն գոյակցում է այլ պայմանագրերի հետ՝ բազմակողմ, թե երկկողմ ... Կոնվենցիայի հիմնական նպատակն է ամրապնդել տուժողների պաշտպանությունը՝ ապահովելով նրանց պաշտպանության ամենաբարձր մակարդակը ... Այստեղ կարևոր է «ամենաբարձր» բառը: Կարելի է պնդել, որ ինչ մոտեցում էլ ապահովի ավելի բարձր պաշտպանություն, անկախ նրանից՝ դա Ստամբուլի կոնվենցիան է, թե որևէ այլ փաստաթուղթ, այն պետք է գերակա դեր ունենա: Դա համահունչ է Ստամբուլի կոնվենցիայի զոհակենտրոն մոտեցմանը, որտեղ առաջնահերթություն է տրված տուժողների լավագույն շահերին (Guney, 2020):

Այդ առումով կոնվենցիայի 71-րդ հոդվածը շեշտում է, որ կոնվենցիան չի ազդում «այլ միջազգային փաստաթղթերից բխող պարտավորությունների վրա», որոնք վավերացվել են կամ ենթակա են վավերացման Մասնակից պետությունների կողմից և «որոնք պարունակում են դրույթներ սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի վերաբերյալ», այդպիսով հիշեցնելով Մասնակից պետություններին, որ նրանք պարտավոր են պահպանել կանանց իրավունքների վերաբերյալ այլ վավերացրած կամ ապագայում վավերացման ենթակա պայմանագրերի ներքո ստանձնած պարտավորությունները:

73-րդ հոդվածը նաև հավելում է, որ «Կոնվենցիայի դրույթները չեն սահմանափակում ներքին օրենսդրության և պարտավորեցնող միջազգային գործիքների այն դրույթները, որոնք արդեն մտել են կամ կարող են մտնել ուժի մեջ և որոնց համաձայն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնու-

թյան կանխարգելման և դրա դեմ պայքարի շրջանակներում անձանց համար ապահովված են կամ կապահովվեն ավելի բարենպաստ իրավունքներ»՝ ընդունելով, որ այլ գործիքները նույնպես կարող են երաշխավորել կանանց նկատմամբ գենդերային բռնության տուժողների ավելի մեծ պաշտպանություն և այդպիսով լրացնել Ստամբուլի կոնվենցիան: Բացի այդ, 72-րդ հոդվածը սահմանում է, որ կանանց նկատմամբ բռնությունից պաշտպանության հարցի վերաբերյալ կնքված այլ համաձայնագրերը՝ լինեն դրանք երկկողմ, թե բազմակողմ, կարող են օգտագործվել Ստամբուլի կոնվենցիան լրացնելու կամ ուժեղացնելու համար:

Այս ուսումնասիրության հաջորդ մասում ներկայացվում է Բուդապեշտի կոնվենցիան և դրա առանձնահատկությունները, որից հետո դիտարկվում են Ստամբուլի կոնվենցիայից բացի գոյություն ունեցող այլ իրավական փաստաթղթերը և դրանցում ներառված կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տեսակները:



# ԲՈՒԴԱՊԵՇՏԻ ԿՈՆՎԵՆՑԻԱ

## Բովանդակությունը և կարգավորման շրջանակը

Կիբերհանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Բուդապեշտի կոնվենցիա) առաջին և առավել կարևոր իրավական բնույթի միջազգային պարտավորեցնող պայմանագիրն է, որը կարգավորում է կիբերհանցագործություններից և էլեկտրոնային ապացույցներից բխող իրավահարաբերությունները:

Կոնվենցիան և դրա բացատրական զեկույցն ընդունվել են Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2001 թվականի նոյեմբերին: Այն բացվել է ստորագրման համար Բուդապեշտում և ուժի մեջ է մտել 2004 թվականի հուլիսի 1-ին: 2021 թվականի հունիսի դրությամբ կոնվենցիայի մասնակից են 66 պետություններ: Կոնվենցիան բաց է ցանկացած երկրի համար, որը պատրաստ է իրականացնել դրա դրույթները և ներգրավվել կիբերհանցագործությունների դեմ միջազգային համագործակցության մեջ: Կարևոր է, որ այն ծառայում է որպես ուղեցույց ցանկացած երկրի համար, որը մշակում է համապարփակ ներպետական օրենսդրություն կիբերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների հետ կապված ցանկացած հանցատեսակի վերաբերյալ, ընդ որում, մեծ թվով պետություններ արդեն իսկ օգտվում են այս հնարավորությունից[9]:

Կոնվենցիան Մասնակից պետություններից պահանջում է քրեական պատասխանատվության ենթարկել համակարգչային տվյալների և համակարգերի դեմ կամ դրանց միջոցով կատարված և բովանդակության հետ կապված իրավախախտումները, որոնք ենթադրում են երեխաների սեռական բռնության նյութերի արտադրություն, տարածում կամ պահպանում, ինչպես նաև հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտումներ: Կոնվենցիայի Մասնակից պետություններից նաև պահանջվում է հզորացնել ներպետական քրեական դատավարության օրենքները, համալրելով դատական համակարգը ցանկացած հանցատեսակի վերաբերյալ էլեկտրոնային

9. Եվրոպայի խորհուրդ, «Կիբերհանցագործությունների հարցերով օրենսդրության գլոբալ վիճակը 2013-2020 թթ.: Համառոտ ակնարկ», հասանելի՝ https://rm.coe.int/3148-1-3-4-cyberleg-global-state-feb2020-v1-public/16809cf9a9:

ապացույցներ ապահովելու միջոցներով, ինչպես նաև արդյունավետորեն նպաստելով էլեկտրոնային ապացույցների օժանդակությամբ կիբերհանցագործությունների և այլ հանցագործությունների հետաքննությանը և հետապնդման հարցերում միջազգային համագործակցությանը և փոխադարձ իրավական օգնությանը: Կոնվենցիան սկզբունքորեն միտված է՝ 1) ներդաշնակեցնելու կիբերհանցագործությունների ոլորտում իրավախախտումների ներպետական քրեական նյութական իրավունքի տարրերը և հարակից դրույթները. 2) ներպետական քրեական դատավարության ընթացակարգերն ապահովելու այնպիսի իրավասություններով, որոնք անհրաժեշտ են նման հանցագործությունների, ինչպես նաև թվային համակարգերի միջոցով կատարված այլ հանցագործությունների հետաքննության և հետապնդման համար, այդ թվում նաև էլեկտրոնային ապացույցներ հավաքելու իրավասությամբ. 3) ստեղծելու միջազգային համագործակցության արագ և արդյունավետ ռեժիմ (Եվրոպայի խորհուրդ, 2001a):

Բուդապեշտի կոնվենցիայի հաջողությունն ու օրինականությունը շատ առումներով պայմանավորված է նրանով, որ նախատեսված միջոցները համալրում են քրեական արդարադատության արդյունավետ արձագանքը և օրենքի գերակայության երաշխիքները:

## Բուդապեշտի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունները

### Առաջին լրացուցիչ արձանագրությունը

Կիբերհանցագործությունների մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը վերաբերում է թվայնացված համակարգերի միջոցով ռասիստական և այլատյաց բնույթի գործողությունների քրեականացմանը: Այն ընդունվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2002 թվականի նոյեմբերին և ուժի մեջ է մտել 2006 թվականի մարտի 1-ին: 2021 թվականի հունիսի դրությամբ լրացուցիչ արձանագրությունը ստորագրել են 33 պետություններ:

Արձանագրությունն ընդունում է, որ թվայնացված համակարգերը նպաստում են հաղորդակցությանը և խոսքի ազատությանը, ինչպես նաև ռասիստական և այլատյաց նյութերի և խոսքի տարածմանը, և Մասնակից պետություններից պահանջում են քրեականացնել դրանց տարածումը:

Այն անդրադառնում է թվայնացված համակարգերի միջոցով ռասիստական և այլատյաց նյութերի տարածմանը, ռասիստական և այլատյացության դրդապատճառներով սպառնալիքներին, վիրավորանքներին, ինչպես նաև  ցեղասպանության կամ մարդկության դեմ հանցագործությունների ժխտմանը, կոպտորեն անտեսմանը, ընդունմանը կամ արդարացմանը:

Այս արձանագրությունը ենթադրում է կոնվենցիայի շրջանակի ընդլայնում, ներառյալ դրա բովանդակային, ընթացակարգային և միջազգային համագործակցության դրույթները, ընդգրկելով նաև ռասիստական և այլատյացության քարոզչության իրավախախտումները: Այսպիսով, բացի նման վարքագծի նյութական իրավունքի տարրերի ներդաշնակեցումից, Արձանագրությունը նպատակ ունի բարելավելու Մասնակից պետությունների կարողությունները՝ օգտագործելու այս ոլորտում կոնվենցիայով սահմանված միջազգային համագործակցության գործիքները և ուղիները (Եվրոպայի խորհուրդ, 2003թ.):

### Նախապատրաստվող երկրորդ լրացուցիչ արձանագրությունը

Բուդապեշտի կոնվենցիայի երկրորդ լրացուցիչ արձանագրության նախապատրաստումը սկսվել է 2017 թվականի սեպտեմբերին՝ կիբերտարածության մեջ քրեական արդարադատության մարտահրավերներին անդրադառնալու և կիբերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ առավել արդյունավետ համագործակցություն ապահովելու համար: Էլեկտրոնային ապացույցները կարևոր նշանակություն ունեն ոչ միայն կիբերհանցագործությունների,

այլև ցանկացած այլ տեսակի հանցագործությունների հետաքննության համար: Քրեական արդարադատության մարմինների լիազորությունները սահմանափակված են տարածքային սահմաններով, իսկ իրավախախտները, տուժողները և էլեկտրոնային ապացույցները կարող են գտնվել տարբեր երկրներում, և հաճախ անհասկանալի է, թե որ երկրի օրենքները պետք է կիրառվեն, ինչպես և ումից կարելի է ձեռք բերել անհրաժեշտ ապացույցները:

Դա բացասաբար է անդրադառնում օրենքի գերակայության և կիբերտարածությունում մարդկանց պաշտպանելու կառավարությունների պարտավորությունների վրա: Ինչպես Բուդապեշտի կոնվենցիայի դեպքում, արձանագրության մեջ սահմանված միջոցները նույնպես նախատեսված են միայն հատուկ քրեական հետաքննությունների համար և ենթակա են օրենքի գերակայության և տվյալների պաշտպանության երաշխիքներին:

Ակնկալվում է, որ Երկրորդ լրացուցիչ արձանագրությունը կընդունվի և կբացվի ստորագրման համար մինչև 2021 թվականի վերջը:

Արձանագրությունը նպատակ ունի ընդլայնել համագործակցությունը կիբերհանցագործության և էլեկտրոնային ապացույցների հավաքման վերաբերյալ լրացուցիչ գործիքների միջոցով, որոնք ենթադրում են ավելի արդյունավետ փոխօգնություն և իրավասու մարմինների միջև համագործակցության այլ ձևեր, այդ թվում՝ համագործակցություն արտակարգ իրավիճակներում՝ երբ առկա է էական և անմիջական վտանգ ցանկացած անձի կյանքին կամ անվտանգությանը, ինչպես նաև անմիջական համագործակցության իրավասու մարմինների, ծառայություն մատուցողների և իրավախախտներին բացահայտելու համար անհրաժեշտ տեղեկատվությանը տիրապետող կամ վերահսկող այլ կազմակերպությունների միջև[10]:

Հետևաբար, այս արձանագրության նպատակն է լրամշակել Կոնվենցիան և Առաջին լրացուցիչ արձանագրությունը: Վերջինիս դրույթները գործառնական և քաղաքական առումով կլինեն շահավետ և կապահովեն Բուդապեշտի կոնվենցիայի շարունակական արդիականությունը:

## Վերահսկողության կոմիտե և կիբերհանցագործությունների դեմ պայքարի գրասենյակ

Կիբերհանցագործությունների դեմ կոնվենցիայի կոմիտեն (T-CY) ապահովում է Բուդապեշտի կոնվենցիայի արդյունավետ իրականացումը և ներկայացնում է կոնվենցիայի Մասնակից պետությունները:

Բուդապեշտի կոնվենցիայի 46-րդ հոդվածը սահմանում է կոմիտեի դերը: T-CY-ն օժանդակում է կոնվենցիայի իրականացմանը: Կոմիտեի դերն է նաև հեշտացնել կողմերի միջև կիբերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության փոխանակումը: Վերջապես, T-CY-ն պատասխանատու է նաև կոնվենցիայի հետագա հնարավոր փոփոխությունները մշակելու համար[11]:

T-CY-ի աշխատանքին օժանդակում է Եվրոպայի խորհրդի կիբերհանցագործությունների դեմ ծրագրի գրասենյակը (C-PROC) Բուխարեստում: C-PROC-ը պատասխանատու է ամբողջ աշխարհում տարբեր երկրների դատական և իրավական համակարգերը համապատասխան գործիքակազմով ապահովելու համար՝ արդյունավետորեն պայքարելու կիբերհանցագործությունների և

10. Կիբերհանցագործությունների դեմ Կոնվենցիայի կոմիտե (T-CY) (2020 թ.), «Կիբերհանցագործության մասին Բուդապեշտի կոնվենցիայի 2-րդ լրացուցիչ արձանագրության նախապատրաստում, արդի վիճակ», հասանելի՝ https://rm.coe.int/t-cy-2020-32-protocol-tor-chair-state-of-play/1680a06a83%20or%20just%20a%20general%20page:%20Protocol%20negotiations%20(coe.int)www.coe.int/en/web/cybercrime/t-cy-drafting-group:

11. Cybercrime Convention Committee (T-CY)-ի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է www.coe.int/en/web/cybercrime/tcy կայքէջում:

էլեկտրոնային ապացույցների հետ առնչվող հանցագործությունների դեմ, ինչպես ներքին, այնպես էլ միջազգային մակարդակում: C-PROC-ն օգնում է պետություններին Բուդապեշտի կոնվենցիայի և հարակից չափանիշների հիման վրա մշակել նոր օրենքներ կամ լրամշակել գործող օրենքները, ինչպես նաև ամրապնդել քրեական արդարադատության կարողությունները, արձագանքելու կիբերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների հետ կապված մարտահրավերներին, ինչպես նաև բարելավելու միջազգային, միջգերատեսչական և հանրային–մասնավոր համագործակցությունը: Թեև կիբերհանցագործությունների վերաբերյալ ներպետական օրենսդրության արդիականացման գործում Եվրոպայի խորհուրդը կարող է աջակցել ցանկացած երկրի, սակայն այս կամ այն պետության կողմից Բուդապեշտի կոնվենցիային միանալու և այն իրագործելու քաղաքական կամքն ապահովում են տվյալ պետության քրեական արդարադատության համակարգի հզորացմանն ուղղված միջոցառումների ամբողջական փաթեթ: C-PROC-ն աշխատում է նաև երեխաներին առցանց սեռական բռնությունից պաշտպանելու ուղղությամբ և կիբերբռնության վերաբերյալ մի շարք գործողությունների միջոցով ապահովում է Ստամբուլի և Բուդապեշտի կոնվենցիաների, ինչպես նաև այլ գործիքների միջև փոխգործակցությունը[12]: Կարողությունների զարգացումը թույլ է տալիս արդյունավետ ձևով օգնել պետություններին դիմակայելու կիբերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների հարցերում ավելացող մարտահրավերներին, այդ թվում՝ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հետաքննությանը, հետապնդմանը և պատժամիջոցների մշակմանը:

Բուդապեշտի կոնվենցիան, դրա ներկա և ապագա լրացուցիչ արձանագրություններն առաջարկում են կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ուսումնասիրման շատ հետաքրքիր շրջանակ՝ Ստամբուլի կոնվենցիայի լույսի ներքո: Բուդապեշտի կոնվենցիան նյութական քրեական իրավունքի մի շարք դրույթների միջոցով ուղղակի և անուղղակի ձևով անդրադառնում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունների տարբեր դրսևորումներին: Մի շարք այլ դրույթներ վերաբերում են այդ բռնությանը նպաստող գործողություններին: Կիբերհանցագործությունների մասին կոնվենցիայի դատավարական ընթացակարգերը և միջազգային համագործակցության մասին դրույթները կարևոր են կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հետաքննության և էլեկտրոնային ապացույցների ապահովման համար:

Նախորդ երկու գլուխներում ներկայացվել է, որ Ստամբուլի կոնվենցիայի շրջանակն ընդգրկում է կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը, վերահաստատում է կանանց նկատմամբ բռնության գենդերային և կառուցվածքային բնույթը և, որ կոնվենցիան կառուցված է բռնության կանխարգելման, տուժողների պաշտպանության և աջակցության, իրավախախտների քրեական հետապնդման և համակարգված քաղաքականությունների մշակման շուրջ: Մենք նաև տեսանք, որ Մասնակից պետություններից պահանջվում է պատշաճ ջանասիրություն ցուցաբերել իրենց քաղաքացիների համար այս չորս հենասյուների առումով:

Մենք նաև հասկացանք, թե ինչպես է Եվրոպայի խորհրդի կիբերհանցագործությունների մասին կոնվենցիան արձագանքում համակարգիչների դեմ կամ դրանց միջոցով կատարվող քրեական հանցագործություններին: Դատավարական և միջազգային համագործակցության դրույթները կիրառվում են էլեկտրոնային ապացույցների հետ կապված ցանկացած հանցագործության դեպքում՝ լրացնելով Ստամբուլի կոնվենցիայի դրույթները կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության կոնկրետ խնդիրների վերաբերյալ և հետևաբար նպաստում են բռնության այդ տեսակի հետաքննությանը:

Գոյություն ունեն բազմաթիվ այլ միջազգային փաստաթղթեր, որոնք անդրադառնում են կանանց

---

12. Cybercrime Programme Office (C-PROC)-ի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է www.coe.int/en/web/cybercrime/cybercrime-office-c-proc- կայքէջում:

նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության երևույթի առանձին մասերին: Ստամբուլի կոնվենցիան ընդունում է, որ որոշ կոնկրետ հարցերի առնչությամբ այլ իրավական փաստաթղթեր կարող են ավելի մանրամասն պաշտպանություն առաջարկել՝ հստակ նշելով, որ դրանց պետք է առաջնահերթություն տրվի: Թեև այս գործիքները գոյություն ունեն, դրանք պարտադիր չէ, որ փոխհամաձայնեցված լինեն կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությանն արձագանքելու տեսանկյունից:



# ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՌՑԱՆՑ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՊԵՍ ՕԺԱՆԴԱԿՎՈՂ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԼՈՒՍԱԲԱՆՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Ինչպես նշված է Ստամբուլի կոնվենցիայի նախաբանում, այն հիմնվում է առկա և մշակվելիք փաստաթղթերի վրա, որոնք անդրադառնում են կանանց նկատմամբ գենդերային բռնության հետ կապված հարցերին, ներառյալ Կանանց նկատմամբ խտրականության վերացման մասին կոնվենցիան (ԿՆԽՎՄԿ), Մարդկանց իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան, Եվրոպական սոցիալական խարտիան, Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան և Սեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:

Սակայն միջազգային և տարածաշրջանային մակարդակով այլ գործիքներ, համաձայնագրեր և քաղաքականություններ նույնպես  անդրադառնում են կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիական օժանդակվող բռնության ավելի կոնկրետ հիմնախնդիրների (Simonovic, 2020):

Վերջին տարիներին մշակված մի շարք գործիքներ, փաստաթղթեր և հայտարարություններ ընդլայնել են կանանց նկատմամբ գենդերային բռնության կամ սեքսիզմի սահմանումը, որպեսզի կարողանան ներառել նաև առցանց և նոր տեխնոլոգիաների օժանդակությամբ իրականացվող բռնության հատուկ ձևերը:

## ԿՆԽՎՄԿ կոմիտեի թիվ 35 ընդհանուր հանձնարարականը

Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի (ԿՆԽՎՄԿ կոմիտե) կողմից ընդուն-

ված կանանց նկատմամբ գենդերային բռնության վերաբերյալ թիվ 35 ընդհանուր հանձնարարականը, լրացնելով թիվ 19 Ընդհանուր հանձնարարականը (Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե, 2017 թ.), կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնությունը սահմանում է որպես «բազմաթիվ, փոխկապակցված և կրկնվող բռնության ձևերի կոնտինուում, որը տեղի է ունենում տարբեր միջավայրերում՝ մասնավորից մինչև հանրային, ներառյալ տեխնոլոգիապես միջնորդավորված միջավայրերը, որոնք ժամանակակից գլոբալացված աշխարհում հատում են ազգային սահմանները», նշելով, որ.

> կանանց նկատմամբ գենդերային բռնությունը տեղի է ունենում մարդկային փոխազդեցության բոլոր ոլորտներում և հարթակներում՝ հանրային և մասնավոր: Դրանք ներառում են ընտանիքը, համայնքը, հանրային տարածքները, աշխատավայրը, ժամանցը, քաղաքականությունը, սպորտը, առողջապահական ծառայությունները, կրթական միջավայրերը և դրանց վերարտադրությունը տեխնոլոգիապես միջնորդավորված հարթակներում՝ համացանցում և թվային տարածություններում տեղի ունեցող բռնության նոր դրսևորումները:

Կանանց նկատմամբ բռնության, դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ հատուկ զեկուցողի զեկույցում,  կանանց նկատմամբ առցանց բռնությունը սահմանվում է որպես.

> կանանց նկատմամբ գենդերային բռնության ցանկացած գործողություն, որը մասամբ կամ ամբողջությամբ կատարվել, օժանդակվել կամ սրվել է  ՏՀՏ-ի, այդ թվում՝ բջջային հեռախոսների և սմարթֆոնների, համացանցի, սոցիալական մեդիայի հարթակների կամ էլ.փոստի կիրառմամբ՝ կնոջ նկատմամբ, քանի որ նա կին է կամ անհամաչափորեն սուր ազդեցություն ունի կանանց վրա:

## Եվրոպայի խորհրդի հանձնարարական՝ սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ

2019 թվականի մարտին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդունել է սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի նոր հանձնարարականը, որն ընդգրկում է սեքսիզմի, այդ թվում՝ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող, առաջին միջազգայնորեն համաձայնեցված սահմանումը և վերահաստատում է կանանց և աղջիկների նկատմամբ բռնության կոնտինուումի առկայությունը (Եվրոպայի խորհուրդ, 2019): Սեքսիզմը սահմանվում է որպես.

> Ցանկացած արարք, ժեստ, վիզուալ պատկեր, բանավոր կամ գրավոր խոսք, պրակտիկա կամ վարքագիծ, որի հիմքում այն գաղափարն է, որ անձը կամ մարդկանց խումբը ստորադաս է իր սեռի պատճառով, ինչը դրսևորվում է հանրային կամ մասնավոր կյանքում՝ առցանց կամ անցանց, հետևյալ նպատակով կամ ազդեցությամբ՝
>
> I. անձի կամ մի խումբ անձանց արժանապատվության կամ իրավունքների ոտնահարում.
>
> II. մարդուն կամ մարդկանց խմբին ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ սոցիալ-տնտեսական վնասի կամ տառապանքի պատճառում.
>
> III. ահաբեկող, թշնամական, նսեմացնող, նվաստացնող կամ վիրավորական միջավայրի ձևավորում.
>
> IV. անձի կամ մի խումբ անձանց կողմից մարդու իրավունքների իրացման և ինքնավարության խոչընդոտում.
>
> V. գենդերային կարծրատիպերի պահպանում և ամրապնդում:

Հանձնարարականում նաև նշվում է, որ «Սեքսիստական վարքագիծը, ինչպիսին է, մասնավորա-

պես, ատելության խոսքը, կարող է սրել կամ հրահրել բացահայտ վիրավորական և սպառնացող գործողություններ, ինչպիսիք են սեռական վիրավորանքը կամ բռնությունը, բռնաբարությունը կամ մահացու վտանգ ներկայացնող գործողությունները: Այլ հետևանքների թվում են ռեսուրսների կորուստը, ինքնավնասումը կամ ինքնասպանությունը» և ընդգծվում է, որ նման վարքագիծը «հանդիպում է մարդկային գործունեության ողջ տիրույթում, ներառյալ կիբերտարածությունը (համացանց և սոցիալական մեդիա): Նման հետևանքները կարող են անհատապես կամ հավաքականորեն զգալ մեկ անձը կամ մարդկանց խումբը, նույնիսկ եթե ոչ անձը, ոչ էլ խումբը ուղղակիորեն թիրախավորված չեն»: Հանձնարարականում նաև նշվում է, որ «Համացանցն ապահովել է սեքսիզմի, հատկապես սեքսիստական ատելության խոսքի արտահայտման և տարածման համար նոր հարթակ և մեծ լսարան, թեև սեքսիզմի արմատները ոչ թե տեխնոլոգիայի, այլ կայուն գենդերային անհավասարության մեջ են»: Վերջում հանձնարարականը վերահաստատում է սեքսիզմի ինտերսեկցիոնալ բնույթը և ընդգծում այնպիսի վատթարացնող հանգամանքները, ինչպիսիք են իշխանական հարաբերությունները, բռնության տարածվածությունն ու կրկնվող բնույթը: Թվային հաղորդակցության համատեքստում սեքսիզմի այս սահմանումը ներկա պահի դրությամբ եզակի է:

## Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության ռազմավարություն

Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության 2018-2023 թվականների ռազմավարությունը վերահաստատում է խտրականության և բռնության ձևերի առկայությունը, որոնք ազդում են կանանց իրավունքների, անվտանգության և ապահովության վրա՝ առցանց և անցանց:

> Բռնի և նվաստացուցիչ առցանց բովանդակությունը, ներառյալ պոռնոգրաֆիան, սեռական բռնության, այդ թվում՝ բռնաբարության հանդուրժումը, ամրապնդում են կանանց հնազանդ դերի գաղափարը և նպաստում են կանանց որպես ընտանիքի և հասարակության ստորադաս անդամների ընկալմանը: Դրանց հիմքում կանանց նկատմամբ բռնությունն է և կանանց՝ հատկապես ֆեմինիստներին ուղղված սեքսիստական ատելության խոսքը, որը նպաստում է գենդերային կարծրատիպերի և սեքսիզմի պահպանմանն ու ամրապնդմանը (Եվրոպայի խորհուրդ, 2018b):

Ռազմավարությունն ընդգծում է կանանց նկատմամբ բռնության կոնտինուումի գաղափարը, որը սնուցվում է ստորացուցիչ կարծրատիպերով և հանդուրժողական վարքագծով՝ ինչպես համացանցում, այնպես էլ իրական կյանքում:

> փաստերը նաև վկայում են, որ սոցիալական մեդիան օգտագործվում է բռնության նպատակով, և  կանայք ու աղջիկները հաճախ բախվում են բռնի և սեռական բնույթի սպառնալիքների հետ համացանցում: Ատելության սեքսիստական խոսքը տարածող հիմնական հարթակներն են սոցիալական մեդիան և տեսախաղերը: Խոսքի ազատությունը հաճախ չարաշահում են որպես անընդունելի և վիրավորական պահվածքի արդարացում: Ինչպես և կանանց նկատմամբ բռնության այլ դրսևորումների պարագայում, ատելության սեքսիստական խոսքը շարունակում է անբավարար լուսաբանվել, մինչդեռ դրա ազդեցությունը կանանց վրա՝ լինի դա հուզական, հոգեբանական և/կամ ֆիզիկական, կարող է կործանարար լինել, հատկապես երիտասարդ աղջիկների և կանանց համար: Նույնը տեղի է ունենում սեքսիզմի դեպքում:

ԵՄ քաղաքականության մի քանի հատվածներ նույնպես կենտրոնանում են կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հիմնախնդրի վրա՝ ճանաչելով այդ հիմնախնդիրը և մշակելով դրան արձագանքելու ճանապարհային քարտեզ (4.4 ԵՄ Գենդերային հավասարության ռազմավարություն):

## ԵՄ Գենդերային հավասարության ռազմավարություն

ԵՄ Գենդերային հավասարության ռազմավարությունն ընկալում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունը հետևյալ կերպ.

> Կանանց նկատմամբ առցանց բռնությունը դարձել է համատարած՝ հատուկ, արատավոր հետևանքներով. սա անընդունելի է: Դա սահմանափակում է հասարակական կյանքում կանանց մասնակցությունը: Սոցցանցերում բուլինգը, ոտնձգությունները և չարաշահումները խոր ազդեցություն են ունենում կանանց և աղջիկների առօրյա կյանքի վրա: Հանձնաժողովը կառաջարկի «Թվային ծառայությունների մասին» օրենքը, որը կպարզաբանի օգտատերերի կողմից տարածվող բովանդակության վերաբերյալ առցանց հարթակների պարտականությունները: Թվային ծառայությունների մասին օրենքը կհստակեցնի, թե ինչ միջոցներ են ակնկալվում հարթակներից՝ առցանց անօրինական գործողություններին դիմակայելու համար հիմնարար իրավունքները պաշտպանելու համատեքստում: Օգտատերերը նաև պետք է կարողանան դիմակայել այլ տեսակի վնասակար և վիրավորական բովանդակությանը, որը միշտ չէ համարվում անօրինական, բայց կարող է կործանարար հետևանքներ ունենալ: Կանանց առցանց անվտանգությունը պաշտպանելու համար Հանձնաժողովը կգործարկի համացանցային հարթակների միջև համագործակցության նոր շրջանակի մշակումը (Եվրահանձնաժողով, 2020ա):

Հավասարության հարցերով հանձնակատար Հելենա Դալլին, 2020 թվականի օգոստոսի 13-ին պատասխանելով խորհրդարանում իրեն ուղղված հարցին, հավելեց, որ «Համաձայն Գենդերային հավասարության ռազմավարության՝ Հանձնաժողովը կգործարկի հարթակների և այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցության շրջանակի մշակումը՝ առցանց գենդերային բռնության դեմ պայքարելու համար» (Եվրոպայի խորհրդարան, 2020 թ.):

## Տուժողների իրավունքների վերաբերյալ ԵՄ ռազմավարությունը

Տուժողների իրավունքների վերաբերյալ ԵՄ ռազմավարությունը սահմանում է կիբերհանցագործությունը որպես «ցանկացած տեսակի քրեական հանցագործություն, որը կատարվում է առցանց հարթակներում, համակարգչային կամ առցանց գործիքների միջոցով»: Ռազմավարությունում նաև ասվում է.

> Կիբերհանցագործությունների թվում են մարդկանց դեմ ուղղված այնպիսի լուրջ հանցագործություններ, ինչպիսիք են առցանց սեռական հանցագործությունները , ներառյալ՝ երեխաների նկատմամբ), ինքնության գողությունը, առցանց ատելության հանցագործությունները: ... Կիբերհանցագործությունների տուժողները միշտ չէ որ համապատասխան օգնություն են ստանում կրած վնասը փոխհատուցելու համար և հաճախ չեն հաղորդում հանցագործության մասին: ... Կիբերհանցագործությունների մասին հաղորդումը պետք է ավելի պարզեցվի և տուժողներին պետք է տրամադրվի անհրաժեշտ օգնությունը (Եվրոպական հանձնաժողով, 2020b):

Այս սահմանումն ուշագրավ է այն առումով, որ կիբերհանցագործությունը դրա շրջանակում դիտվում է որպես հիմնախնդիր, որի ցանկացած գործիքներից կարող է տուժել ցանկացած անձ:

Կան շատ գործիքներ, որոնք անդրադառնում են ընդհանուր առմամբ կիբերհացագործություններին, հատկապես կանանց դեմ ուղղված, ինչպես նաև կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունից հնարավոր իրավական պաշտպանության միջոցների հետ կապված հարցերին՝ անձնական կյանքի անձեռնմխելիության պաշտպանությանը, միջնորդների պատասխանատվությանը և թվային ապացույցների ապահովմանը: ԵՄ-ի որոշ փաստաթղ-

թեր և կանոնակարգեր, ինչպիսիք են Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը, Թվային ծառայությունների մասին օրենքը կամ Էլեկտրոնային ապացույցների մասին կանոնակարգը, Մասնակից պետությունների համար իրավաբանորեն պարտավորեցնող են, մինչդեռ այլ գործիքները, որոնք օժանդակում են մասնավոր հատվածի հետ համագործակցությանը, օրինակ՝ Առցանց ատելության խոսքին հակազդելու վարքագծի կանոնագիրքը, համարվում են ինքնակարգավորում, թեև գործնականում որոշ չափով արդյունավետ են եղել այդ երևույթը զսպելու հարցում (սոցիալական ցանցերում ատելության խոսքն արգելելու առումով):

## Եվրոպայի խորհրդի 108+ կոնվենցիան և Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը

Տվյալների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի 108-րդ կոնվենցիայի բուն նպատակն է «պաշտպանել յուրաքանչյուր անձի՝ անկախ նրա ազգությունից կամ բնակության վայրից, անձնական տվյալների մշակման վտանգից»: 2018 թվականին լրամշակված գործիքը, որը հայտնի է որպես «Կոնվենցիա 108+, Անձնական տվյալների մշակման հետ կապված անձանց պաշտպանության կոնվենցիա» երաշխավորում է, որ ցանկացած անձ ընդգրկված է դրա պաշտպանության մեջ՝ անկախ ազգությունից, քանի դեռ գտնվում է Կոնվենցիան վավերացրած Մասնակից պետություններից որևէ մեկի իրավասության տարածքում (Եվրոպայի խորհուրդ, 2018a): Պաշտպանության կիրառման շրջանակը ներառում է անձնական տվյալների և՛ ավտոմատացված, և՛ ոչ ավտոմատացված մշակումը ու երաշխավորում է այնպիսի գաղտնի բնույթի տվյալների պաշտպանությունը, ինչպիսիք են գենետիկական և կենսաչափական տվյալները, ինչպես նաև «տվյալների ջնջման իրավունքը»:

2018 թվականի մայիսի 25-ին ուժի մեջ մտած Եվրոպական միության Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (ՏՊԸԿ) 2016/679 կետը կարգավորում է անհատների, ընկերությունների և կազմակերպությունների կողմից ԵՄ-ում ֆիզիկական անձանց անձնական տվյալների հավաքագրումն ու մշակումը: Կանոնակարգն ամրապնդում է անձի իրավունքը՝ անձնական տվյալների վերահսկողության, ջնջման, ուղղման, սահմանափակման կամ անձնական տվյալների մշակման վերաբերյալ առարկության հարցերում, և հեշտացնում է անձի կողմից իր անձնական տվյալներ մուտք գործելն ու փոխանցելը, այդ թվում՝ պատկերները, ինչպիսիք են առանց անձի համաձայնության արված սեռական բնույթի նկարները: Կանոնակարգը պարտավորեցնում է նաև տվյալները մշակող ընկերություններին և կազմակերպություններին մինչ տվյալների մշակումը ստանալ օգտատերի հստակ համաձայնությունը: Համաձայնությունը պետք է լինի «տվյալների սուբյեկտի ցանկությունների կամավոր, հստակ, իրազեկված և բացահայտ արտահայտումը»:

Կանոնակարգը կիրառելի է, եթե տվյալներ վերահսկողը (այն կազմակերպությունը, որը տվյալներ է հավաքում ԵՄ ռեզիդենտներից), մշակողը (այն կազմակերպությունը, որը տվյալները մշակում է տվյալների վերահսկողի անունից, օրինակ՝ ամպային ծառայություններ մատուցողը) կամ տվյալների սուբյեկտը (անհատը) բնակվում են ԵՄ-ում:

Կանոնակարգը հնարավորություն է տալիս կանխելու կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության որոշ դրսևորումները՝ պահանջելով, օրինակ, որ ընկերություններն իրենց պրոդուկտը մշակելիս հաշվի առնեն անձնական կյանքի անձեռնմխելիությունը («հետամտող ծրագրերի» խնդրի վերաբերյալ տե՛ս Citizen Lab, 2020թ.): Այն անձինք, ովքեր պատասխանատու են սեռական բռնության նյութերի վերբեռնման համար, ինչպես նաև նման նյութեր հրապարակողները համարվում են տվյալների համատեղ վերահսկողներ, դրանով իսկ դառնալով ՏՊԸԿ-ի կողմից սահմանված պարտավորությունների և պատժամիջոցների սուբյեկտ (Van der Wilk, 2018թ.): Ավելին, ՏՊԸԿ-ն նախատեսում է նաև «տվյալների ջնջման իրավունք», որն ավելի հայտնի է որպես «մոռացվելու իրավունք»:

Դրույթները նոր իրավունք են ներառում տվյալների սուբյեկտների համար, ովքեր չեն ցանկանում, որպեսզի իրենց տվյալները վերամշակվեն և կարող են պահանջել, որ դրանք ընդմիշտ ջնջվեն, եթե պահպանելու օրինական հիմքեր չկան: ... Ջնջման այս իրավունքը տարածվում է, ընդհանուր առմամբ, ոչ միայն որոնման համակարգերի վրա, ինչը նշանակում է, որ ԵՄ տվյալների պաշտպանության մասին օրենքի նոր դրույթներն այժմ վրեժխնդրության պոռնոգրաֆիայի տուժողներին տրամադրում են ոչ միայն տարածված պատկերների հղումները ջնջելու, այլև պատկերները սկզբնաղբյուր կայքերից հեռացնելու միջոց, առնվազն ԵՄ իրավասության շրջանակներում (Setterfield 2019):

## Թվային ծառայությունների մասին ԵՄ օրենքը

Էլեկտրոնային առևտրի մասին հրահանգն ուժի մեջ է մտել 2000 թվականի հունիսի 8-ին, սահմանելով էլեկտրոնային առևտրի ներդաշնակեցված կանոնները, ներառյալ ծառայություններ մատուցողների պատասխանատվությունը, այդ թվում՝ էլեկտրոնային առևտրի հարթակներում և սոցիալական մեդիայում: Այն նախատեսում է պատասխանատվությունից ազատում որոշ առցանց ծառայություններ մատուցողների համար՝ հաշվի առնելով, որ նրանք չեզոք դեր ունեն փոխանցված և/կամ հրապարակված բովանդակության հարցում: Ծառայություններ մատուցողները պարտավոր են հեռացնել կամ կասեցնել մուտքը դեպի իրենց հարթակներում տեղադրված անօրինական բովանդակություն, հենց որ տեղեկանան այդ մասին ծանուցման միջոցով: Հրահանգը նաև թույլ է տալիս Մասնակից պետություններին պահանջել անօրինական բովանդակության հեռացում ծառայություններ մատուցողների կողմից: Այսպիսով, այն իրավական հիմք է ստեղծում անօրինական առցանց բովանդակության մասին ծանուցման և հեռացման համար (Van der Wilk, 2018թ.):

2019 թվականին Էլեկտրոնային առևտրի մասին հրահանգի հիմնական դրույթները վերանայվեցին և Եվրոպական հանձնաժողովի կողմից առաջարկվեց թվային ծառայությունների մասին նոր օրենսդրական փաթեթ՝ արդիականացնելու թվային ծառայությունների իրավական դաշտը:

Թվային ծառայությունների մասին օրենքի առաջարկն արվել էր 2020 թվականի դեկտեմբերին, և ակնկալվում էր, որ դրա ընդունումը կտևի մոտ մեկուկես տարի: Առաջարկը սահմանում է «որոշ միջնորդական ծառայությունների համար պատշաճ ուսումնասիրության պարտավորություններ, ներառյալ անօրինական բովանդակության մասին ծանուցման և գործողությունների ընթացակարգերը և հարթակների բովանդակության մոդերացման որոշումները վիճարկելու հնարավորություն, ըստ այդմ առաջարկը նպատակ ունի բարելավելու օգտատերերի առցանց անվտանգությունը ողջ Միության տարածքում և բարելավելու նրանց հիմնարար իրավունքների պաշտպանությունը» (Եվրոպական հանձնաժողով, 2020d):

Առաջարկը կանոններ է սահմանում շատ խոշոր հարթակների համար, ինչպիսիք են սոցիալական մեդիայի խոշոր կորպորացիաները, և հստակեցնում է «թվային ծառայությունների պարտականությունները՝ վերացնելու իրենց օգտատերերի առջև ծառացած ռիսկերը և պաշտպանելու նրանց իրավունքները»: Այն պահպանում է էլեկտրոնային առևտրի մասին հրահանգից ժառանգած պատասխանատվության ռեժիմը, որի համաձայն բովանդակություն տեղադրող ընկերությունները պատասխանատվություն չեն կրում այդ բովանդակության համար, եթե չեն ծանուցվել դրա անօրինական բնույթի մասին: Եթե ընկերությունը ծանուցվում է բովանդակության անթույլատրելիության մասին, ընթացիկ առաջարկի համաձայն նա պարտավոր է անհապաղ հեռացնել այն: Ավելին, օրենքը ներառում է մարդու իրավունքների խմբերի կողմից արված առաջարկները՝ յուրաքանչյուր Մասնակից պետությունում նշանակելու կանոնակարգի կիրարկումը վերահսկող «Թվային ծառայությունների համակարգող», ստեղծելու բողոքների ու վեճերի կարգավորման մեխանիզմներ, ինչպես նաև վեճերի կարգավորման արտադատական մարմին այն դեպքերի համար, երբ բովանդակությունն անարդարացիորեն է հեռացվել:

Առաջարկը նախատեսում է միայն անօրինական բովանդակության հեռացում և պարտադիր երաշխիքներ է սահմանում օգտատերերի տեղեկատվությունը հեռացնելու դեպքում, ներառյալ օգտատերերին բացատրական տեղեկատվության տրամադրումը, ծառայություններ մատուցողների կողմից աջակցվող բողոքների մեխանիզմները, ինչպես նաև վեճերի արտադատական լուծման արտաքին մեխանիզմը: Այն նաև երաշխավորում է, որ ԵՄ քաղաքացիները նույնպես պաշտպանված լինեն Միությունում չհիմնադրված, բայց ներքին շուկայում գործող պրովայդերների կողմից մատուցվող ծառայություններից օգտվելիս, քանի որ այդ մատակարարները նույնպես կարգավորվում են (Եվրոպական հանձնաժողով, 2020d):

Վերջապես, առաջարկը պարտավորեցնում է շատ մեծ առցանց հարթակներին ապահովել տվյալների հասանելիություն իրավասու հետազոտողներին՝ թվային ծառայությունների համակարգողի հսկողության ներքո:

## Էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ առաջարկը

Ըստ Եվրահանձնաժողովի, «բոլոր քրեական հետաքննությունների կեսից ավելին նախատեսում են էլեկտրոնային ապացույցներ մուտք գործելու անդրսահմանային հարցումներ, այդ թվում՝ փաստաթղթային կամ էլեկտրոնային նամակի տեսքով կամ հաղորդագրությունների հավելվածների միջոցով» (Եվրոպական հանձնաժողով, 2019թ.):

2019 թվականին Եվրահանձնաժողովն առաջարկել է ներքին բանակցություններ անցկացնել էլեկտրոնային ապացույցներին անդրսահմանային հասանելիության վերաբերյալ և հրապարակել է «Քրեական գործերով էլեկտրոնային ապացույցների արտադրության և պահպանման որոշումների վերաբերյալ Եվրոպական խորհրդարանի և խորհրդի կանոնակարգի առաջարկը» և դրան կից «Եվրախորհրդարանի և Խորհրդի հրահանգը, որը ներդաշնակեցված կանոններ է սահմանում քրեական դատավարության ընթացքում ապացույցներ հավաքելու նպատակով օրինական ներկայացուցիչների նշանակման վերաբերյալ»: Այս երկու օրենսդրական առաջարկները նպատակ ունեն լրացուցիչ իրավական հստակություն հաղորդել և արագացնել էլեկտրոնային ապացույցների ձեռքբերման գործընթացը՝ «ծառայություններ մատակարարները պարտավոր են արձագանքել 10 օրվա ընթացքում, իսկ արտակարգ իրավիճակների դեպքում՝ 6 ժամվա ընթացքում (Փոխադարձ իրավական օգնության ընթացակարգում նշված միջին 10 ամսվա փոխարեն)»: Այս կանոնակարգը թույլ կտա ԵՄ անդամ ցանկացած երկրի իրավապահ մարմիններին ավելի արագ ծանոթանալ էլեկտրոնային տեղեկատվությանը՝ ուղղակիորեն հարցելով այն կամ պահանջելով չտրամադրել այն ԵՄ այլ առցանց ծառայություններ մատուցողներին, եթե հանցագործության քննությունը նախատեսված է կանոնակարգով: Էլեկտրոնային տվյալները կամ տեղեկությունները կարող են ներառել տեքստեր, հաղորդագրություններ, էլ. նամակներ կամ իրավախախտին նույնականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, օրինակ՝ նրա IP հասցեն: Բացի այդ, օրենսդրական փաստաթղթերը կպարտադրեն ծառայություններ մատուցողներին «նշանակել օրինական ներկայացուցիչ Միությունում, ինչը կապահովի, որ Միությունում ծառայություններ մատուցող բոլոր մատակարարները ենթակա են նույն պարտավորություններին, նույնիսկ եթե նրանց կենտրոնական գրասենյակը գտնվում է երրորդ երկրում» (Եվրոպական հանձնաժողով, 2019թ.):

Առաջարկվող կանոնակարգը կանդրադառնա հրատապ դեպքերին և կարագացնի ԵՄ անդամ այլ պետություններում ապացույցներ ձեռք բերելու գործընթացները:

Ինչպես և Բուդապեշտի կոնվենցիայի ակնկալվող Երկրորդ լրացուցիչ արձանագրության դեպքում, էլեկտրոնային ապացույցների առաջարկի լրացուցիչ արժեքը կայանում է նրանում, որ այն հաշվի է առնում, որ նման իրավախախտումների մեծ մասն այժմ կատարվում է էլեկտրոնային հարթությունում, իսկ ապացույցներն ու տեղեկությունները երբեմն պահվում են տուժողի բնակության երկրից դուրս:

էլեկտրոնային ապացույցների առաջարկի ամերիկյան տարբերակը՝ «Ամպի մասին օրենքը» (Cloud Act), թույլ է տալիս ԱՄՆ-ի օտարերկրյա գործընկերներին ուղղակիորեն համագործակցել գործընկեր երկրների ծառայություններ մատուցողների հետ: Մինչ օրս այս շրջանակներում որպես օտարերկրյա գործընկեր որակվել է միայն Մեծ Բրիտանիան:

Ի լրումն վերը նշված գործիքների, Եվրոպական ժողովրդավարության գործողությունների առաջիկա ծրագիրը և ԵՄ Անվտանգության միության ռազմավարությունը նույնպես անդրադառնում են առցանց վնասակար և/կամ անօրինական բովանդակությանը:

Սա մեկ այլ գործիք է, որն արդեն մի քանի տարի է, ինչ գործում է, և որոշակի արդյունքներ է արձանագրել առցանց ատելության խոսքի դեմ պայքարում:

## Ատելության խոսքին առցանց հակազդելու ԵՄ վարքագծի կանոնագիրքը

2016 թվականի մայիսին Facebook-ը, Microsoft-ը, Twitter-ը և YouTube-ը Եվրոպական հանձնաժողովի հետ միասին ստորագրեցին «Ատելության խոսքին առցանց հակազդելու վարքագծի կանոնագիրքը»: Instagram-ը, Snapchat-ը և Dailymotion-ը միացել են վարքագծի կանոնագրքին 2018թ.-ին, Jeuxvideo.com-ը՝ 2019թ.-ին, իսկ TikTok-ը՝ 2020թ.-ի սեպտեմբերին:

Վարքագծի կանոնագիրքը ստորագրած երկրները պարտավորվել են դիտարկել ատելության խոսքի մասին հաղորդումներն իրենց հարթակներում և 24 ժամվա ընթացքում արձագանքել այդպիսի անօրինական բովանդակությանը: Մասնակից պետությունները ատելության խոսքը սահմանում են «Քրեական իրավունքի միջոցով ռասիզմի և այլատյացության որոշ ձևերի և դրսևորումների դեմ պայքարի մասին Խորհրդի շրջանակային որոշման հիման վրա» (Եվրոպական Միություն, 2008թ.): Սահմանումը ներառում է բռնության կամ ատելության հրապարակային հրահրումը՝ ուղղված մարդկանց խմբի կամ խմբի որոշակի անդամի դեմ՝ ռասայի, մաշկի գույնի, կրոնի, ծագման, ազգային կամ էթնիկ պատկանելության հիմքով: Վարքագծի կանոնագրքի մոնիթորինգի հինգերորդ փուլը (2019-2020թթ.) ցույց է տալիս, որ ծանուցումների 90%-ը դիտարկվում է 24 ժամվա ընթացքում, ընդ որում բովանդակության 71%-ը հեռացվում է: 2020 թվականին առցանց ատելության խոսքի ամենատարածված հիմքը սեռական կողմնորոշումն էր, որը կազմում էր հաղորդումների 33%-ը: Դա մասամբ բացատրվում է նրանով, որ «ԼԳԲՏՔԻ իրավունքները պաշտպանող կազմակերպություններն ավելի ակտիվ են եղել բովանդակության մասին ծանուցելու հարցում» (Եվրոպական հանձնաժողով, 2020c):

Նման մոնիթորինգի հիմնական թերությունը տվյալների դասակարգման և հաշվետվությունների և հեռացումների ընդհանուր թափանցիկության բացակայությունն է: Ինտերսեկցիոնալ հարձակումներն անտեսվում են, ինչը բարդացնում է զգալի ինտերսեկցիոնալ բաղադրիչ պարունակող առցանց ատելության խոսքի, որպես երևույթի, ամբողջական ըմբռնումը՝ նվազեցնելով բազմաթիվ կին օգտատերերի փորձի նշանակությունը[13]: Եվրախորհրդի «Ատելության խոսքի առցանց կառավարման մոդելներ» ուսումնասիրության մեջ Ալեքսանդր Բրաունը մատնանշում է այդպիսի մոնիթորինգի հետ կապված երկու հիմնախնդիրներ.

> Համացանցային հարթակները տեղեկացվում են մոնիթորինգի ժամանակահատվածի մասին: Ուստի պարզ չէ, թե որքանով են զեկույցներում նշվող տոկոսային փոփոխությունները համապատասխանում ատելության խոսքի հեռացման մակարդակի իրական բարելավմանը ամբողջ տարվա ընթացքում: Թե դրանք արտացոլում են համացանցային հարթակների

---

13. Amnesty International-ը, օրինակ, նշում է, որ սևամորթ կին քաղաքական գործիչները և լրագրողները 84%-ով ավելի շատ են Twitter-ում վիրավորական մեկնաբանություններ ստանալու վտանգի ենթարկվում, քան սպիտակամորթ կանայք: Allen, K., Amnesty International UK (2020), «Մեծ Բրիտանիա. սևամորթ կանանց դեմ առցանց բռնությունները «սարսափելի» են», հասանելի՝ www.amnesty.org.uk/press-releases/uk-online-abuse-against-black-women-mps-chilling:

մոնիթորինգի իրականացման հնարավորությունները՝ զգալիորեն բարելավելով հեռացումների տոկոսը միայն մոնիթորինգի ժամանակահատվածում (Եվրոպայի խորհուրդ, 2020a):

Ավելին, ըստ հեղինակի, մոնիթորինգի դասընթացներին և հանդիպումներին որպես վստահելի ազդարարներ մասնակցող կազմակերպություններին համացանցային հարթակներն առաջարկում են «գովազդային դրամաշնորհներ» (օրինակ՝ թույլ են տալիս այդ հարթակներում անվճար արշավներ իրականացնել), ինչը կասկածներ է առաջացնում նման համատեքստում այդ կազմակերպությունների անկախության, չեզոքության և թափանցիկության վերաբերյալ:

Ողջ աշխարհում թվային բռնությանը գնալով ավելի ու ավելի շատ են ուշադրություն դարձնում: «Թվային միջավայրում երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի 25-րդ ընդհանուր մեկնաբանությունը» մարդու իրավունքների մասին պայմանագրերի կողմից սպառնալիքների նոր համայնապատկերին արձագանքման թարմ օրինակներից է[14]: ԵՄ-ի մակարդակով ներկայումս առաջնահերթությունը տրվում է Ստամբուլի կոնվենցիայի վավերացմանը, սակայն նախագահ Ֆոն դեր Լայենը հայտարարել է 2021 թվականի համար մի քանի առանցքային նախաձեռնությունների մասին, որոնք կանդրադառնան կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ձևերին: Ներկայումս քննարկվում է գենդերային բռնության հատուկ ձևերի կանխարգելման և դրանց դեմ պայքարի օրենսդրական փաթեթը, ինչպես նաև առաջարկները ԵՄ հանցագործությունների ցանկում ատելության =հանցագործության և ատելության խոսքի բոլոր ձևերն ընդգրկելու մասին[15]: Կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող որոշ խմբեր նույնպես հանդես են եկել համապարփակ իրավական դաշտի և կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ հրահանգի օգտին, որը թույլ կտա երկխոսություն ապահովել գոյություն ունեցող գործիքների միջև, կճանաչի առցանց բռնությունը և հստակ կսահմանի կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տեսակները[16]:

Այժմ կուսումնասիրենք, թե որքանով են Եվրոպայի խորհրդի երկու գործիքները՝ Ստամբուլի կոնվենցիան և Բուդապեշտի կոնվենցիան, նպաստում կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հիմնախնդրի լուծմանը՝ քաղաքականության, կանխարգելման, պաշտպանության, քրեական հետապնդման և միջազգային համագործակցության միջոցով:

Եվրախորհրդի մակարդակով պայմանագրերի միջև փոխգործակցությունը համակարգված արձագանքներ մշակելու հնարավորություն է տալիս: Հաջորդ մասում ավելի մանրամասն կուսումնասիրենք այդ գործընթացը՝ սահմանելով առցանց բռնության ձևերը և դրանք համադրելով Ստամբուլի կոնվենցիայի դրույթների հետ, հնարավորության դեպքում նաև փոխլրացնելով Բուդապեշտի կոնվենցիայի նյութական դրույթներով: Կուսումնասիրվեն առցանց բռնության երեք հիմնական ձևերը՝ Ստամբուլի կոնվենցիայի 40-րդ (Սեռական հետապնդում), 34-րդ (Հետամտում) և 33-րդ (Հոգեբանական բռնություն) հոդվածներին համապատասխան՝ 1) սեռական և գենդերային առցանց հետապնդում, 2) առցանց և տեխնոլոգիական օժանդակությամբ հետամտում, և 3) առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հոգեբանական բռնության ձևերը, ներառյալ սեքսիստական ատելության խոսքը:

---

14. Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների կոնվենցիա (2021), Երեխայի իրավունքների կոմիտե, «Ընդհանուր մեկնաբանություն թիվ 25 (2021) թվային միջավայրում երեխաների իրավունքների վերաբերյալ», հասանելի՝ https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2fPPRiCAqhKb7yhsqIkirKQZLK2M58RF%2f5F0vEG%2bcAAx34gC78FwvnmZXGFUl9nJBDpKR1dfKekJxW2w9nNryRsgArkTJgKelqeZwK9WXzMkZRZd37nLN-1bFc2t:

15. Ֆոն դեր Լայեն Ու. և Շևչովիչ Մ., Եվրոպական հանձնաժողով (2020թ.), Իրավիճակը Միությունում 2020թ.–ին, «Նախագահ Դավիդ Մարիա Սասոլիին և կանցլեր Անգելա Մերկելին ուղղված մտադրությունների նամակ», հասանելի է՝ https://ec.europa.eu/info/sites/info/files/state_of_the_union_2020_letter_of_intent_en.pdf:

16. Հարցազրույց Աշա Ալենի հետ, Եվրոպական կանանց լոբբի, սեպտեմբեր 2020 թ., https://womenlobby.org/?lang=en:




# ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 33-ՐԴ, 34-ՐԴ ԵՎ 40-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԸ

Այս գլխում տրվում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տեսակների դասակարգումը՝ հիմք ընդունելով ոլորտում վերջին ուսումնասիրությունները: Գոյություն ունեն դասակարգման մի քանի մոտեցումներ, որոնք հավասարազոր պիտանի են երևույթը հասկանալու համար[17]: Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ձևերի որոշ դասակարգումների հիմքում տուժողի և իրավախախտի փոխհարաբերություններն են, մի մասը դասակարգում են՝ ըստ բռնության վարքագծային ձևերի, մյուսները՝ ըստ բռնության միջոցների: Իրավական որոշ դասակարգումներ կենտրոնանում են բռնության ՏՀՏ համատեքստի վրա և հաշվի չեն առնում գենդերային համատեքստը, կամ բռնության այս տեսակները դիտարկում են որպես անձնական կյանքի անձեռնմխելիության կամ հեղինակային իրավունքի հետ կապված իրավախախտումներ: Ստորև առաջարկվող դասակարգումը սահմանում է բռնության յուրաքանչյուր տեսակը Ստամբուլի կոնվենցիայի համապատասխան և Բուդապեշտի կոնվենցիայի կիրառելի դրույթների շրջանակներում:

Ստամբուլի կոնվենցիայի 33-րդ, 34-րդ և 40-րդ հոդվածները վերաբերում են առցանց և նոր տեխնոլոգիաների օգնությամբ իրականացվող բռնության բազմաթիվ տեսակներին: Տրվում է յուրաքանչյուր տեսակի սահմանումը՝ հղվելով Ստամբուլի կոնվենցիայի սահմանմանը: Առկայության դեպքում, ներկայացվում են նաև այլ սահմանումները: Այնուհետև, բռնության յուրաքանչյուր տեսակ մանրամասնորեն քննարկվում է և հստակեցվում օրինակով, ինչպես նաև ուսումնասիրվում են Բուդապեշտի կոնվենցիայի կիրառելի հոդվածները:

17. Տե՛ս, օրինակ՝ Եվրոպայի խորհուրդ, 2018c, Harris 2020b, Hinson et al. 2018թ.:

## Սեռական և գենդերային առցանց հետապնդում

### Ծանոթագրություն կիբերբուլիինգի մասին

Կիբերբուլինգը կիբերհետապնդման ձև է, որն առավել հաճախ ազդում է անչափահասների վրա՝ անկախ նրանց գենդերից: Այն ենթադրում է կրկնվող ագրեսիվ առցանց վարք, որի նպատակն է վախեցնել թիրախին և վնասել նրա ինքնագնահատականին կամ հեղինակությանը: Անկայուն հոգեվիճակով անհատների մոտ այն կարող է առաջացնել դեպրեսիա և նույնիսկ մղել ինքնասպանության:

Սեռական հետապնդումը Ստամբուլի կոնվենցիայի 40-րդ հոդվածում սահմանվում է որպես «սեռական բնույթի ցանկացած անցանկալի վերբալ, ոչ վերբալ կամ ֆիզիկական արարք, որը նպատակ ունի ոտնահարելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, ստորացուցիչ, նվաստացուցիչ կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելը»: Կոնվենցիայում սահմանվում է, որ սեռական հետապնդումը ենթակա է քրեական կամ օրենքով սահմանված այլ պատժի: Բացի այդ, կոնվենցիայի 46-րդ հոդվածում հաշվի են առնվում ծանրացուցիչ հանգամանքները, եթե «իրավախախտումը կատարվել է նախկին կամ ներկա ամուսնու կամ զուգընկերոջ (դրանց՝ ներպետական օրենքով սահմանված իմաստով) նկատմամբ՝ ընտանիքի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ իր իրավասությունները չարաշահած անձի կողմից» (46*ա*), «իրավախախտումը կամ հարակից իրավախախտումները կատարվել են մի քանի անգամ» (46*բ*), «իրավախախտումը կատարվել է որոշակի հանգամանքների բերումով խոցելի վիճակում հայտնված անձի նկատմամբ» (46*գ*), «իրավախախտումը կատարվել է միասին գործող երկու կամ ավելի անձանց կողմից» (46*ե*) և «իրավախախտմամբ տուժողին պատճառվել է ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնաս» (46*ը*):

Ինչ վերաբերում է այլ սահմանումներին, կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ԵՄ հիմնարար իրավունքների գործակալության ամենավերջին հետազոտությունը (2014թ.) սահմանում է առցանց սեռական հետապնդումը որպես «անպարկեշտ սեռական բնույթի նամակներ կամ SMS հաղորդագրություններ, որոնք վիրավորում են, վիրավորական կերպով սիրահետում են սոցիալական ցանցերում, օրինակ՝ Facebook-ում կամ համացանցային զրուցարաններում»: Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ 2014 թվականին Եվրամիությունում երիտասարդ կանանց 20%-ը ենթարկվել են սեռական կիբերհետապնդումների: ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող DeShame հետազոտական ծրագիրը (կենտրոնանում է անչափահասների վրա) առաջարկում է առցանց սեռական հետապնդման սպառիչ սահմանում. «անցանկալի սեռական վարք, որը կատարվում է ցանկացած թվային հարթակում» (Childnet/Save the Children/UCLan, 2019): Այն ճանաչվում է որպես սեռական բռնության ձև և ներառում է «վարքագծերի լայն շրջանակ, որոնք օգտագործում են թվային բովանդակություն (պատկերներ, տեսանյութեր, գրառումներ, հաղորդագրություններ, էջեր) տարբեր հարթակներում (մասնավոր կամ հանրային)՝ ստիպելով տուժողին իրեն զգալ վտանգված, շահագործված, հարկադրված, նվաստացած, վրդովված, սեռական կամ խտրականության ենթարկված»: Ինքնին այս սահմանումը կրկնում է Ստամբուլի կոնվենցիայի սահմանումը, ավելացնելով դրան այն տարածքները, որտեղ կարող է տեղի ունենալ նման արարքը: Ծրագրում ներգրավված հետազոտողների խումբը ներկայացնում է առցանց սեռական հետապնդման բավական հետաքրքիր դասակարգում. 1) առանց անձի համաձայնության նրա պատկերների կամ տեսանյութերի տարածում, 2) շահագործում, հարկադրանք և սպառնալիքներ, 3) սեռական բուլինգ: Այս երեք կատեգորիաները ներառում են կանանց նկատմամբ առցանց բռնության ձևերի մեծ մասը: Այդ դասակարգման հիման վրա սեռական և գենդերային առցանց հետապնդման տարբեր ձևերն ամփոփված են ստորև:

Առանց անձի համաձայնության նրա պատկերների կամ տեսանյութերի փոխանակումը կամ անպարկեշտ նյութերի տարածումը դրսևորվում է տարբեր ձևերով: Այն բռնության աճող և համատարած երևույթ է, որը տեղի է ունենում առցանց և նոր տեխնոլոգիաների օժանդակությամբ:

Պատկերների վրա հիմնված սեռական բռնության տուժողների և իրավախախտների վերաբերյալ միջազգային ուսումնասիրության մեջ հանցագործությունների համախումբը սահմանվում է որպես «առանց անձի համաձայնության նրա մերկ կամ սեռական պատկերները (լուսանկարները կամ տեսանյութերը) արտադրելը, տարածելը կամ տարածել սպառնալը՝ ներառյալ թվայնորեն փոփոխված պատկերներ, որոնցում մարդու դեմքը կամ մարմինը տեղադրվում է պոռնոգրաֆիկ լուսանկարի կամ տեսանյութի մեջ, որը հայտնի է որպես «կեղծ կամ ֆեյք պոռնոգրաֆիա» (ներառյալ «դիփֆեյքերը», երբ արհեստական ինտելեկտի միջոցով ստեղծվում են սինթետիկ պատկերներ)»: Հեղինակները պարզել են, որ «3 հարցվողներից 1-ը հայտնում է, որ ինչ-որ մեկն առանց իր համաձայնության արել է իր մերկ կամ սեռական պատկերը, 5-ից 1-ը հայտնում է, որ ինչ-որ մեկը կիսվել է իր մերկ կամ սեռական պատկերով առանց իր համաձայնության (20.9%), և 5-ից գրեթե 1-ը հայտնել է, որ ինչ-որ մեկը սպառնացել է կիսվել իր մերկ կամ սեռական պատկերով (18,7%): Ուսումնասիրությունը եզրակացնում է, որ բռնության այս ձևը «ներառում է փոխհարաբերությունների համատեքստը, վնասների, ինչպես նաև տուժողների վրա տարբեր ազդեցության բազմազանություն, և որ կանայք բախվում են պատկերի վրա հիմնված սեռական բռնության միջանձնային վնասների և վիկտիմիզացիայի հստակ եղանակների հետ, ներառյալ հետամտումը, սեռական բռնությունը և/կամ սեռական զուգընկերոջ դաժան վերաբերմունքը» (Powell et al., 2020):

### Սեռական պատկերներ/տեսանյութեր, որոնք արվել են առանց անձի համաձայնության և տարածվել են առցանց կամ թվային վուայերիզմ[18]

Բռնի վարքագծի այս ձևը ներառում է քրիփշոթեր (սեռական կամ անձնական բնույթի նկարներ, որոնք արվել են հանրային կամ մասնավոր միջավայրում առանց անձի համաձայնության և իմացության ու տարածվել են առցանց) և ափսքիրթինգ (սեռական կամ անձնական բնույթի նկարներ, որոնք արվել են տուժողի կիսաշրջազգեստի կամ զգեստի տակ, առանց նրա համաձայնության և տարածվել են առցանց): Որպես ափսքիրթինգի օրինակ ներկայացվում է Ջինա Մարտինի դեպքը՝ երիտասարդ բրիտանացի կին, ում լուսանկարել են իր կիսաշրջազգեստի տակից՝ զուգարանի հերթում փառատոնի ժամանակ: Հետագայում նա գործը ներկայացրել էր խորհրդարան, և այժմ Մեծ Բրիտանիայում ափսքիրթինգը քրեական հանցագործություն է՝ հանցագործներին սպառնում է մինչև երկու տարի ազատազրկում19:

### Սեռական պատկերներ/տեսանյութեր, որոնք արվել են համաձայնությամբ, սակայն տարածվել են առանց համաձայնության[20]

Առանց տուժողի համաձայնության նրա սեռական պատկերների և տեսանյութերի տարածումը պատկերի վրա հիմնված սեռական բռնություն է (McGlynn, Rackley and Houghton, 2017թ.): Պատկերի վրա հիմնված սեռական բռնությունն այլ կերպ կոչվում է պատկերի վրա հիմնված սեռական շահագործում (Powell and Henry, 2016թ.), կամ առանց անձի համաձայնության պատկերների

18. Վուայերիզմը սեքսուալ հաճույք ստանալու պրակտիկա է՝ դիտելով ուրիշներին, երբ նրանք մերկ են կամ կատարում են սեռական գործողություններ:

19. Միացյալ Թագավորության Արդարադատության նախարարություն (2019), «Ափսքիրթինգ. ճանաչեք ձեր իրավունքները», հասանելի՝ www.gov.uk/government/news/upskirting-know-your-rights:

20. Պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը առաջին հավելվածի կոնկրետ պայմաններով քննարկման առարկա է (տե՛ս Հավելված 1):

կամ տեսանյութերի փոխանակում, կամ ինտիմ բնույթի չհամաձայնեցված պատկեր (NCII[21]), կամ առանց համաձայնության պոռնոգրաֆիա (NCP[22], Citron and Franks, 2014) կամ «վրեժխնդրության պոռնոգրաֆիա»: Շատ գիտնականներ համարում են, որ անհրաժեշտ է վերանայել մեդիայի կողմից օգտագործվող «վրեժխնդրության պոռնոգրաֆիա» եզրույթը, քանի որ այն ավելի շուտ բնորոշում է իրավախախտի փորձը, այլ ոչ թե տուժողի նկատմամբ անվերջ բռնությունը:

Իրավախախտը (նախկին կամ ներկայիս զուգընկերը, ընկերը, բարեկամը, ծանոթը կամ անծանոթը) տուժողի հետ հարաբերությունների ընթացքում ձեռք է բերում պատկերներ կամ տեսանյութեր, ներխուժում է տուժողի համակարգչի, սոցիալական ցանցերի հաշիվների կամ հեռախոսի մեջ և գողանում դրանք այնտեղից: Լուսանկարները/տեսանյութերը այնուհետև տարածվում են իրավախախտի կողմից համացանցում, հետևաբար, նաև՝ բազմաթիվ երկրորդական իրավախախտների կողմից, երբեմն՝ հազարավոր, երբեմն՝ տուժողի հասցեի և կոնտակտային տվյալների մանրամասներով, ինչպես նաև նրանց ընտանիքի կամ գործատուի վերաբերյալ տվյալներով, ինչը հայտնի է որպես «դոքսինգ»:

### Դիփֆեյքեր

Դիփֆեյքերն ալգորիթմների և մեքենայական ուսուցման (deep learning) միջոցով տեսահոլովակում մի դեմքը մյուսով թվայնորեն փոխարինելու և ձայնը մանիպուլյացնելու գործընթացի արդյունք են՝ մեկ այլ անձի բեմադրման պատրանք ստեղծելու նպատակով (Langlais-Fontaine, 2020թ.): Դիփֆեյքերը ներառված չեն DeShame ծրագրի կողմից առաջարկված դասակարգման շրջանակում, սակայն Փաուելը և մյուսները (2020թ.) պատկերների վրա հիմնված սեռական բռնության իրենց միջազգային ուսումնասիրության մեջ դիփֆեյքերը դասում են առցանց սեռական հետապնդումներին:

Համաձայն հոլանդական Sensity ընկերության կողմից պատրաստված զեկույցի (Ajder et al., 2019թ.), վերլուծված դիփֆեյք տեսանյութերի 96%-ը պոռնոգրաֆիկ են.

> Դիփֆեյք պոռնոգրաֆիան թիրախավորում և վնասում է բացառապես կանանց: Իսկ YouTube-ում վերլուծված ոչ պոռնոգրաֆիկ դիփֆեյք տեսանյութերը մեծամասամբ պարունակում էին տղամարդկանց կերպարներ: ... Դիփֆեյք պոռնոգրաֆիայի էկոհամակարգը գրեթե ամբողջությամբ հիմնվում է հատուկ դիփֆեյք պոռնոգրաֆիայի կայքերի վրա, որոնք տեղադրել են [նրանց կողմից] հայտնաբերված 13254 տեսանյութեր: Իսկ առանց դիփֆեյքերի պոռնոգրաֆիկ կայքերում տեղադրված են ընդամենը 802 տեսանյութեր:

Թիրախավորված կանանց մեծ մասը հայտնի մարդիկ են՝ կին դերասաններ և երգչուհիներ, որոնք կազմում են տուժողների 81%-ը, մինչդեռ պոռնոգրաֆիկ դիփֆեյքերի մնացած տուժողները հետազոտող Քլեր Լենգլե-Ֆոնտենի մեկնաբանությամբ պատկերի վրա հիմնված սեռական բռնության զոհ են դառնում (նախկին) զուգընկերոջ հետ հարաբերությունների համատեքստում (Langlais-Fontaine, 2020թ.):

### Կիբերֆլեշինգ

Կիբերֆլեշինգը չպահանջված և պարտադրված սեռական նկարներ ուղարկելն է՝ ծանոթությունների հավելվածների, հաղորդագրությունների հավելվածների, տեքստերի կամ Airdrop-ի (Bluetooth-ի և Wi-Fi-ի խառնուրդ, որը ստեղծում է երկկողմանի ալիք 10 մետրից պակաս հեռավորության վրա գտնվող հեռախոսների միջև) կամ Bluetooth-ի միջոցով: Այս վարքագիծը դրսևորվում է սոցիալական ցանցերում, հաղորդագրությունների փոխանակման հավելվածներում, ժամադրության հավելվածներում, իսկ Airdrop/Bluetooth-ի դեպքում, օրինակ՝ հասարակական տրանսպոր-

---

21. NCII - non-consensual intimate image, ԱՀԻՊ - առանց անձի համաձայնության ինտիմ պատկեր: Սահմանվում է նման ձևով Facebook-ի կողմից (տարեթիվը նշված չէ):

22. NCP - non-consensual pornography, ԱՀՊ - առանձ համաձայնության պոռնոգրաֆիա:

տում: Սեռական հետապնդման այս հատուկ ձևը, ինչպես անծանոթների, այնպես էլ ծանոթների կողմից, կարող է փոխկապված լինել ընտանեկան բռնության համատեքստի հետ կամ փողոցում տեղի ունեցող հետապնդման, էքսհիբիցիոնիզմի (և ֆլեշինգի) և անծանոթների կամ հասակակիցների կողմից սեռական հետապնդման հետ (BBC, 2019a):

## Շահագործում, հարկադրանք և սպառնալիքներ պարունակող առցանց սեռական հետապնդում

Առցանց սեռական հետապնդման երկրորդ կատեգորիան ավելացնում է կանանց և աղջիկների շահագործումը, հարկադրանքը և հետապնդման սպառնալիքները: Առցանց սեռական հետապնդումների այս երկրորդ կատեգորիան պարունակում է ստորև թվարկված բռնության տարբեր ձևերը:

### Հարկադրված սեքսթինգ

Տուժողի նկատմամբ առցանց հետապնդումը կամ ճնշումը՝ իր սեռական պատկերները փոխանակելու կամ առցանց (կամ անցանց) սեռական վարքագիծ դրսևորելու նպատակով կոչվում է հարկադրված սեքսթինգ:

Վերջին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ.

> երիտասարդները սեքսթինգ են անում զուգընկերների կամ պոտենցիալ զուգընկերների ճնշման պատճառով (Döring, 2012, Lippman & Campbell, 2014): Ռոմանտիկ հարաբերությունների համատեքստում ճնշումը հաճախ գործադրվում է այն իրավիճակներում, երբ զուգընկերներից մեկը պահանջում է, որպեսզի տուժող զուգընկերն ուղարկի սեռական բնույթի բովանդակություն, կամ մասնակցի նման բովանդակության փոխանակմանը (Döring, 2012թ., Lippman & Campbell, 2014թ.):
>
> Որոշ աղջիկներ համաձայնում են «անցանկալի» սեքսթինգին, քանի որ կարծում են, որ դա «սեռական զիջումների» տեսակ է կամ «պարտադիր գին», որը նրանք պետք է վճարեն ցանկալի հարաբերությունները պահպանելու համար (Drouin & Tobin; 2014թ., Lippman & Campbell, 2014թ., Renfrow & Rollo, 2014թ.): Սովորաբար, աղջիկներն ավելի շատ են ենթարկվում սեքսթինգի ճնշման, քան տղաները (Lippman & Campbell, 2014թ., Ringroseet al., 2012թ., Walker et al., 2013թ., Walgrave et al., 2013թ., Dodaj և Sesar 2020թ.):

Հարկադիր սեքսթինգն ընտանեկան բռնության համատեքստում կարող է վերածվել բռնի սեքսթինգի, ինչպես նաև վերածվել պատկերի վրա հիմնված սեռական բռնության կամ սեռավարության:

### Սեռավարություն

Սեռավարությունը կամ վեբ-տեսախցիկի շանտաժն առցանց բռնության տարածվող տեսակ է, որը ենթադրում է սեռական բովանդակության (պատկերներ, տեսանյութեր, դիփֆեյքեր, սեռական բամբասանքներ) հրապարակման սպառնալիք՝ անձին շանտաժի ենթարկելու կամ հարկադրելու ավելի շատ սեռական բովանդակություն կամ գումար տրամադրել, երբեմն՝ երկուսը միասին:

Ռոբերտա Լիգգեթ Օ՛Մալլին և Կարեն Մ. Հոլթն առանձնացնում են սեռավարության չորս տեսակ՝ անչափահասների կիբերսեռավարություն, կիբերհանցագործություն- կիբերսեռավարություն, սեռական բռնությամբ կիբերսեռավարություն և անդրազգային հանցավոր կիբերսեռավարություն (Liggett O'Malley, 2020թ.): Երբ տուժողները երեխաներ են, Եվրոպոլը խորհուրդ է տալիս օգտագործել «առցանց սեռական հարկադրանք և երեխաների շորթում» եզրույթը, քանի որ սեռավարություն եզրույթը «չի ենթադրում, որ խնդրահարույց արարքը ներառում է երեխայի նկատմամբ սեռական բռնություն և նրա շահագործում, որը կարող է ծայրահեղ ծանր հետևանքներ ունենալ տուժողի համար»:

Ֆրանսիայում այդ իրավախախտումը սանկցիավորվել է 2014 թվականից (2018թ.) «Սեռական և սեքսիստական բռնության մասին» օրենքի 11-րդ հոդվածով (Loi no. 2018-703 du 3 août 2018 renforçant la lutte contre les violences sexuelles et sexistes), որը սահմանում է պատիժ առցանց սեռական հետապնդման համար, իսկ սեռավարության համար՝ 312-1 հոդվածով: Շվեյցարիայում այդ հանցագործությունը առանձին սահմանված չէ, և սեռավարությունը կարող է հետապնդվել ՔՕ 156-րդ (շորթում և շանտաժ), 174-րդ (զրպարտություն), 179 (անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտում) կամ 197-րդ (պոռնոգրաֆիա) հոդվածների[23] համաձայն՝ հաճախ չշեշտելով հանցագործության գենդերային բնույթը:

Ստամբուլի կոնվենցիայի շրջանակներում կանանց և աղջիկների նկատմամբ սեռական բռնությունը կարելի է դասակարգել որպես առցանց սեռական հետապնդման ձև, որը սահմանվում է որպես «սեռական բնույթի անցանկալի վերբալ, ոչ վերբալ կամ ֆիզիկական ցանկացած արարք, որը նպատակ ունի ոտնահարելու անձի արժանապատվությունը կամ հանգեցնում է դրան, մասնավորապես՝ ճնշող, թշնամական, ստորացուցիչ, նվաստացուցիչ կամ վիրավորական մթնոլորտ ստեղծելու միջոցով», հետևյալ հնարավոր ծանրացուցիչ հանգամանքներով՝ «հանցագործությունը կատարվել է նախկին կամ ներկա ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով, ընտանիքի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը չարաշահած անձի կողմից» կամ «եթե հանցագործությունը տուժողին պատճառել է ծանր ֆիզիկական կամ հոգեբանական վնաս»:

### Բռնաբարության սպառնալիքներ

Սեռական բռնության առցանց սպառնալիքները, ինչպիսիք են բռնաբարության սպառնալիքները, որոնք ուղղված են տուժողին կամ նրա հարազատներին, ներառյալ նրա երեխաներին, ընտանիքի անդամներին, ընկերներին և այլն, կանանց նկատմամբ առցանց բռնության ամենատարածված ձևերից են: Համաձայն Amnesty International-ի կողմից հրապարակված «Թունավոր Twitter» զեկույցի՝ «Կանանց նկատմամբ բռնության առցանց սպառնալիքները հաճախ սեռականացվում են և ներառում են հատուկ հղումներ կանանց մարմնին: Բռնության և ոտնձգությունների նպատակն է կանանց համար թշնամական առցանց միջավայր ստեղծել՝ նրանց խայտառակելու, վախեցնելու, նվաստացնելու, նսեմացնելու կամ լռեցնելու համար» (Amnesty International, 2018թ.): Զեկույցում Amnesty-ն պարզել է, որ հարցվածների 25%-ը, որոնք բոլորն ակտիվ են Twitter-ում, ստացել են սպառնալիքներ, այդ թվում՝ սեռական բռնության, ֆիզիկական ցավի պատճառման, ինքնասպանության դրդման, իրենց և իրենց ընտանիքի անդամների մահվան վերաբերյալ: Այդ սպառնալիքները հաճախ համակցվում են ատելության խոսքի այլ ձևերի հետ՝ հիմնված տուժողի ենթադրյալ ինքնության վրա:

### Սեռականացված/գենդերային դոքսինգ

Ինչպես դոքսինգի այլ ձևերի պարագայում, այստեղ նույնպես անձնական տեղեկատվությունն առանց տուժողի համաձայնության տարածվում է առցանց՝ առաջացնելով սեռական հետապնդում: Ֆրանսիայում դոքսինգ համարվող պատկերների վրա հիմնված սեռական բռնության դեպքերը Covid-19-ի արգելափակումների ժամանակ բազմապատկվել են՝ Snapchat-ի կամ Telegram-ի նոր տիպի հաշիվների ստեղծման հետևանքով, որոնք կոչվում են «ficha» («afficher» բառից՝ ծաղրում հասարակության մեջ) (Khouiel/Vice, 2020թ.): Այդ տեղական հաշիվները հրապարակում են երիտասարդ կանանց, հաճախ անչափահաս, մերկ պատկերները՝ բացահայտելով և՛ նրանց ինքնությունը, և՛ կոնտակտային տվյալները՝ համայնքում սեռական բռնության ենթարկողների ամբոխն ուղղորդելով դեպի նրանց: Ficha-ն քրեականացվում է որպես առանց տուժողի համաձայնություն

---

23. Շվեյցարիայի քրեական օրենսգիրք, հասանելի՝ www.admin.ch/opc/fr/classified-compilation/19370083/index.html#a156:

նրա պատկերների տարածում, իսկ հանցագործներին սպառնում է մինչև երկու տարի ազատազրկում և 60 000 եվրո տուգանք:

## Սեռականացված բուլինգ

Առցանց սեռական հետապնդման երրորդ ենթախումբը ներառում է տուժողի ենթադրյալ սեռական վարքի մասին բամբասանքների տարածումը, տուժողի գրառումների կամ լուսանկարների տակ սեռական բնույթի մեկնաբանությունների տեղադրումը, տուժողի ինքնության գողությունը և նրա անունից սեռական բովանդակության տարածումը կամ սեռական հետապնդումը, դրանով ազդելով նրա հեղինակության և/կամ կյանքի վրա, տուժողի «աութինգը» առանց նրա համաձայնության կամ «դեդնեյմինգը» (տրանս անձի ծննդականում նշված անվան օգտագործմամբ)՝ վախեցնելու, սպառնալու, մարմինը խայտառակելու նպատակով:

Ինչպես տեսնում ենք, առցանց սեռական հետապնդումը դրսևորվում է բազմաթիվ ձևերով, ընդ որում որոշ ձևեր համընկնում են սեքսիստական և գենդերային ատելության խոսքի կամ ատելության խոսքի և հետապնդումների այլ տեսակների հետ, օրինակ՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության վրա հիմնված հետապնդման ձևերը: Բռնության այս տեսակներից ոչ բոլորն են համարվում քրեական հանցագործություն: Ավելին՝ դրանցից շատերը նորմալ են համարվում, իսկ դրանց դեմ պայքարը թողնված է տուժողի վրա:

## Բուդապեշտի կոնվենցիայի կիրառելի դրույթները

Ստամբուլի կոնվենցիայի՝ վերը թվարկված սեռական հետապնդման և ծանրացուցիչ հանգամանքների վերաբերյալ հոդվածները կարելի է հարստացնել և պարզաբանել Բուդապեշտի կոնվենցիայի մի շարք դրույթներով: Ստորև բերված ցանկը սպառիչ չէ և ավելի շատ պետք է ընկալվի որպես Բուդապեշտի կոնվենցիայի կարևոր դրույթները  առցանց սեռական հետապնդման հետ համադրելու օրինակ:

### Բուդապեշտի կոնվենցիայի 2-րդ հոդված (Անօրեն կերպով մուտք)

> Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներպետական օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու՝ միտումնավոր և անօրեն կերպով, ամբողջությամբ կամ մասամբ թվային համակարգ մուտք գործելը: Մասնակից պետությունը կարող է պահանջել, որ հանցագործությունը կատարված լինի՝ խախտելով անվտանգության միջոցները՝ համակարգչային տվյալների ձեռքբերման նպատակով կամ այլ անազնիվ նպատակով, կամ կապված թվային համակարգի հետ, որը միացված է մեկ ուրիշ համակարգի:

Այս դրույթը նկարագրում է տուժողի համակարգ անօրեն կերպով մուտք գործելը և տարածվում է կիբերսպառնալիքների, կիբերհետամտումների, սեռավարության և անձի անձեռնմխելիության խախտման այլ ձևերի վրա, որոնք համարվում են կիբերբռնություն: Երրորդ կողմի համակարգ հնարավոր է անօրեն կերպով մուտք գործել, այն որպես հաղորդագրությունների կամ հարձակումների հարթակ օգտագործելու նպատակով, անձնական կամ սեռական բնույթի տվյալների գողության համար:

### Բուդապեշտի կոնվենցիայի 3-րդ հոդված (Տվյալների անօրեն կերպով որսում)

> Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներպետական օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու՝ միտումնավոր և անօրեն կերպով տեխնիկական միջոցներով համակարգիչ մտնող, համակարգչից դուրս եկող և համակարգչի մեջ

գտնվող տվյալների գաղտնի որսալը, ոչ հրապարակավ փոխանցելը, ներառյալ թվային համակարգից էլեկտրամագնիսական արտահոսքը, որը փոխանցում է նման համակարգչային տվյալներ: Մասնակից պետությունը կարող է պահանջել, որ հանցագործությունը կատարված լինի անազնիվ նպատակներով կամ այնպիսի թվային համակարգի հետ, որը միացված է մեկ ուրիշ համակարգի:

Այս դրույթը սահմանում է տվյալների անօրեն կերպով որսումը[24]: Այն վերաբերում է տուժողի անձնական տվյալների (ոչ հրապարակային) բովանդակության ունկնդրմանը, մոնիթորինգին կամ վերահսկմանը, տեխնիկական միջոցներով տուժողի անձնական տվյալների ձեռք բերմանը կամ ձայնագրմանը (ոչ հրապարակային): Մուտքային կամ ելքային փոխանցվող տվյալները կարող են անօրեն կերպով որսվել՝ խոչընդոտելու իրավապահների հետ շփումը կամ տուժողին ցույց տալու, որ հարձակվողը տեղյակ է այն ամենի մասին, ինչ անում է տուժողը: Փոխանցվող տվյալները կարող են նաև որսվել՝ խախտելով անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը: Օրինակ՝ պատկերի վրա հիմնված սեռական բռնության և հետապնդման դեպքում:

**Բուդապեշտի կոնվենցիայի 8-րդ հոդված (Համակարգչին առնչվող խարդախություն)**

Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու միտումնավոր և անօրեն կերպով մեկ այլ անձի սեփականության կորստի հանգեցնելը.

ա) համակարգչային տվյալների ցանկացած մուտք, փոփոխություն, ոչնչացում կամ արգելափակում,

բ) թվային համակարգի գործառման ցանկացած աղավաղում, խարդախ և անազնիվ մտադրությամբ, իր կամ մեկ ուրիշ անձի համար տնտեսական շահ անօրեն հայթայթելու նպատակով:

Սեռավարության որոշ ձևեր կարելի է ընկալել որպես համակարգչային խարդախություն, քանի որ հանցագործները կարող են կորզել անձնական նկարներ կամ սպառնալ դա անել՝ որպես փրկագին տուժողից գումար ստանալու համար՝ երբեմն օգտագործելով հաքերային ռազմավարություն (CBC 2017):

**Բուդապեշտի կոնվենցիայի 10-րդ հոդված (Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների խախտման վերաբերյալ հանցագործությունները)**

1) Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու հեղինակային իրավունքի խախտումը, ... բացառությամբ այդպիսի կոնվենցիաներով վերապահված բարոյական իրավունքների, երբ այդպիսի գործողությունները կատարվում են դիտավորությամբ, առևտրային մասշտաբներով և թվային համակարգի միջոցով:

Կոնվենցիայի բացատրական զեկույցը լրացուցիչ սահմանում է, թե որ դեպքերում է քրեականացվում հեղինակային իրավունքի խախտումը. «Յուրաքանչյուր Մասնակից պետություն պարտավոր է քրեականացնել հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների դիտավորյալ խախտումները, որոնք երբեմն անվանում են հարևան իրավունքներ, որոնք բխում են հոդվածում թվարկված

---

24. «Առանց իրավունքի» հասկացությունը Բուդապեշտի Կոնվենցիայի բացատրական զեկույցում սահմանվում է հետևյալ կերպ. «Չլիազորված վարքագիծ (լինի դա օրենսդրական, գործադիր, վարչական, դատական, պայմանագրային կամ կոնսենսուալ), կամ վարքագիծ, որն այլ կերպ չի երաշխավորված սահմանված իրավական պաշտպանությամբ, արդարացումներով, հիմնավորումներով կամ ներպետական օրենսդրության համապատասխան սկզբունքներով»: Տե՛ս Եվրոպայի խորհուրդ (2001b):

համաձայնագրերից, երբ այդպիսի խախտումները կատարվել են համակարգչի միջոցով և առևտրային մասշտաբով»:

Այն երկրներում, որտեղ չկա պատկերների կիրառմամբ կատարվող սեռական բռնության մասին օրենք, հեղինակային իրավունքի մասին օրենքները կարող են լավագույն հասանելի գործիքը լինել տուժողների համար (O'Connell and Bakina, 2020թ.):

## Առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հետամտում

Ստամբուլի կոնվենցիայի 34-րդ հոդվածում հետամտումը սահմանվում է որպես «մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ շարունակաբար կատարվող սպառնալից գործողություններ, որոնք այդ անձի մոտ վախ են հարուցում սեփական անվտանգության համար»: Կոնվենցիան Մասնակից պետություններին կոչ է անում քրեականացնել հետամտումը: Կոնվենցիայի բացատրական զեկույցն ավելի է մանրամասնում հետամտում հասկացությունը՝ հանցագործության սահմանման մեջ ներառելով ՏՀՏ միջոցները.

> Սպառնացող վարքագիծը ներառում է մեկ այլ անձին շարունակաբար հետևելը, մեկ այլ անձի հետ անցանկալի հաղորդակցությունը կամ մեկ այլ անձին տեղեկացնելը, որ իրեն հետևում են: Այն ենթադրում է տուժողին ֆիզիկապես հետապնդելը՝ աշխատավայրում, մարզական կամ կրթական հաստատություններում, ինչպես նաև տուժողին վիրտուալ աշխարհում (զրուցարաններում, սոցիալական ցանցերում և այլն) հետևելը: Անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավվելը ենթադրում է տուժողի հետ ակտիվ կապի որևէ հնարավորության որոնումը՝ կապի բոլոր հասանելի միջոցների, ներառյալ՝ ժամանակակից հաղորդակցման գործիքների և ՏՀՏ-ների միջոցով (Եվրոպայի խորհուրդ, 2011b):

Առցանց սպառնալիքները (սեռական, տնտեսական, ֆիզիկական կամ հոգեբանական), տուժողին հեղինակազրկելու փորձը, անձնական տեղեկություններ հավաքելու նպատակով տուժողի առցանց գործողություններին հետևելը, ինքնությունը գողանալը, տուժողի անունից ներկայանալով սեռական գործողությունների սադրելը և տուժողին մեկուսացնելու նպատակով հետապնդումների արշավ կազմակերպելը թվային ոլորտում հետամտման օրինակներ են: Համացանցային տարբեր հարթակներում կամ թվային գործիքների կիրառմամբ տուժողին վերահսկելը կամ լրտեսելը հաճախ իրավախախտների կողմից կիրառվում են որպես անձի անձեռնմխելիությունը խախտելու ռազմավարություն: Կիբերհետամտման մասին Գերմանիայում անցկացված ծավալուն ուսումնասիրության հեղինակները եկել են այն եզրակացության, որ տուժողների մեծ մասը կանայք են, իսկ իրավախախտների մեծ մասը՝ տղամարդիկ, և որ կիբերհետամտումը հիմնականում տեղի է ունենում ընտանեկան բռնության համատեքստում (Dreßing et al., 2014թ.): Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ԵՄ Հիմնարար իրավունքների գործակալության ամենավերջին հարցման համաձայն՝ ԵՄ կանանց 14%-ը 15 տարեկանից սկսած ենթարկվել են հետամտման՝ վիրավորական կամ սպառնալից հաղորդակցության տեսքով (հետամտում էլեկտրոնային փոստի, տեքստային հաղորդագրությունների կամ համացանցի միջոցով): Հատկապես թիրախավորվում են երիտասարդ կանայք. ԵՄ-ում 18-ից 29 տարեկան բոլոր կանանց 4%-ը հարցազրույցին նախորդող 12 ամիսների ընթացքում ենթարկվել են կիբերհետամտման՝ 60 և ավելի տարեկան կանանց 0.3%-ի համեմատ (FRA 2014): Այս թվերը կիամալրվեն 2020-ից 2022 թվականներին կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ Հիմնարար իրավունքների գործակալության առաջիկա ուսումնասիրության տվյալներով:

Women's Aid-ի կողմից պատվիրված վերջին հաշվետվությունը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության տուժողների 45%-ը հայտնել են իրենց հարաբերությունների ընթացքում առցանց բռնության ենթարկվելու մասին, իսկ 48%-ը հայտնել են, որ հետապնդման կամ բռնության են ենթարկվել

իրենց նախկին զուգընկերոջ կողմից, նրան լքելուց հետո: Մոտ 38%-ը հայտնել են առցանց հետամտման մասին, զուգընկերոջը լքելուց հետո, իսկ 75%-ը մտահոգություն են հայտնել, որ ոստիկանությունը չգիտի, թե ինչպես լավագույնս արձագանքել առցանց բռնությանը կամ հետապնդմանը: Այդ թիվը ներառում է այն 12% տուժողներին, որոնք բռնության մասին հաղորդել են ոստիկանությանը, սակայն աջակցություն չեն ստացել (Laxton/Women's Aid, 2014թ.):

Առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հետամտման ընդհանուր նպատակը տուժողի մոտ վախ և անօգնականություն առաջացնելն է: Դա արվում է իշխանության դրսևորման և վերահսկողության նպատակով.

> Բռնության ենթարկված անձինք պատմել են, որ սարքերը, որոնք ակտիվացրել էին իրենց ներկայիս կամ նախկին զուգընկերները ունեին տեղորոշման հավելվածներ և, որ երեխաների հայրերը նրանց հետ հեռախոսով զրուցելիս հորդորել են ակտիվացնել տեսանկարահանման հավելվածը: Այդ ամենը կարող է թվալ անմեղ գործողություններ: Սակայն իրականում դրանք հսկողություն իրականացնելու միջոցներ են՝ հետամտելու և գտնելու կնոջը կամ իմանալու, թե որտեղ է գտնվում նրա ներկա ապաստարանը կամ բնակարանը: Այսպիսով՝ Վուդլոկը և ես առաջարկում ենք, որ «թվային հարկադրական հսկողություն» հասկացությունը և դրա օգտագործման շրջանակը վերաբերի «սարքերի և թվային մեդիայի օգտագործմանը՝ զուգընկերներին կամ նախկին զուգընկերներին և երեխաներին հետամտելու, հետապնդելու, սպառնալու և բռնության ենթարկելու համար» (Salter et al., 2018թ.):

Դոկտոր Բրիջիթ Հարիսը, «կենցաղային և ընտանեկան բռնության տեխնոլոգիա» (ԿԸԲՏ) հասկացությունը ներկայացնելիս, նկարագրում է իրավախախտներին, որոնք օգտագործում են «ֆիզիկական սարքեր ... վիրտուալ կամ էլեկտրոնային հաշիվներ ... և ծրագրային ապահովում կամ հարթակներ ...»՝ բռնության ենթարկելու և հարկադրելու տուժողներին, այդ թվում՝ «ներկա կամ նախկին սեռական զուգընկերներին, նրանց երեխաներին, հաջորդ սեռական զուգընկերներին, ընկերներին և ընտանիքի անդամներին» (Harris, 2020a): Հեղինակը նշում է, որ «ԿԸԲՏ-ն համապարփակ հասկացություն է, որը ներառում է մի շարք վարքագծեր, այդ թվում՝ տեխնոլոգիայի օգտագործումը բռնության այլ ձևերի համար (օրինակ՝ սեռական և ֆինանսական բռնության) և ավանդական (ֆիզիկական) հետամտմանը նպաստելու համար»:

Որոշ իրավախախտների նպատակը սոցիալական ցանցերում վերահսկելը կամ լրտեսելն է կամ հաղորդագրություններ ուղարկելը՝ կեղծ հաշիվների միջոցով և «ընկերանալով» կամ հետևելով իրենց թիրախին անանուն, կամ նույնիսկ խնդրելով նրանց տրամադրել իրենց գաղտնաբառերը: Ընտանեկան բռնության համատեքստում նոր տեխնոլոգիաների միջոցով հետամտման վերաբերյալ վիճակագրական ուսումնասիրության ժամանակ հեղինակները պարզել են, որ տուժողների 17%-ի նկատմամբ բռնություն գործադրողը հարցրել է իրենց գաղտնաբառը (Woodlock, 2017թ.): Մյուսներն ապավինում են «տեխնոլոգիապես ավելի կատարելագործված» լուծումների՝ վախեցնելու, սպառնալու և բռնության ենթարկելու իրենց թիրախին, տե՛ս հաջորդ բաժնում: Սակայն տեխնոլոգիապես ոչ կատարելագործված (low-tech) միջոցները, ինչպիսիք են սոցիալական ցանցերում կամ հաղորդագրությունների հավելվածներում հետամտումը, պարտադիր չէ, որ պակաս վնասակար լինեն, քան բարձր տեխնոլոգիական միջոցները.

> Բռնի և մոլուցքային կապը ու տեխնոլոգիայի միջոցով հետամտումը բացահայտվել է որպես զարգացող միտում սպանության ելքով ընտանեկան բռնության պարագայում: ... Վերջերս NSW Death Review թիմը (2017թ., 134) հրապարակել է, որ դեպքերի 39%-ում բռնարարները նախքան վերջնական հարձակումը հետամտել են տուժողներին, նշելով, որ դեպքերի ավելի քան 50%-ում բռնարարներն օգտվել են տեխնոլոգիաներից՝ տուժողին հետամտելու համար, օրինակ՝ անդադար տեքստային հաղորդագրություններ ուղարկելով, տուժողի հեռախոսը ստուգելով և տուժողի հետ շփվելով սոցիալական ցանցերում/ծանոթությունների կայքերում կեղծ անվան տակ (տե՛ս նույն տեղը):

Բացի այդ, սոցիալական մեդիայի հնարավորությունները, որոնք առօրյայում  անվնաս են թվում, կարող են վերածվել բռնության միջոցների.

> Համացանցային հարթակները, սովորաբար, ենթադրում են, որ հնարավոր շփումները ընկերական են, եթե ոչ չեզոք, իսկ շփումների ընդլայնումը՝ դրական: Facebook-ի «Մարդիկ, որոնց կարող եք ծանոթ լինել», Twitter-ի՝ «Ում հետևել» և Instagram-ի՝ «Ձեզ առաջարկվող» ցանկերի միջոցով խրախուսում են օգտատերերին ընկերանալ կամ հետևել ուրիշներին՝ հիմնվելով փոխադարձ ընդհանուր հետաքրքրությունների կամ կապերի վրա: Դա կարող է լինել սոցիալական ցանցի օգտակար գործառույթ, սակայն կանանց համար կան անցանկալի հետևանքներ և ավելի լայն սոցիալական շրջանակներում բռնության ենթարկվելու վտանգներ: Բիվենսը (2015թ.) փաստագրել է, թե ինչպես են նման գործիքները մեխանիկորեն փոխկապակցել սեռական բռնության զոհերին իրավախախտների հետ, և դրա պատճառով կանանց մոտ առաջացող դիսթրեսը: Նմանապես, ընտանեկան բռնության զոհ դարձած կանայք նկարագրել են այն դեպքերը, երբ նրանց առաջարկվել է կապ հաստատել բռնարարի սոցիալական ցանցի մասնակից անձանց հետ, ովքեր աջակցել են կամ միացել են բռնարարին՝ վնաս պատճառելու համար (Harris and Woodlock, տպագրվում է): Եվ, անշուշտ, տեխնոլոգիան կարող է օգնել իրավախախտին ցանցի ձևավորման հարցում : ԴեՔեսերեդին և Շվարցը 1993թ. աշխատությունում բացատրել են, որ հայրապետական ավանդույթներով հասարակություններում բռնություն գործադրողները կարող են ունենալ համախոհներ, ովքեր զարգացնում, կիսում և ամրապնդում են բռնությունն արդարացնող և արմատավորող գաղափարախոսություն ու արժեքներ: Համախոհների աջակցության այդ ցանցերը ժամանակին գործում էին միայն իրական աշխարհում, բայց այժմ դրանց տարածմանը նպաստում են տեխնոլոգիաները (տե՛ս նույն տեղը):

Ստորև ներկայացված են իրավախախտների կողմից կանանց առցանց հետամտելու, հետևելու և վերահսկելու համար օգտագործվող որոշ տեխնոլոգիաներ:

### Լրտեսող/հետամտող ծրագրերը, GPS-ի կամ աշխարհագրական տեղորոշման միջոցով տուժողին հետևելը

Ընտանեկան բռնության ենթարկված կանանց համար ԱՄՆ-ում գործող 70 ապաստարաններում հարցման արդյունքում Ազգային հանրային ռադիոն (NPR) բացահայտել է, որ «Ապաստարանների 85 տոկոսում նշել են, որ իրենք աշխատում են անմիջապես այն տուժողների հետ, որոնց բռնարարները հետևել են GPS-ի միջոցով ... Մի քանի ապաստարաններում նշվել է, որ ծնողների բաժանման ժամանակ բռնարարներն իրենց երեխաներին iPhone-ներ են նվիրում՝ մորը գտնելու համար» (NPR, 2014թ.):

Ընտանեկան բռնության համատեքստում կիբերբռնության տարածվածության վերաբերյալ Ֆրանսիայում անցկացված վերջին ուսումնասիրության հեղինակները պարզել են, որ «կիբերհսկողությունը» և «կիբերհետապնդումը» առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ամենատարածված ձևերն են[25]: 10 հարցվողներից մոտ վեց-յոթը ենթարկվել են այդպիսի բռնության: Հարցվածների 29%-ը զգում էին, որ իրենց (նախկին) զուգընկերը հետևել է իրենց GPS-ի կամ լրտեսող ծրագրերի միջոցով (Centre Hubertine Auclert 2018): Բացի այդ, տուժողների նախկին զուգընկերների 41%-ը իրենց նվաստացնելու, հետապնդելու կամ վերահսկելու համար փորձել են կապվել նրանց հետ՝ իրենց երեխաների հեռախոսի միջոցով (տե՛ս նույն տեղը):

Լրտեսող ծրագրերը հավելվածներ են կամ ծրագրային ապահովում, որոնք օգտագործվում են հետևելու համար «վերածելով ուրիշի սմարթֆոնը, պլանշետը կամ համակարգիչը լրտեսող սար-

25. Տվյալները հավաքագրվել են 212 հարցվածներից:

քի» (NPR, 2014թ.): Այլ անձի շարժական սարքում տեղադրման համար նախատեսված այս լրտեսող ծրագրերը… սեռական զուգընկերոջ կողմից և գենդերային բռնության համատեքստում համարվում են «հետամտման ծրագրեր»: … Բացի այդ, երեխաների և աշխատակիցների վերահսկողության համար նախատեսված մի շարք հավելվածներ հաճախ օգտագործվում են սեռական զուգընկերոջը հետևելու համար»[26]: Տարեկան 200 ԱՄՆ դոլարը չգերազանցող արժեք ունեցող հավելվածների խանութներում հասանելի այս հավելվածները մի քանի տեխնիկական քայլերի միջոցով կարող են տեղադրվել ցանկացած սմարթֆոնում (երրորդ կողմի հավելվածների տեղադրում): Այս հավելվածները հնարավորություն են տալիս իրավախախտին ուղղակիորեն վերահսկել կամ հետապնդել տուժողին կամ ներթափանցել տուժողի հեռախոսը և վերահսկել այն, իրավախախտին մուտքի հնարավորություն տալով ներխուժել տուժողի հաղորդակցության և գտնվելու վայր, ներառյալ բրաուզերի պատմությունը, տեքստերը, էլ. նամակները, հեռախոսազանգերը, սոցիալական ցանցերը, մեդիան, այդ թվում՝ տեսանյութեր և լուսանկարներ, դրանց գաղտնաբառեր, ներառյալ բանկային հաշվի գաղտնաբառերը և իրական ժամանակում տեղորոշումը:

Իրավական տեսանկյունից այս տեսակի բռնությունները քննարկվում են տարբեր օրենսդրական շրջանակներում: Որոշ երկրներ լրտեսող ծրագրերի միջոցով կիբերհսկողությունը և հետևումը դասակարգում են որպես մասնավոր հաղորդակցության և ընդհանրապես անձնական կյանքի անձեռնմխելիության խախտում: Օրինակ՝ Ֆրանսիան այդպես է դիտարկում նշված իրավախախտումները, ընդ որում ընտանեկան բռնության համատեքստում դրանք հաշվի են առնվել որպես ծանրացուցիչ հանգամանքներ միայն մի քանի դեպքերում: Երկիրը վերջերս լրամշակել է ընտանեկան բռնության մասին օրենքը՝ ներառելով, ի թիվս այլոց, GPS-ի միջոցով հսկողությունը (Legifrance, 2020թ.): Իսպանիայում առանց զուգընկերոջ կամ ընկերոջ համաձայնության նրա բջջային հեռախոս մուտք գործելը Քրեական օրենսգրքի 197-րդ հոդվածի համաձայն դիտվում է որպես անձնական կյանքի ներխուժման և հանրայնացման հետ կապված հանցագործություն:

Նման դեպքերում նախատեսվում է երեքից հինգ տարի ժամկետով ազատազրկում: Սակայն, այդ ժամկետը սեռական բռնության հատկանիշների առկայության դեպքում կարող է երկարացվել (մինչև հինգ տարի լրացուցիչ ազատազրկում)[27]: Գերմանիայի քրեական օրենսգրքում կա հետամտման մասին բաժին (Բաժին 238.2), որտեղ հաշվի է առնվում հետևյալը.

> «Հեռահաղորդակցության կամ կապի այլ միջոցներով կամ երրորդ անձանց միջոցով այլ անձի հետ կապ հաստատելու փորձերը», 238.3. «Այլ անձի անձնական տվյալների ոչ պատշաճ օգտագործումը՝ ա) տվյալ անձի համար ապրանքներ կամ ծառայություններ պատվիրելու կամ բ) երրորդ անձանց այդ անձի հետ կապ հաստատելու դրդելու նպատակով» և 238.4. «անձի, նրա ազգականների կամ մերձավորների կյանքին կամ ֆիզիկական անձեռնմխելիությանը, առողջությանը կամ ազատությանը վնաս պատճառելու սպառնալիքը (Գերմանիայի քրեական օրենսգիրք, 1998/2019թթ.):

Անհատի հեռախոս կամ համակարգիչ ներխուժելը հավելվածի կամ ծրագրային ապահովման օգնությամբ, օրինակ՝ վիրուսի, վնասակար ծրագրի կամ Տրոյական ձի ծրագրի միջոցով, լայն հանրության կողմից ընկալվում է որպես կիբերհանցագործության օրինակ: Տուժողի սարք(եր)ի վրա հետամտող ծրագրերի տեղադրումը Եվրոպոլի կողմից, օրինակ, ընկալվում է նույն իրավակարգավորման շրջանակներում, սակայն այդ իրավակարգավորումը հաշվի չի առնում ընտանեկան բռնության համատեքստը որպես ծանրացուցիչ հանգամանք (Europol, տարեթիվը նշված չէ):

Հետամտման վերաբերյալ Ստամբուլի կոնվենցիայի դրույթները վերաբերում են առցանց և տեխ-

---

26. Գուզման Լ., Պատասխանատու տվյալներ (2019), «Հետամտման ծրագրերի և գենդերային հիմքով բռնության դեմ պայքար տվյալների պաշտպանության մասին օրենքի միջոցով», հասանելի՝ https://responsibledata.io/rd-reflection-stories/addressing-stalkerware-and-gender-based-abuse-through-data-protection-law/:

27. Իսպանիայի քրեական օրենսգիրք, հասանելի՝ www.boe.es/buscar/act.php?id=BOE-A-1995-25444:

նոլոգիապես օժանդակվող հետամտմանը: Հետամտումն այնտեղ սահմանվում է որպես «մեկ այլ անձի դեմ դիտավորությամբ շարունակաբար կատարվող սպառնալից գործողություն, որն այդ անձի մոտ վախ է առաջացնում սեփական անվտանգության համար»: Հոգեբանական բռնության մասին դրույթը սահմանում է այն որպես «դիտավորությամբ շարունակաբար կատարվող գործողություններ, որոնք հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով լրջորեն խախտում են մեկ այլ անձի հոգեբանական անձեռնմխելիությունը»: 46-րդ հոդվածի «ա», «բ», «գ», «դ» և «ը» կետերում ամրագրված ծանրացուցիչ հանգամանքները կարող են կիրառվել նաև առցանց կամ տեխնոլոգիապես օժանդակվող այլ միջոցներով կատարված հետամտման նկատմամբ: Բացի այդ, նման տեխնոլոգիական գործիքների օժանդակությամբ կյանքի համար վտանգ ներկայացնող իրավիճակներում կարող է կիրառվել նաև 52-րդ հոդվածը՝ անհետաձգելի միջամտության որոշումների մասին.

> Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի իրավասու մարմինները վերահաս վտանգի առկայության պայմաններում լիազորված լինեն կարգադրելու, որ ընտանեկան բռնություն կատարողը բավական ժամանակով հեռանա տուժողի կամ վտանգի տակ գտնվող անձի բնակարանից կամ արգելելու կատարողին վերադառնալ կամ շփում ունենալ տուժողի կամ վտանգի տակ գտնվող անձի հետ: Սույն հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցները նախապատվություն են տալիս տուժողների կամ վտանգի տակ գտնվող անձանց անվտանգությանը:

## Ահաբեկում, սպառնալիքներ և վերահսկում իրերի համացանցի (IoT) միջոցով

2020 թվականին ամբողջ աշխարհում օգտագործվել է շուրջ 50 միլիարդ միացված սարք, այդ թվում՝ ավտոմատացված կենցաղային տեխնիկա և կենցաղային խելացի գործիքներ, որոնք օգտագործվում են տան տարբեր համակարգերը կառավարելու համար, ներառյալ թերմոստատներ և էլեկտրական լամպեր, հեռակառավարման վահանակներ և անլար երաժշտության ականջակալներ: Դրանց թվում են նաև ավտոմեքենաները, անվտանգության տեսախցիկները, կենցաղային դրոնները և մանկական մոնիթորները, խելացի առողջապահական սարքերը, որոնք օգտագործվում են մարդու ֆիզիկական ակտիվությանը հետևելու կամ դեղորայք ներարկելու համար, ինչպիսիք են ինսուլինի պոմպերը, մարմնին կրվող սարքերը, խելացի ժամացույցները, միացված սաղավարտները, վիրտուալ իրականության ակնոցները և այլն: Այս բոլոր գործիքների և սարքերի համար ընդհանուրն այն է, որ դրանք միացված են համացանցին և, հետևաբար, կարող են ակտիվացվել և կառավարվել հեռավորության վրա:

Իրավական վերլուծությունը բացահայտում է IoT համայնապատկերի չորս իրավական թույլ կողմերը՝ խտրականության ներհատուկ հիմնախնդիրները, անձի անձեռնմխելիության հետ կապված հիմնախնդիրները, անվտանգության  և համաձայնության հետ կապված թերությունները (Peppet, 2014թ.): Թեև խտրականության, անձի անձեռնմխելիության և համաձայնության հետ կապված խնդիրները տարբեր ձևով են ազդում կանանց վրա, այս ուսումնասիրության մեջ դիտարկվում է միայն, թե ինչպես են IoT սարքերի և գործիքների անվտանգության կառուցվածքային առանձնահատկությունները վտանգի ենթարկում կանանց, հանդիսանալով հետամտման և հետապնդման միջոց ընտանեկան բռնության համատեքստում:

Ընտանեկան բռնության համատեքստում IoT-ի օժանդակությամբ հետամտման, վերահսկման և բռնության ազդեցության վերաբերյալ հետազոտությունը դեռևս սկզբնական փուլում է, սակայն հաշվի առնելով, որ 2030 թվականին IoT գործիքների և կենցաղային սարքերի թիվը կգերազանցի 125 միլիարդը (Markit, 2017թ.), ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալներ հավաքելու և այն քրեականացնելու նպատակով անհրաժեշտ է պատշաճ ձևով անդրադառնալ բռնության այդ դրսևորումներին և IoT գործիքների և սարքերի օգտագործմանը:

Ընտանեկան բռնության 30 տուժողների, փաստաբանների, ապաստարանների աշխատակիցնե-րի և շտապ օգնության աշխատակիցների մասնակցությամբ «New York Times»-ի հարցման ար-դյունքները հաղորդում են.

> Մի կին ասաց, որ միացրել էր իր օդորակիչը, բայց այն անջատվել էր առանց նրա դիպչելու: Մեկ ուրիշն ասաց, որ իր մուտքի դռան թվային կողպեքի ծածկագիրը ամեն օր փոխվում է, և նա չի կարողանում հասկանալ, թե ինչու: Մեկ ուրիշը զանգահարել էր բռնության տուժող-ների թեժ գծին և հաղորդել, որ անընդմեջ լսում է դռան զանգի ձայնը, բայց այնտեղ ոչ ոք չկա... Բռնարարներն՝ իրենց սմարթֆոնների միջոցով վերահսկելով համացանցին միաց-ված սարքերի հավելվածները հեռակա կարգով կառավարում են տան կենցաղային սար-քերը՝ դիտելու և լսելու, երբեմն վախեցնելու կամ իրենց իշխանությունը ցուցադրելու համար: Նույնիսկ այն բանից հետո, երբ զուգընկերը լքում է տուժողի տունը, նրա սարքերը հաճախ մնում են այդ տանը և շարունակում են օգտագործվել վախեցնելու և շփոթեցնելու համար:

Այսպիսով, տուժողի հետ կապ պահպանելու, վերահսկողություն, հարկադրանք և բռնություն գոր-ծադրելու համար իրավախախտի ֆիզիկական ներկայությունը պարտադիր չէ: Տուժողի կողմից մշտապես հսկողության տակ գտնվելու, մշտադիտարկվելու, առարկաների միջոցով ազատության սահմանափակում զգալու հեռանկարը և ֆիզիկական, տնտեսական և հուզական դժվարություն-ները կարող են տուժողի վրա զգալի հոգեբանական ազդեցություն ունենալ՝ անհանգստությունից և դեպրեսիայից մինչև հոգեկան խանգարումներ և նույնիսկ ինքնասպանություն:

> Համացանցին միացված կողպեքները կարող են սահմանափակել տեղաշարժը դեպի բնակարանի որոշ տարածքները կամ նույնիսկ թույլ չտալ, որ անձը դուրս գա իր տնից: Ձայնային կառավարմամբ վիրտուալ օգնականները կարող են տրամադրել հարցերի ման-րամասն պատասխաններ և ներկայացնել անձի համացանցում որոնման պատմությունը ... Նման համակարգերը կառավարելու համար, որպես կանոն, նախատեսվում է վարչարա-րական հաշիվ, որն ընտանիքի մեկ անդամին գաղտնաբառով պաշտպանված համակար-գը կառավարելու հնարավորություն է տալիս (BBC, 2020թ.):

Հետևաբար, ոլորտային մակարդակով խիստ անհրաժեշտություն է առաջանում պրոդուկտի մշակման փուլում նախատեսել անձի անվտանգության և անձնական կյանքի անձեռնմխելիու-թյան պաշտպանության գործառույթը, ինչպես նաև երաշխավորել, որ միջոցներն ու գործիքները նախագծված են՝ հաշվի առնելով առավել խոցելի օգտատերերի շահերը: Սակայն, ըստ Միջազ-գային անվտանգության և զարգացող տեխնոլոգիաների դասախոս և Գենդեր և IoT (#GIoT) նա-խագծի ղեկավար դոկտոր Լեոնի Տանցերի[28]՝

> սոցիալական խնդիրները միայն տեխնիկական միջոցներով չեն լուծվի: Իրավապահ մար-մինները, քաղաքականություն մշակողները և կրթական հաստատությունները, ինչպես նաև կանանց անվտանգության և ապաստարանի հարցերով զբաղվող կազմակերպու-թյունները պետք է նույնպես մասնակցեն այդ համակարգերի նախագծմանը և տեղեկաց-ված լինեն բոլոր ռիսկերի մասին (Morrow, 2019թ.):

## Բուդապեշտի կոնվենցիայի կիրառելի դրույթները

Ստամբուլի կոնվենցիայի՝ վերը թվարկված հետամտման և ծանրացուցիչ հանգամանքների վե-րաբերյալ հոդվածները համալրում են Բուդապեշտի կոնվենցիայի մի շարք դրույթները: Ստորև թվարկված դրանց մի մասն անմիջական կապ ունի կանանց նկատմամբ առցանց և տեխնոլո-գիապես օժանդակվող բռնության և մասնավորապես կիբերհետամտման հետ, մինչդեռ մյուս բո-վանդակային դրույթները քրեականացնում են կիբերհետամտման նպատակով ձեռնարկվող գոր-

---

28. Գենդերը և IoT–ն, հասանելի՝ www.ucl.ac.uk/steapp/research/digital-technologies-policy-laboratory/gender-and-iot:

ծողությունները, սակայն կապն այստեղ այդքան շոշափելի չէ (Եվրոպայի խորհուրդ, 2018c): Նման գործողությունները կարող են նպաստել բռնությանը և քրեական հետապնդման ենթարկվել, սակայն ստորև բերվող դրույթները ինքնին բավարար չեն բռնությունը քրեականացնելու համար:

**Բուդապեշտի կոնվենցիայի 2-րդ հոդված (Անօրեն կերպով մուտք)**

> Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու միտումնավոր և անօրեն կերպով՝ ամբողջությամբ կամ մասամբ թվային համակարգ մուտք գործելը: Մասնակից պետությունը կարող է պահանջել, որ հանցագործությունը կատարված լինի՝ խախտելով անվտանգության միջոցները, համակարգչային տվյալների ձեռքբերման կամ այլ անազնիվ նպատակով, կամ կապված լիմի թվային համակարգի հետ, որը միացված է մեկ ուրիշ համակարգի:

Այս հոդվածը կիրառելի է տուժողի թվային գործիքներ (համակարգիչ, պլանշետ, հեռախոս կամ միացված սարքեր) հետամտման ծրագրի կամ հաքերության միջոցով անօրեն մուտք գործելու դեպքում: Կոնվենցիայի բացատրական զեկույցում անօրեն կերպով մուտք գործելը սահմանվում է հետևյալ կերպ.

> վտանգավոր սպառնալիքներ և հարձակումներ թվային համակարգերի և տվյալների անվտանգության դեմ (այսինքն՝ գաղտնիության, անձեռնմխելիության և հասանելիության դեմ) … «Մուտք» նշանակում է թվային համակարգի ամբողջական կամ դրա որևէ մաս մուտք գործելը (սարքակազմ, բաղադրիչներ, տեղադրված համակարգի պահպանված տվյալներ, հասցեագրքեր, փոխանցվող տվյալներ և բովանդակության հետ կապված տվյալներ):

**Բուդապեշտի կոնվենցիայի 3-րդ հոդված (Անօրեն կերպով որսում)**

> Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու միտումնավոր և անօրեն կերպով՝ տեխնիկական միջոցներով գաղտնի որսալու թվային համակարգ մտնող, համակարգից դուրս եկող և համակարգի մեջ գտնվող համակարգչային տվյալների ոչ հրապարակավ փոխանցումները, ներառյալ թվային համակարգից էլեկտրամագնիսական արտահոսքը, որը փոխանցում է նման համակարգչային տվյալներ: Մասնակից պետությունը կարող է պահանջել, որ հանցագործությունը կատարված լինի անազնիվ նպատակներով կամ այնպիսի համակարգչով, որը միացված է մեկ ուրիշ համակարգչի:

Այս դրույթը նկարագրում է տուժողի (ոչ հրապարակային) անձնական տվյալների անօրինական որսման գործողությունը՝ նրա սարքերում ծրագրային ապահովման տեղադրմամբ՝ այդ տվյալները որսալու համար կամ նրա սարքերը տեխնիկական միջոցներով ներթափանցելու միջոցով: Ընդ որում Բուդապեշտի կոնվենցիայի բացատրական զեկույցում ներկայացվում է, որ.

> «Տեխնիկական միջոցներով» որսալը վերաբերում է հաղորդակցության բովանդակության ունկնդրմանը, մոնիթորինգին կամ վերահսկմանը, տվյալների բովանդակության ձեռքբերմանը՝ ուղղակիորեն, թվային համակարգեր մուտքի և օգտագործման միջոցով կամ անուղղակիորեն, էլեկտրոնային գաղտնալսման սարքերի միջոցով: Որսալը կարող է ներառել նաև ձայնագրություն:

Հետևաբար, այս հոդվածը նպաստում է կիբերհետամտման հիմնախնդրի կարգավորմանը, քրեականացնելով գործողությունները, որոնք կարող են ներառվել այս տեսակի բռնության մեջ, բայց ինքնին բավարար չեն կիբերհետամտումն իր բոլոր դրսևորումներով քրեականացնելու համար:

**Բուդապեշտի կոնվենցիայի 4-րդ հոդված (Միջամտություն տվյալների մեջ)**

> 1) Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու միտումնավոր և անօրեն կերպով համակարգչային տվյալները վնասելը, ոչնչացնելը, փչացնելը, փոփոխելը կամ արգելափակելը: 2) Մասնակից պետությունը կարող է իրավունք վերապահել՝ պահանջելու, որ 1-ին կետում նշված գործողության արդյունքում լուրջ վնաս պատճառվի:

Ընտանեկան բռնության համատեքստում իրավախախտման այս ձևը կարող է դրսևորվել բռնարար զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից, որը ոչնչացնում կամ հեռացնում է տուժողի սարքերը կամ դրանց բովանդակությունը՝ վերահսկողության կամ վրեժի նպատակով: «Լուրջ վնաս» հասկացությունը պետք է ընկալվի ընտանեկան բռնության ավելի լայն համատեքստում և միշտ պետք է համարվի ծանրացուցիչ հանգամանք: Այս հոդվածը անմիջականորեն առնչվում է բռնությանը և նպաստում դրան, ինչպես և ստորև նշված 5-րդ հոդվածը (քանի որ միջամտությունը կարող է հանգեցնել ֆիզիկական կամ հոգեբանական տրավմայի կամ նույնիսկ մահվան):

**Բուդապեշտի կոնվենցիայի 5-րդ հոդված (Համակարգի աղավաղում)**

> Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու միտումնավոր և անօրեն կերպով թվային համակարգի աշխատանքը լուրջ խոչընդոտելը՝ համակարգչային տվյալներ մուտքագրելով, փոխանցելով, վնասելով, ոչնչացնելով, փչացնելով, փոփոխելով կամ արգելելով:

Այս երկու դրույթները տարածվում են ընտանեկան բռնության այն դեպքերի վրա, երբ հետամտման նպատակով իրավախախտը միջամտում և ոչնչացնում է տուժողի համակարգչային տվյալները: Այս գործողության «լուրջ վնասը» և «լուրջ խոչընդոտումը» գնահատվում են ընտանեկան բռնության համատեքստում տուժողի վրա ազդեցության աստիճանի հիման վրա:

**Բուդապեշտի կոնվենցիայի 6-րդ հոդված (Սարքերի չարաշահում)**

> Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իր ներքին օրենսդրության համաձայն որպես քրեական հանցագործություն սահմանելու միտումնավոր և անօրեն կերպով. ա) արտադրությունը, վաճառքը, օգտագործման, ներմուծման, տարածման համար հայթայթելը և այլ կերպ մատչելի դարձնելը. i. սարքը, ներառյալ համակարգչային ծրագիրը, նախատեսված կամ հարմարեցված առաջին հերթին վերը նշված 2-5-րդ հոդվածներում սահմանված յուրաքանչյուր հանցագործության կատարման համար, ii. համակարգչի ծածկագիրը, մուտքի կոդը կամ նման տվյալները, որոնց միջոցով ամբողջությամբ կամ մասամբ հնարավոր է մուտք գործել թվային համակարգ, վերը նշված 2-ից 5-րդ հոդվածներում սահմանված յուրաքանչյուր հանցագործության կատարման նպատակով, բ) «ա» կետի i կամ ii ենթակետերում նշված առարկային տիրապետելը, որը կօգտագործվի վերը նշված 2-5-րդ հոդվածներում սահմանված հանցագործություններից որևէ մեկի կատարման նպատակով: Մասնակից պետությունը կարող է օրենքով պահանջել, որ մի շարք նման առարկաներ ձեռք բերված լինեն մինչև քրեական պատասխանատվության ենթարկելը:

Այս դրույթը հատկապես կարևոր է հետամտման պարագայում, երբ իրավախախտն իր մոտ պահում է «որևէ առարկա ... ... նպատակ ունենալով այն օգտագործել վերը նկարագրված իրավախախտումների կատարման համար, ինչպիսիք են տվյալներ անօրինական մուտքը և աղավաղումը, համակարգերի և տվյալների վնասումը» (Եվրոպայի խորհուրդ, 2001a):

## Առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հոգեբանական բռնության ձևերը

Վերը նկարագրված բռնության դրսևորումները կարող են վերաբերել նաև հոգեբանական բռնությանը: Ստամբուլի կոնվենցիան սահմանում է հոգեբանական բռնությունը որպես «հարկադրանքի կամ սպառնալիքների միջոցով անձի հոգեբանական անձեռնմխելիությունը լրջորեն խաթարելու միտումնավոր վարքագիծ»: Կոնվենցիայի բացատրական զեկույցը պարզաբանում է, թե որն է հոգեբանական բռնությունը.

> Իրավախախտման ազդեցությունը պայմանավորված է այն դիտավորյալ վարքագծով, որը լրջորեն վնասում է անձի հոգեկան անդորրը, որին կարելի է հասնել տարբեր միջոցներով և եղանակներով: Կոնվենցիան չի սահմանում, թե ինչ է նշանակում լրջորեն վնասելը: Այս դրույթին համապատասխան որակավորվելու համար վարքագիծը պետք է դրսևորի հարկադրանք կամ սպառնալիք: ... Այս դրույթը ավելի շուտ վերաբերում է ընդհանուր վարքին, այլ ոչ թե որևէ մեկ իրադարձությանը: Այն նպատակ ունի բացահայտելու ժամանակի ընթացքում տեղի ունեցող բռնի վարքի հանցավոր բնույթը, լինի դա ընտանիքում թե ընտանիքից դուրս (Եվրոպայի խորհուրդ, 2011b):

Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բոլոր ձևերն ունեն հոգեբանական ազդեցություն և դրանք կարող են դասակարգվել որպես առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հոգեբանական բռնություն: Առաջին գլխում նկարագրված կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության առանձնահատկությունները զգալիորեն մեծացնում են տուժողների վրա դրանց ազդեցությունը: Ավելին, ընտանեկան բռնություն գործադրողի կողմից թվային տեխնոլոգիաներ կարող են կիրառվել տուժողի նկատմամբ հոգեբանական բռնության ազդեցությունն ուժեղացնելու համար (տե՛ս առցանց սեռական հետապնդման և հետամտման բաժինները): Բռնության այս ձևերի վերաբերյալ Բուկեմիջան (Boukemidja, 2018թ.) մեկնաբանում է.

> Ինչ վերաբերում է հոգեբանական բռնությանը, ապա այն ենթադրում է կնոջ նսեմացում, նվաստացում, նրա մարդկային արժեքի ստորացում: Այդ ամենը դրսևորվում է վերբալ հարձակումների, վիրավորանքների, խանդի տեսարանների, սպառնալիքների, ճնշումների, շանտաժի, գործունեության վերահսկման, հարազատներից, ընկերներից, արտաքին աշխարհից մեկուսացման ձևով: ... Վերբալ բռնությունը կնոջ հասցեին վիրավորական խոսքերի կամ վիրավորանքի անդադար կրկնությունն է: ... Վերբալ բռնությունը կարող է հանգեցնել մի շարք վարքային, հուզական և ֆիզիկական հիմնախնդիրների: Վերբալ բռնությունն այս համատեքստում նշանակում է վիրավորական կամ նվաստացուցիչ բառերի օգտագործում՝ անհեթեթ մականուն տալը, կնոջը վիրավորելը, ռասիստական մեկնաբանությունները կամ անդադար ծաղրը:

Թվային հաղորդակցության միջոցով ինքնասպանության կամ ինքնավնասման դրդումը մեկ այլ տարածվող երևույթ է, որի ազդեցությունը պայմանավորված է իրավախախտների առցանց անանունությամբ, բովանդակության երկարատևությամբ և տուժողին զանգվածային հարձակման ենթարկելու համար մեծ թվով իրավախախտների համախմբման հեշտությամբ: Տուժողներին առցանց դրդում են ինքնասպանության կամ ինքնավնասման, երբեմն հատուկ կայքերում և սոցիալական ցանցերում, ընդ որում աղջիկների ինքնավնասումն ավելի հավանական է քան տղաներինը (Morgan et al., 2017թ.): Սոցիալական մեդիայում հատուկ հեշթեգները կարող են խրախուսել ոչ կայուն հոգեվիճակով աղջիկներին ինքնավնասվել՝ մեդիայում տեսանելի դառնալու կամ հետևորդների թիվն ավելացնելու համար (BBC, 2019b):



# ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Ինտեգրված քաղաքականության, կանխարգելման, պաշտպանության և քրեական հետապնդման վերաբերյալ Ստամբուլի կոնվենցիայի չորս հիմնասյուները վերջինիս համապարփակ և ամբողջական մոտեցման արտահայտումն են: Այս հենասյուները կողմերին թույլ են տալիս մշակել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր կողմերին արձագանքման մեխանիզմների սպառիչ փաթեթ:

Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության երևույթի լիարժեք ըմբռնման համար մեկնաբանվելու և վերլուծվելու են Ստամբուլի կոնվենցիայի համապատասխան դրույթները: Այն դեպքերում, երբ Բուդապեշտի կոնվենցիայի դրույթները արդյունավետորեն լրացնում են Ստամբուլի կոնվենցիան, դրանք նույնպես կներառվեն մեկնաբանության մեջ: Հիմնականում դա վերաբերում է դատավարական իրավունքի և միջազգային համագործակցության մասին Բուդապեշտի կոնվենցիայի դրույթներին:

## Ինտեգրված քաղաքականություն

### Համակողմանի և համակարգված քաղաքականություն (Հոդված 7)

7-րդ հոդվածի համաձայն.

1) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ որպեսզի երկրի ամբողջ տարածքում ընդունվի և իրականացվի արդյու-

նավետ, համակողմանի և համակարգված քաղաքականություն, որը կներառի սույն Կոնվենցիայի գործողության շրջանակներում գտնվող բռնության բոլոր ձևերի դեմ պայքարի վերաբերելի բոլոր միջոցները, որոնք ամբողջական արձագանք կհանդիսանան կանանց նկատմամբ բռնությանը:

2) Մասնակից պետություններն ապահովում են, որպեսզի 1-ին կետում նշված քաղաքականությունը առաջնահերթություն տա տուժողի իրավունքներին և իրականացվի բոլոր շահագրգիռ գերատեսչությունների, ինստիտուտների և կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության միջոցով:

3) Ձեռնարկված միջոցառումները ընդգրկում են բոլոր շահագրգիռ դերակատարներին, ինչպիսիք են՝ պետական գերատեսչությունները, համապետական, տարածքային և տեղական խորհրդարանները և կառավարման մարմինները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Մասնակից պետություններից պահանջվող կանանց նկատմամբ բռնությունը կանխելու և դրան արձագանքելու արդյունավետ, համապարփակ և համակարգված քաղաքականությունը պետք է նաև համակողմանիորեն հաշվի առնի առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հետապնդման, հետամտման և հոգեբանական բռնության տարբեր դրսևորումները:

Բռնությանը համապարփակ արձագանքը պահանջում է, որ կանխարգելման նախաձեռնությունները, քաղաքացիական և քրեական իրավական շրջանակները պարբերաբար վերանայվեն՝ հաշվի առնելու բռնության հատուկ և նոր տեսակները, որոնց կանայք բախվում են առցանց, նոր տեխնոլոգիաների միջոցով, հատկապես ընտանեկան բռնության համատեքստում (այդ թվում երեխաները՝ որպես ընտանեկան բռնության տուժողներ կամ ականատեսներ) կամ երբ բռնության այս տեսակները թիրախավորում են կանանց խմբերի, որոնք ինտերսեկցիոնալ սպառնալիքների թիրախ են:

Ազգային և տեղական կառավարման մարմինները, իրավական, առողջապահական և սոցիալական հաստատությունները պետք է ապահոված լինեն բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներով բռնության նման ձևերին արձագանքելու, միջինստիտուցիոնալ երկխոսության և քաղաքականության առաջընթացի ու ազդեցության մոնիթորինգի և գնահատման մեխանիզմների ստեղծման, գործակալությունների և ոլորտների միջև համակարգված նախաձեռնությունների համար:

**Ֆինանսական ռեսուրսներ (Հոդված 8)**

Մասնակից պետությունները հատկացնում են անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ սույն Կոնվենցիայի առարկա՝ բռնության բոլոր ձևերը կանխելու և դրանց դեմ պայքարի ուղղությամբ միասնական քաղաքականությունը, միջոցներն ու ծրագրերը համարժեքորեն իրականացնելու համար, այդ թվում՝ այնպիսիք, որոնք իրականացվում են հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության կողմից:

Ազգային և տեղական մակարդակներում՝ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ձևերը պատշաճ կերպով կանխելու, պաշտպանելու և արձագանքելու համար անհրաժեշտ են բավարար ֆինանսական և մարդկային ռեսուրսներ: Բացի այդ, ազգային և տեղական մակարդակներում միջոլորտային համակարգման համար պետք է հասանելի լինեն ֆինանսական և մարդկային ռեսուրսներ:

Պետք է խրախուսել հստակ, թափանցիկ, համապատասխան և գենդերազգայուն բյուջետավորումը, որը նախատեսված կլինի կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի կանխարգելման,

կանանց պաշտպանության և իրավախախտների քրեական հետապնդման նպատակով հատկացվող բոլոր գումարների համար: Հետևաբար, բյուջեն պետք է նաև հաշվի առնի ռեսուրսները, որոնք հատկացվում են տուժողների և նրանց խնամքի տակ գտնվողների վրա ազդող առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հետապնդման, հետամտման և հոգեբանական բռնության ամբողջական արձագանք ապահովելու համար: Ֆինանսական և մարդկային ռեսուրսներ պետք է հատկացվեն նաև անհրաժեշտ տվյալների հավաքագրման և հետազոտությունների համար (տե՛ս նաև Ստամբուլի կոնվենցիայի 11-րդ հոդվածը):

### Հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակությունը (Հոդված 9)

> Մասնակից պետությունները գնահատում, խրախուսում և խթանում են բոլոր մակարդակներով այն հասարակական և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների աշխատանքը, որոնք ակտիվ են կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի գործում, և արդյունավետ համագործակցում են այդ կազմակերպությունների հետ:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, կանանց իրավունքների պաշտպանության կազմակերպությունները և հասարակական կազմակերպությունները պատմականորեն պատասխանատու են կանանց նկատմամբ գենդերային բռնության տուժողներին առաջարկվող բազմաթիվ արձագանքման նախաձեռնությունների համար: Նման կազմակերպությունների դերն այդ հարցում շարունակում է մեծ լինել և չնայած շատ երկրներում նրանց հատկացվում է պետական ֆինանսավորում, սակայն նրանց ֆինանսական ապահովվածության և տուժողներին մատուցվող ծառայությունների որակի/քանակի վրա հաճախ ազդում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են ռեսուրսների սակավությունը, երկարաժամկետ ֆինանսավորման հնարավորությունների բացակայությունը կամ քաղաքական դաշտի փոփոխությունը:

Հետևաբար՝ ընտանեկան բռնությանը և կանանց վրա ազդող բռնության այլ ձևերին արձագանքելու համար պատասխանատու կազմակերպությունները պետք է պատշաճ կերպով ֆինանսավորվեն, որպեսզի արձագանքման շրջանակներում և ծրագրերում կարողանան անդրադառնալ հետապնդման, հետամտման և հոգեբանական բռնության առցանց և տեխնոլոգիապես օժանդակող ձևերին: Կանանց իրավունքների պաշտպանության համար պատասխանատու պետական մարմինների և այս հատվածի միջև համագործակցությունը, խորհրդատվությունը և փոխհամաձայնեցված կառավարումը պետք է խրախուսվի՝ հնարավորինս նպաստելու արձագանքման նախաձեռնությունների ստեղծմանը, իրականացմանը և համագործակցությանը, այդ թվում՝ կանխարգելիչ նախաձեռնություններին, ինչպիսիք են իրազեկման արշավները, ապացույցների հավաքումը, հետազոտական աշխատանքը և բռնությունից տուժողների համար պաշտպանության մեխանիզմները, հատկապես ընտանեկան բռնության և ինտերսեկցիոնալ սպառնալիքների դեպքերում:

### Համակարգող մարմին (Հոդված 10)

> 1) Մասնակից պետությունները մեկ կամ մեկից ավելի մարմինների լիազորում են սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի կանխարգելման և դրանց դեմ պայքարի համար մշակված քաղաքականությունների և միջոցների համակարգումը, կիրարկումը, դիտարկումն ու գնահատումը կատարելու համար: Այս մարմինների կողմից համակարգվում է 11-րդ հոդվածում նշված տվյալների հավաքագրումը, ուսումնասիրությունը և տարածումը:
>
> 2) Մասնակից պետությունները ապահովում են, որպեսզի սույն հոդվածի համաձայն ստեղծված կամ լիազորված մարմինները ստանան VIII-րդ գլխով սահմանված կարգով ձեռնարկված միջոցառումների մասին ընդհանուր բնույթի տեղեկատվություն:

3) Մասնակից պետություններն ապահովում են, որպեսզի սույն հոդվածի համաձայն ստեղծված կամ լիազորված մարմինները հնարավորություն ունենան անմիջապես հաղորդակցվելու սույն Կոնվենցիային մասնակից այլ պետություններում իրենց գործընկեր մարմինների հետ և խթանելու նրանց հետ հարաբերությունները:

Շատ կարևոր է կանանց նկատմամբ գենդերային բռնության հետ կապված բոլոր հիմնախնդիրները կարգավորելու համար հատուկ համակարգող մարմինների կազմավորումը, որոնք կանդրադառնան ոչ միայն կանանց նկատմամբ թվային բռնությանը, այլև բռնության առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող ձևերին: Նրանց գործունեությանը կարող են աջակցել ազգային մոնիթորինգի մարմինները կամ կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ տվյալների մոնիթորինգի և հավաքագրման այլ մեխանիզմները, ընդ որում կանանց նկատմամբ բռնության առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բոլոր տվյալների մշտադիտարկումը պետք է ինտեգրվի այդ մեխանիզմներում: Բոլոր Մասնակից պետությունների համատեղ աշխատանքը թույլ կտա ստեղծել ընդհանուր գործիքներ՝ կանանց իրավունքների պաշտպանությունը և նրանց առցանց անվտանգությունը համեմատելու համար՝ նաև նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

### Տվյալների հավաքագրում և հետազոտություն (Հոդված 11)

11-րդ հոդվածի համաձայն Մասնակից պետությունները.

> կանոնավոր պարբերականությամբ հավաքում են դիզագրեգացված վերաբերելի վիճակագրական տվյալներ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր տեսակների դեպքերի մասին ..., փորձագետների խմբին տրամադրում են ... հավաքագրված տվյալները ... միջազգային համագործակցությունը խթանելու և միջազգային ցուցիչների հիման վրա կատարողականի գնահատման հնարավորություն տալու նպատակով ... [և] ապահովում են, որպեսզի սույն հոդվածի համաձայն հավաքագրված տեղեկատվությունը մատչելի լինի հանրության համար:

Դասակարգված տվյալների հավաքագրումը և գնահատումը հատկապես կարևոր է, երբ խոսքը գնում է առցանց կամ տեխնոլոգիապես օժանդակվող բռնության նոր ձևերի մասին: Ինչպես նշված է Ստամբուլի կոնվենցիայի շրջանակային փաստաթղթերում, բռնության տեսակները դասակարգելիս, հետամտման կամ հետապնդման որոշ ձևեր պահանջում են հատուկ սահմանումներ և մանրակրկիտ վերլուծություն՝ գենդերային բաղադրիչ չունեցող բռնության այլ ձևերից դրանք տարբերելու համար: Տվյալների հավաքագրումը կարևոր է բռնության համատեքստն ընկալելու համար, որը տեղեկատվական հիմք կհանդիսանա քաղաքականության մշակման և օրենսդրական փոփոխությունների համար: Օրինակ, ընտանեկան բռնության առնչությամբ հատկապես կարևոր է արձանագրել բռնարարի և տուժողի հարաբերությունները և հնարավոր ծանրացուցիչ հանգամանքները (իրավախախտների թիվը, բռնության տևողությունը, տվյալների մշտականությունը, բռնության մի քանի տեսակների միաժամանակ համընկնումը, տուժողի երեխաների ներգրավվածությունը կամ նրանց վրա ազդեցությունը և այլն): Դեպքերի և դատապարտումների մակարդակի վերաբերյալ տվյալների հավաքագրումը, ներառյալ քաղաքացիական արդարադատության վերաբերյալ տվյալների (օրինակ՝ միջամտության որոշումների), անհրաժեշտ է նման բռնությունների ազդեցությունը գնահատելու և արդյունավետ քաղաքականություն մշակելու նպատակով ապացույցներ տրամադրելու համար: Ինքնասպանությունների կամ ինքնասպանության փորձերի, կնասպանության և ֆիլիցիդի (դստեր կամ որդու սպանություն) դեպքերի մասին տեղեկությունները պետք է ներառեն տեղեկատվություն նոր տեխնոլոգիաների օժանդակությամբ իրականացված հետապնդման, հետամտման կամ հոգեբանական բռնության մասին՝ քրեականացման հետ կապված հարցերի և հանցագործությունների մեջ բռնության այս ձևերի տարածվածությունն ու դերը գնահատելու համար: Այդ տվյալների հանրային հասանելիությունը պետք է անվերապահորեն խրախուսվի՝ բռնության այդ ձևերի մասին իրազեկվածությունը բարձրացնելու համար:

ժամանակավոր կացարանների, առողջապահական կենտրոնների, կանանց ռեսուրսային կենտրոնների, առողջապահական և սոցիալական ծառայությունների հասանելիության վերաբերյալ տվյալները պետք է դիզագրեգացվեն՝ հաշվի առնելով տուժողի կյանքի ընթացքում բռնության դեպքերը, իսկ ապաստան հայցող կանանց և երեխաներին պետք է հարցնել՝ արդյոք նրանք ենթարկվել են նման բռնության տեղափոխվելուց առաջ կամ ընթացքում:

Անհրաժեշտ է նաև խրախուսել հարցումների, տվյալների հավաքագրման եղանակների և հետազոտական նախաձեռնությունները, որոնք ուսումնասիրում են այդպիսի բռնության ազդեցությունը, նպատակ ունենալով չափել այն, այդ թվում՝ ֆինանսական տեսանկյունից, քանի որ դա առանցքային նշանակություն ունի բռնության նման ձևերը ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական շրջանակներում ներառելու համար: Տվյալների հավաքագրման ընթացքում հարկ է հաշվի առնել ինտերսեկցիոնալության գործոնը, հնարավորինս մանրամասն լինելու նպատակով:

Վերոնշյալ բոլոր տվյալները պետք է հավաքագրվեն և մշակվեն տվյալների պաշտպանության վերաբերյալ Մասնակից պետությունների պարտավորությունների համաձայն: Ինչ վերաբերում է սոցիալական ցանցերում կատարվող բռնությունների վերաբերյալ կոնկրետ տվյալներին, Մասնակից պետությունները պետք է սոցիալական ցանցերից, տիրույթները գրանցողներից և ֆորումների սեփականատերերից/ ադմինիստրատորներից պահանջեն ավելի շատ թափանցիկություն և հաշվետվողականություն, ակնկալելով այդ հարթակներում կանաց բռնության փոքրի վերաբերյալ մանրամասն տվյալներ (Algorithm Watch, 2020թ., Amnesty International, 2020թ.):

## Կանխարգելում

### Ընդհանուր բնույթի պարտավորություններ (Հոդված 12)

1) Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ կանանց և տղամարդկանց սոցիալական և մշակութային վարքագիծը փոփոխելու նպատակով, որպեսզի վերացնեն այն նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթները և մնացած երևույթները, որոնք հիմնված են կանանց ստորադասվածության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերերի վրա:

2) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կանխելու համար սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության ցանկացած դրսևորում որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից:

3) Սույն գլխի համաձայն ձեռնարկվող բոլոր միջոցները պետք է հաշվի առնեն և արձագանքեն որոշակի հանգամանքների բերումով խոցելի վիճակում հայտնված անձանց կարիքներին և կարևորեն զոհերի մարդու իրավունքներին:

4) Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ քաջալերելու հասարակության բոլոր անդամներին, հատկապես՝ տղամարդկանց և տղաներին, ակտիվորեն նպաստելու սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի կանխարգելմանը:

5) Մասնակից պետություններն ապահովում են, որպեսզի մշակույթը, սովորույթը, կրոնը, ավանդույթը կամ այսպես կոչված «պատիվը» չվկայակոչվեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության որևէ գործողություն արդարացնելու համար:

6) Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ կանանց իրավազորմանն ուղղված ծրագրերը և գործողությունները խթանելու համար:

Կարծրատիպերն ու նախապաշարմունքները, ներառյալ սովորույթները, կրոնը և ավանդույթնե-

ըը կամ այսպես կոչված «պատիվը» համացանցում կանանց նկատմամբ տարածվող բռնության կոնտինուումի հիմքն են: Ավելին, ինտերսեկցիոնալ հատկանիշներով կանայք, ինչպիսիք են լեսբիները, բի, քուիր և տրանս, տարբեր ռասաների ներկայացուցիչ կանայք, մահմեդական կանայք կամ կանայք, որոնք համարվում են մահմեդական, միգրանտ կանայք, հաշմանդամություն և քրոնիկ հիվանդություններ ունեցող կանայք, տնտեսական դժվարությունների մեջ գտնվող կանայք և մինչև 18 տարեկան աղջիկները գտնվում են վտանգավոր կարծրատիպերի թիրախում, որը հանգեցնում է հատկապես նրանց նկատմամբ առցանց և նոր տեխնոլոգիաների օժանդակությամբ բռնությանը: Հետևաբար՝ հանուն գենդերային հավասարության, վնասակար կարծրատիպերը փոխելու և հասարակության մակարդակում փոփոխությունները խթանելու նպատակ ունեցող նախաձեռնությունները դրականորեն են ազդում առցանց և անցանց վարքագծի վրա: Պետք է նաև ավելի լայն տարածում գտնեն կանանց իրավազորմանը և դրական առցանց պատկերին նպաստող նախաձեռնություններն ու ծրագրերը: Այդպիսի նախաձեռնությունները, երբ դրանք շատ են, թույլ են տալիս արդյունավետորեն պայքարել վնասակար կարծրատիպերի դեմ, որոնք սոցիալական ցանցերում կարող են բացասաբար անդրադառնալ կանանց վրա, հատկապես ինտերսեկցիոնալ առումով խոցելի կանանց վրա:

Գենդերային հավասարության ոլորտում մշակութային և սոցիալական փոփոխություններից բացի կարևոր է, որ իրավական շրջանակները հաշվի առնեն կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերը, ներառյալ հետապնդման, հետամտման, հոգեբանական բռնության և ատելության խոսքի տեսակները, որոնք քննարկվել են վերևում: Առանց համապատասխան օրենսդրական փոփոխությունների տեխնոլոգիապես օժանդակվող բռնության նոր դեպքերը կշարունակեն անպատիժ մնալ: Իրավական բնականոն զարգացումից բացի կարևոր դեր է խաղում գործող օրենքներում նախադեպային իրավունքի հիման վրա գենդերային հավասարության ապահովումը:

Ավելին, կարևոր է, որ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բոլոր ձևերն արգելող նախագծերում, նախաձեռնություններում, ծրագրերում, քաղաքականություններում և օրենքներում ոդդեգրվի ինտերսեկցիոնալ մոտեցումը, որպեսզի տուժողները գտնվեն ուշադրության կենտրոնում, իսկ այդ մեխանիզմների մշակման ընթացքում առաջնային կարևորություն տրվի տուժողների առանձնահատուկ և փոխկապակցված խոցելիությանը:

Ավելին, տղամարդիկ և տղաները պետք է ներգրավվեն վնասակար կարծրատիպերի դեմ պայքարում և կրթվեն՝ առողջ վարքագիծն առցանց խրախուսելու համար: Օրինակ՝ լինեն «ակտիվ դիտորդ», հատկապես այն ասպարեզներում, որտեղ գերակշռում են տղամարդիկ, ինչպիսիք են տեսախաղերի համայնքները (Active Bystander UK, (առանց ամսաթվի), Glitch UK, (առանց ամսաթվի)) կամ երբ նրանք ականատես են լինում առցանց բռնության հատուկ ձևերի, ինչպիսիք են ամբոխի հարձակումները և թիրախավորված հետապնդումը: Բացի այդ, զանգվածային թվային կրթությունը կկանխի երիտասարդ տղամարդկանց և տղաների համացանցում գործող այնպիսի խմբավորումներում ներգրավումը, որոնք տարածում են կանանց նկատմամբ բացասական կարծրատիպերը և անգամ կոչ են անում բռնության ենթարկել կանանց: Դրանց թվում է «incel» (հարկադիր ամուրիություն) ենթամշակույթը, որը ոչ վաղ անցյալում հանգեցրել է իրական կյանքում զանգվածային կնասպանության դեպքերի և շարունակում է հրահրել բռնության գործողությունները՝ հետապնդումից մինչև հարձակումներ:

**Իրազեկում (Հոդված 13)**

1) Մասնակից պետությունները կանոնավոր հիմունքներով խթանում կամ կազմակերպում են հանրային իրազեկման արշավների և ծրագրերի անցկացումը, այդ թվում, անհրաժեշտության դեպքում համագործակցելով մարդու իրավունքների ներպետական ինստիտուտների և հավասարության հարցերով լիազոր մարմինների, քաղաքացիական հասարակության և ՀԿ-ների, հատկապես՝ կանանց հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ՝

սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի, երեխաների վրա դրանց ազդեցության և նման բռնությունը կանխելու անհրաժեշտության մասին ընդհանուր հասարակության իրազեկության և ընկալման մակարդակը բարձրացնելու նպատակով:

2) Մասնակից պետությունները ապահովում են, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության գործողությունները կանխելու առկա միջոցների մասին տեղեկատվությունը լայնորեն տարածվի հասարակության մեջ:

Հասարակության բոլոր հատվածներում պետք է խրախուսել կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տարբեր տեսակների վերաբերյալ իրազեկման արշավները, ներառյալ համապատասխան ոլորտներում, որտեղ գեներացվում են պրոդուկտները: Ավելին, լայն հանրությունը պետք է տեղեկացված լինի բռնությունը պատժող օրենքների, ինչպես նաև հասանելի ծառայությունների և տուժողի մակարդակով բռնությանն արձագանքելու ուղեցույցների մասին: Թվային ոլորտում գործող շահագրգիռ կողմերի հետ համագործակցությունը պետք է առաջնահերթություն դառնա, որպեսզի իրազեկման արշավներն արտացոլվեն նաև առցանց հարթակներում:

### Կրթություն (Հոդված 14)

1) Մասնակից պետությունները, հարկ եղած դեպքում, անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի միջանձնային հարաբերություններում կանանց և տղամարդկանց միջև հավասարության, կարծրատիպերից զերծ գենդերային դերերի, փոխադարձ հարգանքի և վեճերը առանց բռնության լուծելու, կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հարցերով ուսումնական նյութերն ընդգրկվեն պաշտոնական ուսումնական ծրագրերում՝ կրթական բոլոր մակարդակներում և հարմարեցված լինեն ուսումնառուների զարգացման տարբեր մակարդակներին:

2) Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված սկզբունքները ոչ պաշտոնական կրթական հաստատություններում՝ սպորտային, մշակութային, ժամանցի հաստատություններում և ԶԼՄ-ում խթանելու ուղղությամբ:

Կրթությունը, ներառյալ վաղ տարիքից տրամադրվող թվային կրթությունը, ժողովրդավարական երկրներում ավելի մեծ կարևորություն է ձեռք բերում՝ հակազդելու ապատեղեկատվությանը, որը հանգեցնում է շահագործման, մանիպուլյացման, քաղաքական բևեռացման և ժողովրդավարական կառույցների նկատմամբ անվստահության: Այդ ջանքերը պետք է նաև ներառեն նորաստեղծ և սոցիալական մեդիայի վերաբերյալ կրթությունը՝ դրանց կառուցվածքի և առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք թույլ են տալիս տեսանելի դարձնել ոչ ցանկալի բովանդակությունը և բռնության տարածումը: Ավելին, ինչպես նշվեց վերևում, սեքսիզմը և կնատյացությունը հաճախ համակցված են ծայրահեղ քաղաքական բովանդակությամբ, դավադրության տեսություններով և ռասիստական դիրքորոշումներով, որոնք, ի վերջո, հանգեցնում են թե՛ վնասակար պատկերացումների, և թե՛ կանանց թիրախավորող առցանց վարքագծի տարածմանը: Կանանց և տղամարդկանց իրավահավասարության վերաբերյալ կրթության հարցում թվային կրթության դերը նույնքան կարևոր է, որքան կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեմ պայքարի վերաբերյալ իրավական կրթությունը: Այն թույլ է տալիս ավելի լավ հասկանալ, թե ինչպես են կանանց և աղջիկների վերաբերյալ կարծրատիպերը տարածվում համացանցում և օգտատերերին կրթել համացանցում օգտագործվող բովանդակության աղբյուրի և վնասակար կարծրատիպերն ու վարքագիծը վերացնելու ուղիների մասին:

### Մասնագետների վերապատրաստում (Հոդված 15)

1) Մասնակից պետություններն անհրաժեշտ վերապատրաստումներ են նախատեսում սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր գործողությունների տուժողների և բռնարարների հետ աշխատող համապատասխան մասնագետների համար՝ նման բռնության

կանխարգելման ու բացահայտման, տղամարդկանց և կանանց միջև հավասարության, տուժողների կարիքների ու իրավունքների, ինչպես նաև ռեվիկտիմիզացիայի կանխման թեմաներով:

2) Մասնակից պետությունները միջոցներ են ձեռնարկում, որպեսզի սույն հոդվածի 1-ին մասում նշված վերապատրաստումը ներառի նաև համակարգված բազմագերատեսչական համագործակցության վերաբերյալ վերապատրաստումներ՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության դեպքերում լիարժեք և պատշաճ ուղղորդում ապահովելու համար:

Առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող սեռական հետապնդման, հետամտման և հոգեբանական բռնության ձևերի կանխման հարցում մասնագետների վերապատրաստման պարտավորությունը հատկապես կարևոր է: Ինչպես ներկայացված է Բաժին 1.4-ում, տուժողները բախվում են տարբեր մակարդակի բարդությունների հետ, երբ փորձում են փոխհատուցում ստանալ նրանց նկատմամբ կիրառված բռնության դեպքերում: Տուժողների առջև ծառացող լուրջ բարդություններից մեկը տեղեկատվության բացակայությունն է՝ որտեղ և ինչպես գտնել պաշտպանություն, անօգնականության զգացումը, որն ուժեղացնում է բռնության ազդեցությունը տուժողների վրա: Քրեական արդարադատության և իրավապահ համակարգերում մասնագետների վերապատրաստումների պակասը, ինչպես նաև խորհրդատվության համար իրավասու մասնագետ գտնելու խնդիրը տուժողների հիմնական մարտահրավերներն են: Սոցիալական, կրթական և առողջապահական բնագավառներում, ինչպես նաև քրեական արդարադատության և իրավապահ ոլորտներում մասնագիտական վերապատրաստման լավագույն փորձի վրա հիմնվելը կենսական կարևորություն ունի: Քրեական արդարադատության և իրավապահ մարմինների մասնագետները պետք է անցնեն գենդերային զգայունություն զարգացնող մասնագիտական ուսուցում և աշխատավայրում վերապատրաստվեն բռնության այս ձևերին վերաբերող վերջին օրենքների, ապացույցների հավաքման և պահպանման, այդ թվում՝ էլեկտրոնային ապացույցների, և առանց տուժողների ցուցմունքների և պատմությունների հավաքագրման ընթացքում վիկտիմիզացիայի ռիսկի վերաբերյալ: Բացի այդ, ապաստան հայցող կանանց գործերով զբաղվող մասնագետները պետք է գենդերազգայուն վերապատրաստումներ անցնեն առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության այն ձևերի վերաբերյալ, որոնք կարող են հանգեցնել հարկադիր միգրացիայի, հատկապես ընտանեկան բռնության համատեքստում:

### Կանխարգելիչ միջամտության և ուղղման ծրագրեր (Հոդված 16)

1) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ այնպիսի աջակցության ծրագրեր ստեղծելու կամ զարգացնելու ուղղությամբ, որոնք կսովորեցնեն ընտանեկան բռնություն կատարողներին միջանձնային հարաբերություններում բռնությունից զերծ վարքագիծ՝ հետագա բռնությունները կանխելու և բռնի վարքի նմուշները փոխելու նպատակով:

2) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ այնպիսի վերականգնողական ծրագրեր հիմնելու կամ զարգացնելու նպատակով, որոնք հետ կպահեն բռնարարներին, մասնավորապես սեռական հանցագործություններ կատարած անձանց, կրկնահանցագործությունից:

3) Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված միջոցները ձեռնարկելիս, Մասնակից պետություններն ապահովում են, որպեսզի տուժողներին տրամադրվող աջակցության անվտանգությունը և նրանց մարդու իրավունքները լինեն հիմնական մտահոգության առարկա և, անհրաժեշտության դեպքում, այս ծրագրերը մշակվեն և իրականացվեն տուժողներին մասնագիտացված աջակցություն տրամադրող ծառայությունների հետ սերտ համագործակցելով:

Կանանց նկատմամբ բռնություն գործադրողների անցանկալի վարքի կանխարգելման և հաղթահարման գոյություն ունեցող մեխանիզմները պետք է զուգորդվեն բռնության թվային տեսակների և դրանց նպաստող կարծրատիպերի, ինչպես նաև օժանդակող տեխնոլոգիական կառուցվածքների և դրանց առանձնահատկությունների վերաբերյալ գենդերային ուսուցմամբ: Եթե նման մեխանիզմները բացակայում են, դրանց նախագծումը պետք է ներառի թվային բռնության ձևերի նկարագրությանը, վերջինիս հատուկ ազդեցությանը, թվային հարթակների հասանելիությանը և թվային բռնության առանձնահատկություններին վերաբերող մոդուլներ:

### Մասնավոր հատվածի և մեդիայի մասնակցությունը (Հոդված 17)

1) Մասնակից պետությունները խրախուսում են մասնավոր հատվածին, տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտին և մեդիային, պատշաճ կերպով պահպանելով արտահայտվելու ազատությունն ու նրանց ինքնուրույնությունը, մասնակցելու համապատասխան քաղաքականությունների մշակմանն ու իրականացմանը, ուղեցույցների և ինքնակարգավորիչ չափորոշիչների ընդունմանը՝ կանանց նկատմամբ բռնությունը կանխելու և նրանց արժանապատվության նկատմամբ հարգանքը բարձրացնելու նպատակով:

2) Մասնակից պետությունները, մասնավոր հատվածի դերակատարների հետ համագործակցելով, զարգացնում են երեխաների, ծնողների կամ ուսուցանողների հմտությունները վարվելու այնպիսի տեղեկատվական կամ հեռահաղորդակցման միջավայրի հետ, որը մատչելի է դարձնում սեռական կամ բռնի բնույթի նվաստացնող նյութերը, որոնք կարող են լինել վնասակար:

Եվրախորհրդի կողմից «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելմանը մասնավոր հատվածի և մեդիայի մասնակցության օժանդակություն՝ Ստամբուլի կոնվենցիայի 17-րդ հոդված» վերտառությամբ հրապարակված փաստաթուղթը Ստամբուլի կոնվենցիայի տարբեր դրույթները բացատրող փաստաթղթերի ժողովածուի մաս է, որը ներկայացնում է կանանց նկատմամբ բռնությունը կանխելու նպատակով պետությունների կողմից մասնավոր հատվածի և մեդիայի հետ համատեղ աշխատանքի չորս ուղղությունները. 1) գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության հետ կապված հարցերի վերաբերյալ մեդիա մասնագետների վերապատրաստումների բարելավումը, 2) լրատվամիջոցների ինքնակարգավորման և խտրական ու բռնի բովանդակության հետ աշխատանքի կարգավորումը, 3) գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանումն ընդլայնելու նպատակով համագործակցությունը և 4) մեդիա գրագիտության ոլորտում համագործակցության զարգացումը (Եվրոպայի խորհուրդ, 2015b):

Մասնավոր հատվածի, տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների հատվածի և մեդիայի դերը բոլոր հարթակներում և իրավախախտման բոլոր գործիքների միջոցով կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ձևերի արդյունավետ հաղթահարման գործում իրոք հիմնարար է: Մասնակից պետությունները պետք է ստեղծեն մոնիթորինգի մեխանիզմներ՝ վերահսկելու տուժողների շահերի պաշտպանության մոտեցումների արդյունավետ ընդգրկումը IoT-ով օժանդակվող «սմարթ» պրոդուկտների նախագծման մեջ՝ արդեն իսկ մշակման փուլում հնարավոր ռիսկերը մեղմելու նպատակով: ՏՀՏ ոլորտի հետ արդյունավետ համագործակցությունը Մասնակից պետությունների համար պետք է առաջնահերթություն լինի, հատկապես արդեն գոյություն ունեցող համագործակցության մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են առցանց ատելության խոսքի վերաբերյալ ԵՄ վարքագծի կանոնները, Եվրոպայի խորհրդի ընկերությունների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում Եվրոպայի խորհրդի գործընկերությունը թվային ընկերությունների հետ, կամ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հատուկ վարքագծի կանոնակարգի մշակումը և կանանց նկատմամբ բռնության

ազգային դիտորդական մարմինների ստեղծումը, որոնք կիրականացնեն հատուկ ծրագրեր և նախաձեռնություններ (Եվրոպայի խորհուրդ, 2017b):

Առցանց հարթակները պետք է ներառվեն մարդու իրավունքների հարցերով միջազգային իրավական շրջանակներում, այդ թվում՝ կանանց իրավունքների գծով, և պետք է ձգտեն բարձրացնել օգտատերերի և տուժողների համար հասանելի կանխարգելման և վնասների փոխհատուցման նախաձեռնությունների վերաբերյալ հաշվետվողականությունը: Այս առումով լավ նախաձեռնություն է Եվրոպայի խորհրդի համագործակցությունը ընկերությունների հետ, որը միավորում է ընկերությունները և կառավարությունները թվային տեխնոլոգիաների ոլորտում մարդու իրավունքների վրա հիմնված քաղաքականություն մշակելու համար: Մասնակից պետությունները պետք է ձգտեն ապահովել առցանց հարթակներում կանանց նկատմամբ իրականացվող ցանկացած տեսակի բռնության վերաբերյալ տվյալների թափանցիկությունը և հասանելիությունը:

Մասնակից պետությունները պետք է նաև խթանեն, որ ՏՀՏ ոլորտը լինի ավելի ընդգրկուն, հատկապես ինտերսեկցիոնալ բնութագրիչներ ունեցող կանանց հարցում, ավելի մանրազնին մոտեցում ապահովելով ապրանքների և գործիքների նախագծմանը և այդ կորպորացիաների կառավարմանը:

Ինչ վերաբերում է մեդիային, Մասնակից պետությունները պարտավոր են ապահովել, որ մեդիան հարգի մարդկային արժանապատվության սկզբունքները և արգելի սեռի վրա հիմնված ցանկացած խտրականությունը, ատելության հրահրումը և կանանց նկատմամբ գենդերային բռնության բոլոր ձևերը: Բռնության առցանց դեպքերի հետ առնչվելիս մեդիան պետք է խուսափի տուժողներին մեղադրող կարծիքներ տարածելուց: Բացի այդ, Մասնակից պետությունները պետք է խթանեն մասնավոր հատվածի, մեդիայի և ՏՀՏ ոլորտների միջև միջոլորտային նախաձեռնությունները՝ պայքարելու կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության բոլոր ձևերի դեմ: Այս նախաձեռնություններն առաջին հերթին պետք է ուղղված լինեն առցանց և նոր տեխնոլոգիաների միջոցով կանանց և աղջիկներին թիրախավորող վնասակար կարծրատիպերի և վարքի դեմ:

## Պաշտպանություն

Ստամբուլի կոնվենցիայի նպատակին՝ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերից և ընտանեկան բռնությունից զերծ Եվրոպա, հասնելու համար տուժողները պետք է հնարավորություն ունենան օգտվելու մի շարք պաշտպանական մեխանիզմներից, որոնք կողմերը պարտավոր են ապահովել: Ինչ վերաբերում է առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությանը, տուժողներին պաշտպանություն և աջակցություն կարելի է տրամադրել մի շարք լուծումների միջոցով:

### Ընդհանուր բնույթի պարտավորություններ (Հոդված 18)

1) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ բռնության հետագա գործողություններից բոլոր տուժողներին պաշտպանելու նպատակով:

2) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծվեն այնպիսի մեխանիզմներ, որոնք արդյունավետ համագործակցություն կապահովեն շահագրգիռ բոլոր գերատեսչությունների միջև, ներառյալ՝ դատական իշխանությունը, դատախազությունը, իրավապահ մարմինները, տեղական և տարածքային իշխանությունները, ինչպես նաև հասարակական կազմակերպություններն ու շահագրգիռ այլ կազմակերպություններն ու գերատեսչությունները, սույն Կոնվենցիայի

առարկա հանդիսացող բռնության ձևերի տուժողներին և վկաներին պաշտպանություն և աջակցություն ապահովելու գործում, ներառյալ՝ սույն Կոնվենցիայի 20-րդ և 22-րդ հոդվածներում թվարկված ընդհանուր բնույթի և մասնագիտացված աջակցության ծառայություններ ուղղորդումը:

3) Մասնակից պետություններն ապահովում են, որպեսզի սույն գլխի համաձայն ձեռնարկված միջոցները հիմնված լինեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության գենդերային ընկալման վրա և ուշադրության կենտրոնում պահեն տուժողի մարդու իրավունքներն ու անվտանգությունը, հիմնված լինեն տուժողների, կատարողների, երեխաների և սոցիալական ավելի լայն միջավայրի միջև առկա փոխհարաբերությունները հաշվի առնող միասնական մոտեցման վրա, ուղղված լինեն կրկնակի վիկտիմիզացիայից խուսափելուն, նպատակաուղղված լինեն բռնությունից տուժած կանանց իրավազորմանն ու տնտեսական անկախության ապահովմանը, թույլ տան, որպեսզի, հնարավորության դեպքում, պաշտպանության և օգնության մի շարք ծառայություններ տեղակայված լինեն միևնույն շենքում, արժանապատիվ խոցելի անձանց, այդ թվում՝ երեխաների հատուկ կարիքներին և հասանելի լինեն նրանց համար:

4) Ծառայությունների տրամադրումը չպետք է կախվածության մեջ դրվի տուժողի կողմից իր բողոքը պնդելու կամ կատարողի դեմ ցուցմունք տալու պատրաստակամության հանգամանքից:

5) Մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ՝ հյուպատոսական պաշտպանություն և այլ տեսակի աջակցություն՝ ապահովելու իրենց քաղաքացիների կամ այլ տուժողների համար, ովքեր նման պաշտպանություն ստանալու իրավունք ունեն այդ Մասնակից պետությունների կողմից միջազգային իրավունքի ներքո ստանձնած պարտավորությունների համաձայն:

Այս հոդվածը սահմանում է, որ Մասնակից պետությունները պետք է մշակեն և իրականացնեն օրենքներ և քաղաքականություն՝ տուժողների կրկնակի վիկտիմիզացիայից խուսափելու համար: Դա հատկապես կարևոր է, առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության պարագայում: Մասնակից պետությունները պետք է ընդունեն օրենքներ կամ մեկնաբանեն գործող օրենսդրությունն այնպես, որ այն արձագանքի կանանց նկատմամբ առցանց սպառնալիքներին, համոզվեն, որ ներպետական օրենսդրությունը և կառավարումը թույլ են տալիս հնարավորինս արդյունավետ ֆորմալ և ոչ ֆորմալ երկխոսություն ծավալել պատասխանատու գերատեսչությունների միջև՝ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տուժողներին պաշտպանելու ուղղությամբ: Այդ արձագանքը պետք է լինի գենդերազգայուն, հաշվի առնի նման բռնության առանձնահատկությունները, ներառյալ այն փաստը, որ այն կարող է տեղի ունենալ ընտանեկան բռնության և հետբռնության համատեքստում, կարող է կրել կրկնվող, շարունակական բնույթ, իրականացվել մի քանի իրավախախտների կողմից և ազդեցություն ունենալ տուժողի և նրա խնամքի տակ գտնվողների կյանքի, հոգեբանական առողջության, նաև ֆիզիկական առողջության վրա: Այս համակարգված արձագանքման մեխանիզմները պետք է նաև հաշվի առնեն այն փաստը, որ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տուժողների վիկտիմիզացիան կարող է կրել շարունակական բնույթ, քանի որ նրանց վրա ազդող հանցավոր վարքագիծը համացանցում մնում է տեսանելի և հասանելի:

### Տեղեկատվություն (Հոդված 19)

Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի տուժողները, իրենց համար հասկանալի լեզվով, համարժեք և ժամանակին տեղեկատվություն ստանան գոյություն ունեցող աջակցության և իրավաբանական ծառայությունների մասին:

Բռնության նոր և ձևավորվող ձևերի համատեքստում, ինչպիսին է վերը դիտարկված բռնության տեսակների շրջանակը, կարևոր է տուժողների համար ապահովել տեղեկատվության հասանելիությունը, ինչպես իրավական բնույթի, այնպես էլ պաշտպանության և աջակցության վերաբերյալ: Առանց այդ տեղեկատվության, որը պետք է լինի մատչելի՝ լեզվի, ներկայացման ձևի առումով, անհրաժեշտության դեպքում նախատեսի ժեստերի լեզվի, բրայլի այբուբենի և այլ առցանց և անցանց միջոցների մատչելիությունը, տուժողները հաճախ հայտնվում են անորոշ վիճակում, չպատկերացնելով, թե ինչ պետք է անեն և ում դիմեն:

### Օգնության ընդհանուր բնույթի ծառայություններ (Հոդված 20)

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի տուժողները կարողանան օգտվել բռնությունից հետո վերականգնմանը նպաստող ծառայություններից: Այս միջոցները, անհրաժեշտության դեպքում, պետք է ներառեն ծառայությունների, մասնավորապես՝ իրավաբանական և հոգեբանական խորհրդատվության տրամադրումը, կացարանով ապահովումը, կրթությունը, վերապատրաստումը և աշխատանք գտնելու գործում աջակցությունը:

2. Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որպեսզի տուժողները հնարավորություն ունենան դիմելու առողջապահական և սոցիալական ապահովության ծառայություններին, և որպեսզի այդ ծառայությունները հագեցած լինեն անհրաժեշտ ռեսուրսներով, իսկ մասնագետները վերապատրաստված լինեն տուժողներին աջակցություն տրամադրելու և համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններ ուղղորդելու գործում:

Մասնակից պետությունները պարտավոր են կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տուժողների համար հասանելի դարձնել աջակցության ծառայությունները: Բռնության այս նոր և ապագայում ձևավորվող տեսակից տուժողների համար հատկապես կարևոր է իրավաբանական և հոգեբանական խորհրդատվությունը՝ կանխելու իրենց հանդեպ մեղադրանքները և տրամադրելու գործիքներ, անհրաժեշտության դեպքում, դատարան դիմելու համար, պահպանելու տուժողի տրված տեղեկությունները, վերականգնման համար աջակցություն և պաշտպանություն ապահովելու: Ընտանեկան բռնության համատեքստում տեխնոլոգիապես օժանդակվող հետապնդման, հետամտման և հոգեբանական բռնության պարագայում տուժողները և նրանց խնամքի տակ գտնվող անձինք պետք է օգտվեն նույն աջակցության և պաշտպանության ծառայություններից, ինչ որ անցանց ընտանեկան բռնության տուժողները: Մասնավորապես, նրանք պետք է կարողանան դիմել աջակցության և պաշտպանության ծառայություններին, որոնք հաշվի կառնեն այդ տեսակի բռնության վիկտիմիզացիայի առանձնահատկությունները, այդ թվում՝ անհնարինությունը մնալու այն տանը, որտեղ խելացի սարքերը նպաստում են նրանց նկատմամբ բռնությանը, կամ վերապատրաստված այնպիսի մասնագետների հետ հանդիպելու հնարավորությունը, որոնք լավատեղյակ են լրտեսող ծրագրերի/հետախուզական ծրագրերի և առցանց հետապնդումների տուժողների համար վտանգավորության մասին:

### Աջակցություն անհատական/կոլեկտիվ բողոքներին (Հոդված 21)

Մասնակից պետություններն ապահովում են, որպեսզի տուժողները տեղեկացված լինեն անհատական/կոլեկտիվ բողոքարկման տարածաշրջանային և միջազգային առկա մեխանիզմների մասին և հնարավորություն ունենան օգտվելու դրանցից: Մասնակից պետությունները խթանում են տուժողներին գենդերազգայուն և կոմպետենտ աջակցության տրամադրումը՝ այդ բողոքները ներկայացնելիս:

Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տուժողները պետք է տեղեկացված լինեն, որ ազգային գործիքների սպառված լինելու դեպքում նրանք կարող են օգտ-

վել անհատական կամ կոլեկտիվ տարածաշրջանային կամ միջազգային բողոքարկման մեխանիզմներից և համապատասխան աջակցություն ստանալ:

**Մասնագիտացված օգնության ծառայություններ (Հոդված 22)**

> 1) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի տուժողներին աշխարհագրական համարժեք ընդգրկում ունեցող անհապաղ, մասնագիտական աջակցության երկարաժամկետ և կարճաժամկետ ծառայություններ տրամադրելու կամ կազմակերպելու նպատակով:
>
> 2) Մասնակից պետությունները կանանց տրամադրում են մասնագիտական աջակցության ծառայություններ կամ կազմակերպում են դրանց տրամադրումը բռնության բոլոր տուժողների և նրանց երեխաների համար:

Այս հոդվածը լրացնում է 20-րդ հոդվածը՝ ներկայացնելով, որ բոլոր տուժողները կարող են օգտվել անհետաձգելի պաշտպանությունից և աջակցությունից, ներառյալ իրենց կոնկրետ դեպքի վերաբերյալ խորհրդատվությունից: Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տուժողներին պետք է տրամադրել անհետաձգելի պաշտպանություն, հատկապես, երբ իրավախախտումը տեղի է ունենում ընտանեկան բռնության համատեքստում և տուժողի կամ նրա խնամքի տակ գտնվողների մոտ անպաշտպանության զգացում է առաջացնում: Սոցիալական մեդիայի կամ տուժողի հեռախոսի, պլանշետի ու համակարգչի վրա տեղադրված կամ Իրերի համացանցի այլ տեխնոլոգիական գործիքները, ինչպիսիք են խելացի կողպեքները կամ աշխարհագրական տեղորոշման գործիքները, պետք է տուժողին հնարավորություն ընձեռեն դիմելու անհետաձգելի պաշտպանության և օգնության համար հարկադրանքի և վերահսկման պայմաններում: Պետք է ապահովվեն մարդկային, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներով հագեցած խորհրդատվական ծառայություններ՝ տուժող կանանց և աղջիկների իիմնախնդիրներին վերաբերող խորհրդատվություն տրամադրելու համար: Այդ առումով, որոշ կազմակերպություններ պաշտպանում են «ընտանեկան/գենդերային հիմքով լուրջ բռնության համատեքստում առցանց կամ տեխնոլոգիապես օժանդակվող հետամտման և/կամ հոգեբանական բռնության տուժողին, ով չի կարող խուսափել բռնարարի կողմից իրականացվող վերահսկողությունից, չի կարող օգտվել ինքնությունը փոփոխելու (օրինակ՝ անվան) հնարավորությունից»[29]:

**Օգնության թեժ գծեր (Հոդված 24)**

> Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նախատեսելու առանց հանգստյան օրերի, շուրջօրյա ռեժիմով (24/7) գործող օգնության համապետական հեռախոսահամարների ստեղծումը, որոնք գաղտնիության կամ անանունության սկզբունքներին համաձայն զանգահարողներին խորհրդատվություն կտրամադրեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությանը, տուժողների համար չափազանց կարևոր է, որպեսզի նրանք շուրջօրյա ռեժիմով կարողանան օգտվել թեժ գծերից, զրուցարանի կամ ակնթարթային հաղորդագրություն ուղարկելու ծառայություններից, թե՛ իրենց երկրում, թե՛ արտերկրում՝ իրենց նկատմամբ գործադրված բռնության վերաբերյալ խորհրդատվություն, ինչպես նաև անհետաձգելի առաջին քայլերը ձեռնարկելու մասին տեղեկատվություն (օրինակ՝ սքրինշոթերի կամ ձայնագրությունների միջոցով ապացույցները պահելու) ստանալու նպատակով և տեղեկացվեն իրավական պաշտպանության հնարավոր միջոցների մասին:

29. Հարցազրույց Ֆլորիան Վոլտի և Լուիզա Բերիոյի հետ «Force Juridique de la Fondation des Femmes»-ից (https://fondationdesfemmes.org/), 2020 թվականի սեպտեմբերի 24, թարգմանված հեղինակի կողմից:

### Աջակցություն սեռական բռնության տուժողներին (Հոդված 25)

Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նախատեսելու բռնաբարության կամ սեռական բռնության զոհերի համար բավարար քանակությամբ հասանելի ճգնաժամային կենտրոնների ստեղծումը, որոնք կապահովեն տուժողների համար դատաբժշկական և այլ փորձաքննություններ, հետտրավմատիկ խնամք և խորհրդատվություն:

Սեռական բռնության ճգնաժամային կենտրոններում կամ գրասենյակներում տուժողի հետ պետք է համակարգված ձևով հարցազրույց անցկացվի իր նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հետապնդման, հետամտման կամ հոգեբանական բռնության վերաբերյալ, բացահայտելով բռնաբարության կամ սեռական բռնության դեպքերում թվային տեխնոլոգիաների հնարավոր օժանդակությունը: Անհետաձգելի կամ երկարաժամկետ խորհրդատվություն առաջարկող ծառայությունները պետք է հագեցած լինեն համապատասխան հնարավորություններով՝ խորհրդատվություն և աջակցություն տրամադրելու, օրինակ՝ տեսագրված բռնաբարության դեպքում՝ խորը գիտակցելով դրա հետևանքով առաջացող լրացուցիչ տրավման և վիկտիմիզացիան:

### Պաշտպանություն և աջակցություն անչափահաս վկաներին (Հոդված 26)

1) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու, որպեսզի բռնության բոլոր տուժողներին ծառայություններ և աջակցություն տրամադրելիս, պատշաճ կերպով հաշվի առնվեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերին ականատես դարձած անչափահաս վկաների իրավունքներն ու կարիքները:

2) Այս հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցները ներառում են սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերին ականատես դարձած անչափահաս վկաների տարիքին համապատասխանող հոգեբանական խորհրդատվության տրամադրումը և պատշաճ կերպով հաշվի են առնում երեխայի լավագույն շահը:

Այս հոդվածը կարել է մեկնաբանել Ստամբուլի կոնվենցիայի 31-րդ հոդվածի հետ համակցությամբ՝ Խնամակալություն, այցելության իրավունք և անվտանգություն (Գլուխ V, Նյութական իրավունք):

Ինչպես նշվեց վերևում, բռնարարը հաճախ ներքաշում է երեխաներին իրենց մոր առցանց հետամտմանը՝ երեխայի անձնական հեռախոսի կամ պլանշետի միջոցով: Covid-19-ի սահմանափակումների շրջանում ավելացել են նաև խնամակալ չհանդիսացող ծնողների՝ իրենց երեխաների հետ թվային եղանակով շփումները: Ուղնձգության այս ձևն իր մեջ կրում է տուժողի և նրա երեխաների ռեվիկտիմիզացիայի վտանգը, երբ բռնի (նախկին) զուգընկերը, երկրորդ կամ բռնի ծնողը ի վիճակի են «տեղեկություններ կորզել իրենց նախկին զուգընկերոջ կյանքի մասին այն ամենից, ինչ նրանք տեսնում են հետին պլանում տեսազանգի ժամանակ, և օգտագործել երեխաներին այնպիսի հարցեր տալու համար, որոնք կարող են վտանգել մյուս ծնողի անվտանգությունը» (Klein, 2020թ.): Ռեվիկտիմիզացիայի այդ հատուկ ռիսկերը պետք է հաշվի առնվեն անչափահաս վկաների և զոհակիցների հոգեսոցիալական խորհրդատվության ժամանակ: 31-րդ հոդվածը հավելում է, որ «Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի երեխաների նկատմամբ խնամակալության և այցելության իրավունքների վերաբերյալ որոշումներ կայացնելիս, հաշվի առնվեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության դեպքերը»:

### Հաղորդումների ներկայացում և մասնագետների կողմից հաղորդումների ներկայացում (27-րդ և 28-րդ հոդվածներ)

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ խրախուսելու, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության գործողության ականատես դար-

ձած, նման գործողություն կատարված լինելու կամ  հետագայում ակնկալելու ողջամիտ հիմքեր ունեցող ցանկացած անձ այդ մասին հաղորդում ներկայացնի իրավասու մարմնին կամ կազմակերպությանը (Հոդված 27):

Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ներքին օրենսդրությամբ որոշ մասնագետներին ներկայացվող գաղտնիության կանոնները խոչընդոտ չհանդիսանան նրանց կողմից իրավասու մարմիններին կամ կազմակերպություններին համապատասխան հաղորդումներ ներկայացնելու համար, որոշակի պայմանների առկայության դեպքում՝ եթե նրանք ողջամիտ հիմքեր ունեն ենթադրելու, որ կատարվել է կամ ակնկալվում է սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության որևէ ծանր գործողություն կամ (Հոդված 28):

Հաշվի առնելով իրենց երկրներում քրեականացված հետապնդման, հետամտման և հոգեբանական բռնության առցանց ձևերը, համացանցային հարթակների օգտատերերը պետք է կարողանան մուտք գործել անհապաղ հաղորդման համակարգեր՝ ինչպես ծառայություններ մատուցողների, այնպես էլ իրավապահ մարմինների հարթակներում: Հանրային աղբյուրներում առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեպքերին հանդիպող մասնագետները պետք է հնարավորություն ունենան դրանց մասին հաղորդելու իրավապահ մարմինների հարթակներում և/կամ անմիջապես ոստիկանական բաժանմունքում:

## Քրեական հետապնդում

Առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության քրեական հետապնդման գործընթացում ինչպես տուժողները, այնպես էլ դատապաշտպանները բախվում են բազում մարտահրավերների հետ: Դժվարությունների զգալի մասը պայմանավորված է այս նոր տեսակի բռնության դեմ պայքարելու համար համապատասխան իրավական դաշտի բացակայությամբ: Մյուս դժվարությունները կապված են արդարադատության ոլորտի մասնագետների անբավարար վերապատրաստումների հետ, ինչպես նաև նախադեպային իրավունքի միջոցով գործող օրենքներում գենդերային հիմքերով կիբերհանցագործությունների կամ անձնական տվյալների անձեռնմխելիության խախտման հետ կապված հանցագործությունների ինտեգրման ցանկության և շարժառիթների բացակայության հետ: Անհրաժեշտ ապացույցներ ապահովելու համար  որակավորված քննիչների անբավարար թիվը նույնպես խոչընդոտում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության արդյունավետ քրեական հետապնդմանը:

Որոշ դժվարություններ պայմանավորված են նաև առցանց տիրույթի բնույթով՝ այն փաստով, որ ապացույցների զգալի մասն այժմ էլեկտրոնային է և այդ ապացույցները կարող են պատճենվել, տարածվել կամ ընդհակառակը՝ ջնջվել կամ փոփոխվել մեկ հպումով: Դատարանի համար էլեկտրոնային ապացույցների վավերության խնդրից բացի, այլ երկրից կամ ծառայություններ մատուցողից կարևոր ապացույցներ ստանալը իրավապահ մարմինների համար հաճախ շատ դժվար է, եթե ոչ անհնարին: Այս ապացույցները կարող են նաև ամպի մեջ պահվել՝ առաջացնելով դրանց հասանելիության հետ կապված իրավական խնդիրներ:

Քանի որ … ֆիզիկական աշխարհում հանցագործությունները գնալով ավելի հաճախ էլեկտրոնային ապացույցներ են ենթադրում, օրենքի գերակայությունը վտանգված է ոչ միայն կիբերտարածքում, այլև ֆիզիկական աշխարհում: Հետաքննության, հանրային անվտանգության և մարդու իրավունքների պաշտպանության հնարավորությունների կրճատումը, վերջին հաշվով, նշանակում է … կամայականություն կամ տուժողներին առանց ար-

դարադատության թողնել[30]:

Բազմաթիվ իրավական փաստաթղթեր միտված են էլեկտրոնային ապացույցների հասանելիությունն ապահովելուն կամ արգելափակելուն, մասնավորապես՝ «Ամպի մասին օրենքը» և Հյուսիսամերիկյան իրավական շրջանակը, որը կարգավորում է ԱՄՆ-ում պահվող էլեկտրոնային ապացույցների հասանելիությունը: Սակայն պետությունների, միջազգային համաձայնագրերի մասնակիցների, մասնակից և ոչ մասնակից պետությունների, ինչպես նաև պետությունների և կորպորացիաների միջև հարաբերությունները կարգավորող ընթացակարգերի բարդությունը տուժողների մեծ մասի համար չափազանց դժվարացնում է իրենց իրավական պաշտպանության գործընթացի արդյունավետությունը: Բուդապեշտի կոնվենցիայի ակնկալվող երկրորդ լրացուցիչ արձանագրությունում նախատեսվում է լուծել էլեկտրոնային ապացույցների հասանելիության և միջազգային համագործակցության հետ կապված այդ մարտահրավերներից մի քանիսը՝ օրենքի գերակայության և մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան, ապահովելով, որպեսզի կառավարությունները կատարեն կիբերտարածությունում անհատների և նրանց իրավունքների պաշտպանության իրենց պարտավորությունները:

Ստամբուլի կոնվենցիայի մեծագույն արժեքը կայանում է նրանում, որ այն կանանց նկատմամբ գենդերային բռնությունը ճանաչում է որպես բռնություն, որն ուղղված կանանց, որովհետև նրանք կին են: Բուդապեշտի կոնվենցիան լրացնում է այդ մոտեցումը, երկու կոնվենցիաների Մասնակից պետություններին տրամադրելով երկակի հանցավորության դեպքերի համար նախատեսված հատուկ գործիքներ՝ դրանք արդյունավետորեն քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Բուդապեշտի կոնվենցիայի առաջիկա երկրորդ լրացուցիչ արձանագրության հեղինակները նախատեսում են արագացնել փոխադարձ իրավական օգնության (ՓԻՕ) ընթացակարգերը (ներկայումս այն կարող է տևել մինչև 18 ամիս), ինչը թույլ կտա իրավապահ մարմիններին ավելի արդյունավետ մուտք գործել մեկ այլ երկրում պահվող էլեկտրոնային ապացույցներ՝ նախատեսելով համագործակցության հնարավորություններ արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև նպաստելով մեկ այլ երկրի համացանցային ծառայություններ մատուցողի հետ ուղղակի համագործակցությանը: Երկրորդ արձանագրությունը նաև կնպաստի դոմենային անունների գրանցման մասին տեղեկատվության տրամադրմանը (երբեմն այն կարևոր է իրավախախտներին բացահայտելու և նրանց պատասխանատվությունը հստակեցնելու համար) և կկարգավորի իրավահամակարգերով և տարածքներով պայմանավորված մի շարք մարտահրավերներ[31]:

Այս քայլերը կնպաստեն մեծ թվով ընթացակարգերի կիրառմանը, այդ թվում՝ կին տուժողների շահերի պաշտպանությանը միտված:

Այժմ կզնահատենք Ստամբուլի կոնվենցիայի մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են քրեական հետապնդման ոլորտին՝ Բուդապեշտի կոնվենցիայի դրույթներով լրացված (կիրառելիության դեպքում), որոնք ընդլայնում են կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության վերաբերյալ Ստամբուլի կոնվենցիայի դրույթները: Բուդապեշտի կոնվենցիայի մի շարք այլ դրույթներ, որոնք վերաբերում են գենդերային հիմքով կիբերհանցագործություններին նույնպես կվերլուծվեն:

---

30. Կիբերհանցագործությունների դեմ կոնվենցիայի կոմիտե (T-CY), Քրեական արդարադատության համար ամպի մեջ էլեկտրոնային ապացույցների հասանելիությունը. Առաջարկություններ T-CY-ի կողմից քննարկման համար, T-CY-ի «Cloud Evidence» (ամպային ապացույցներ) խմբի եզրափակիչ զեկույց, 2016թ., հասանելի՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806a495e:

31. Հարցազրույց Կիբերհանցագործությունների դեմ պայքարի բաժնի ղեկավար և Կիբերհանցագործությունների դեմ Կոնվենցիայի կոմիտեի գործադիր քարտուղար Ալեքսանդր Սեգերի հետ, սեպտեմբեր 2020 թ., www.coe.int/en/web/cybercrime/tcy:

Հետևյալ բաժինը գնահատում և արձանագրում է Ստամբուլի կոնվենցիայի դրույթների համապատասխանությունը կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության քրեական հետապնդման խնդրին, համալրելով այն հետաքննության և դատավարական իրավունքի վերաբերյալ Բուդապեշտի կոնվենցիայի դրույթներով: Դրան հաջորդում է միջազգային համագործակցության դրույթների գնահատումը:

### Ընդհանուր բնույթի պարտավորություններ (Հոդված 49)

1) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի դրսևորման դեպքերով նախաքննական և դատական վարույթներն իրականացվեն առանց անհարկի ձգձգումների՝ միաժամանակ քրեական դատավարության բոլոր փուլերում հաշվի առնելով տուժողի իրավունքները:

2) Մասնակից պետությունները, մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին և բռնության գենդերային ընկալմանը համապատասխան, ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի սույն Կոնվենցիայի համաձայն նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերի քննությունն ու դրանցով քրեական հետապնդման իրականացումը կատարվեն արդյունավետ կերպով:

Այս դրույթն ընդգծում է կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի քրեական հետապնդման հրատապ անհրաժեշտությունը, խուսափելով «հետաքննության և դատական գործընթացների թերարժևորումից, որն էապես նպաստում է իրավախախտների անպատժելիության զգացողությանը և բռնության համատարած հանդուրժմանը» (Եվրոպայի խորհուրդ, 2011b): Սա վերաբերում է նաև բռնության նոր և ձևավորվող համատեքստերին, օրինակ՝ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությանը: Այս դրույթը կարող է նաև նպաստել Բուդապեշտի կոնվենցիայի տեքստի «գենդերացմանը»՝ ճանաչելով կանանց նկատմամբ առցանց բռնության հետաքննության և քրեական հետապնդման կարևորությունը:

### Հրատապ արձագանք, կանխարգելում և պաշտպանություն (Հոդված 50)

1) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի պատասխանատու իրավապահ մարմինները սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերին հրատապ և պատշաճ կերպով արձագանքեն՝ տուժողների համար ապահովելով համարժեք և անհետաձգելի պաշտպանություն:

2) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները, որպեսզի պատասխանատու իրավապահ մարմինները հրատապ և պատշաճ կերպով ներգրավված լինեն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի կանխարգելմանն ու դրանցից պաշտպանություն տրամադրելուն, ներառյալ՝ կանխարգելիչ գործուն միջոցների կիրառումը և ապացույցների հավաքագրումը:

Իրավապահ մարմինները պետք է կարողանան արագ արձագանքել և անհրաժեշտ պաշտպանություն տրամադրեն տուժողներին, ինչպես նաև ներգրավվեն կանխարգելման և պաշտպանության նախաձեռնություններում, ինչպիսիք են կանխարգելիչ գործառնական միջոցառումները և ապացույցների հավաքումը: Բռնության առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող ձևերի դեպքում իրավապահ մարմինների կողմից դրանց արագ նույնականացումը նպաստում է ապացույցների հավաքման գործընթացի բարելավմանը:

Այս առումով, Բուդապեշտի կոնվենցիայի 16-ից 21-րդ հոդվածները լրացնում են Ստամբուլի կոնվենցիայի 50-րդ հոդվածը՝ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության քրեական հետապնդման տեսանկյունից և Մասնակից պետություններին ավելի հստակ ցուցումներ են տալիս՝ իրենց ներպետական քրեական դատավարությունում էլեկտրոնային ապացույցների ապահովման համար ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ:

**Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 16 (Համակարգչում առկա տվյալների արագ պահպանումը)**

1) Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք հնարավորություն կտան իրավասու մարմիններին կարգավորել կամ ձեռք բերել որոշակի համակարգչային տվյալների արագացված պաշտպանություն, ներառյալ փոխանցվող տվյալները, որոնք պահվում են թվային համակարգում, մասնավորապես, երբ հիմքեր կան ենթադրելու, որ համակարգչային տվյալները խոցելի են՝ կարող են կորչել կամ փոփոխվել:

2) Երբ Մասնակից պետությունը կատարում է վերոհիշյալ 1-ին կետը՝ անձին կարգադրելով պահպանել անձի տիրապետման կամ հսկողության ներքո գտնվող և պահպանված որոշակի համակարգչային տվյալներ, Մասնակից պետությունը պարտավոր է ընդունել այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ պարտավորեցնելու տվյալ անձին պահպանել և ապահովել տվյալ համակարգչային տվյալների անձեռնմխելիությունը այնքան ժամանակ, որքան կարող է անհրաժեշտ լինել, չգերազանցելով իննսուն օրը, որպեսզի իրավասու մարմինները հնարավորություն ստանան պահանջել այդ տվյալների բացահայտում: Մասնակից պետությունը կարող է նախատեսել, որպեսզի նման կարգադրությունը հետագայում ենթակա լինի երկարաձգման:

3) Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են պարտավորեցնելու համար տվյալները տիրապետողին և այն անձին, որը պահպանում է համակարգչային տվյալները, ապահովել ընթացակարգի գաղտնիությունը ներպետական օրենսդրությամբ նախատեսված ժամանակահատվածում:

Բուդապեշտի կոնվենցիայի բացատրական զեկույցում նշվում է, որ.

16-րդ և 17-րդ հոդվածներով նախատեսված միջոցները վերաբերում են պաշտպանվող տվյալներին, որոնք արդեն հավաքվել և պահպանվել են տվյալների սեփականատերերի կողմից, ինչպիսիք են ծառայություններ մատուցողները: ... համակարգչային տվյալների անկայունության պատճառով տվյալները հեշտությամբ կարող  են մանիպուլյացվել կամ փոփոխվել: Այսպիսով, հանցագործության արժեքավոր ապացույցները կարող են հեշտությամբ կորել անզգույշ վարման և պահպանման պրակտիկայի պատճառով, կանխամտածված մանիպուլյացիայի կամ ջնջելու հետևանքով, որի նպատակն է ոչնչացնել ապացույցները կամ կանոնավոր ջնջել այն տվյաները, որոնց պահպանումն այլևս չի պահանջվում: Դրանց անձեռնմխելիությունը պահպանելու եղանակներից մեկն այն է, որ իրավասու մարմինները որոնեն կամ այլ կերպով մուտք գործեն և առգրավեն կամ պաշտպանեն տվյալները: ... Համակարգչային և համակարգիչներին առնչվող հանցագործությունները մեծ մասամբ կատարվում են թվային համակարգի միջոցով հաղորդակցության հոսքի ընթացքում: ... Նման հաղորդակցության աղբյուրի կամ նպատակակետի նույնականացումը կօգնի բացահայտել իրավախախտների ինքնությունը (Եվրոպայի խորհուրդ, 2001b):

**Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 17 (Փոխանցվող տվյալների արագ պահպանումը և մասնակի տրամադրումը)**

> 1) Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է 16-րդ հոդվածի համաձայն պաշտպանված փոխանցվող տվյալների վերաբերյալ այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են. ա) ապահովելու, որ այդպիսի փոխանցվող տվյալների արագ պահպանումը հնարավոր լինի՝ անկախ նրանից՝ թե քանի ծառայություն տրամադրողներ են ընդգրկված եղել տվյալ հաղորդակցության փոխանցման մեջ, և բ) ապահովելու Մասնակից պետության իրավասու մարմնին կամ վերջինիս կողմից նշանակված անձին բավարար քանակությամբ փոխանցվող տվյալների արագ տրամադրումը, որը հնարավորություն կտա Մասնակից պետությանը նույնականացնելու ծառայություն տրամադրողներին և այն ուղին, որի միջոցով հաղորդակցությունը փոխանցվել է:
>
> 2) Սույն հոդվածում սահմանված իրավասություններն ու ընթացակարգերը 14-րդ և 15-րդ հոդվածների կարգավորման առարկա են:

«Նախկին հաղորդակցությունների վերաբերյալ պահված փոխանցվող տվյալները ստանալը կարևոր է դրանց աղբյուրը կամ նպատակակետը հայտնաբերելու առումով (տե՛ս նույն տեղը): Հետևաբար, հասանելիությունը շատ կարևոր է իրավախախտներին բացահայտելու համար, նույնիսկ եթե

> ծառայությունների որևէ մատուցող չունի բավարար չափի կարևոր փոխանցվող տվյալներ հաղորդակցության իրական աղբյուրը կամ նպատակակետը որոշելու համար: Յուրաքանչյուրի մոտ գտնվում է հանելուկի մի մասը, և այդ մասերից յուրաքանչյուրը պետք է ուսումնասիրվի աղբյուրը կամ նպատակակետը բացահայտելու համար... Հոդված 17-ը պնդում է, որ եթե հաղորդակցության փոխանցման մեջ ներգրավված են եղել մեկ կամ մի քանի ծառայություններ մատուցողներ, բոլոր ծառայություններ մատուցողների միջև փոխանցվող տվյալների արագացված ընթացակարգով պաշտպանությունը կարող է տուժել (տե՛ս նույն տեղը):

**Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 18 (Տեղեկատվություն տրամադրելու որոշում)**

> 1) Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել իրավասու մարմիններին լիազորելու պահանջել՝ ա) որ իր տարածքում գտնվող անձը տրամադրի իր տրամադրության կամ հսկողության տակ եղած որոշակի համակարգչային տվյալներ, որոնք պահվում են որևէ համակարգչում կամ համակարգչային տվյալների պահման միջոցում, և բ) որ Մասնակից պետության տարածքում ծառայություն տրամադրողը ներկայացնի իր տրամադրության կամ հսկողության տակ գտնվող տեղեկատվությունը բաժանորդների մասին:

Այս հոդվածը կարևոր է, քանի որ այն թույլ է տալիս քրեական հետաքննություն և դատավարություն իրականացվող կողմին կարգադրել, որ անձը ներկայացնի որոշակի համակարգչային տվյալներ, եթե այդ անձը գտնվում է իր տարածքում (Հոդված 18.1*ա*), և կարգադրել ծառայություն մատուցողին ներկայացնել բաժանորդի մասին տեղեկություններ, եթե վերջինս ծառայությունները մատուցում է իր երկրի տարածքում՝ առանց այդ երկրում գտնվելու պահանջի (Հոդված 18.1*բ*)[32]: Բաժանորդների մասին տեղեկությունները հաճախ քրեական հետաքննության համար հիմնական տեղեկատվությունն են, քանի որ դրանք, ի թիվս այլ տեղեկությունների, կարող են պարունակել ենթադրյալ հանցագոր-

---

32. Եվրոպայի խորհուրդ, (2017) T-CY ուղեցույց թիվ 10 Բաժանորդների մասին տեղեկատվություն տրամադրելու որոշումների վերաբերյալ, հասանելի՝ https://rm.coe.int/16806f943e:

ծի (կամ երկրորդական հանցագործ(ներ)ի IP հասցեն[33]: Երկրորդ. լրացուցիչ արձանագրությունը կպարունակի այլ կողմերի մատակարարների և կազմակերպությունների հետ անմիջական համագործակցությունը ընդլայնող ընթացակարգեր, համապատասխան երաշխիքներով՝ հաշվի առնելու եզակի պահանջները, որոնք բխում են մեկ երկրի իշխանությունների անմիջական համագործակցությունից մյուս երկրում գտնվող ծառայություններ մատուցողների հետ:

**Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 19 (Պահվող համակարգչային տվյալների որոնում և առգրավում)**

> 1) Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ լիազորելու համար իր իրավասու մարմիններին իր տարածքում որոնելու կամ մուտք գործելու. ա) որևէ թվային համակարգ կամ դրա մի մասը և այնտեղ պահվող համակարգչային տվյալների մեջ, և բ) համակարգչային տվյալների պահման որևէ կրիչ, որում կարող են պահված լինել համակարգչային տվյալները:

Այս հոդվածը կողմերից պահանջում է մշակել օրենքներ, որոնք իրավասու մարմիններին թույլ են տալիս մուտք գործել իրենց երկրի տարածքում գտնվող թվային համակարգեր և սերվերներ: «Սույն հոդվածը նպատակ ունի արդիականացնել և ներդաշնակեցնել պահված համակարգչային տվյալների որոնման և առգրավման մասին ներպետական օրենքները՝ քրեական հետաքննության կամ վարույթի վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու նպատակով» (Եվրոպայի խորհուրդ, 2001b):

**Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 20 (Փոխանցվող տվյալների հավաքումն իրական ժամանակում)**

> 1) Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ լիազորելու իր իրավասու մարմիններին. ա) տվյալ Մասնակից պետության տարածքում տեխնիկական միջոցների կիրառմամբ հավաքելու կամ գրանցելու համար, և բ) ծառայություն տրամադրողին հարկադրելու համար՝ վերջինիս ունեցած տեխնիկական հնարավորությունների սահմաններում. i) հավաքել կամ գրանցել տվյալ Մասնակից պետության տարածքում տեխնիկական միջոցների կիրառմամբ, կամ ii) իրավասու մարմինների հետ համագործակցել և նրանց աջակցել իրական ժամանակում փոխանցվող տվյալների հավաքման գործում, որոնք կապված են իր տարածքում թվային համակարգի միջոցով որոշակի հաղորդակցության հետ:

Փոխանցվող տվյալները կարևոր են հետաքննության համար, քանի որ դրանք ցույց են տալիս կայքի այցելուների թիվը, օրինակ՝ երբ են կասկածյալները միանում համացանցին կամ հաղորդակցվում այնտեղ, որ ծառայություն մատուցողի միջոցով է դա իրականացվում (էլ. փոստի օպերատոր, ամսաթիվ, ժամ, կեղծանուն):

> Նման եղանակները հաճախ վճռորոշ են Կոնվենցիայով սահմանված տարբեր իրավախախտումների հետաքննության համար, ինչպիսիք են թվային համակարգերին անօրինական մուտքը, վիրուսների և մանկական պոռնոգրաֆիայի տարածումը: Օրինակ՝ ներխուժման կամ բաշխման աղբյուրը որոշ դեպքերում հնարավոր չէ որոշել առանց իրական

---

33. «Քրեական հետաքննության ընթացքում բաժանորդի մասին տեղեկատվությունը կարող է պահանջվել հիմնականում երկու կոնկրետ իրավիճակում: Նախ, բաժանորդի մասին տեղեկատվությունը անհրաժեշտ է պարզելու համար, թե որ ծառայություններն ու հարակից տեխնիկական միջոցներն են օգտագործվել կամ օգտագործվում բաժանորդի կողմից, օրինակ՝ օգտագործված հեռախոսային ծառայության տեսակը (օրինակ՝ բջջային հեռախոսակապ), այլ հարակից ծառայությունները (զանգերի վերահասցեավորումը, ձայնային փոստը և այլն), հեռախոսահամարը կամ այլ տեխնիկական հասցեն (օրինակ՝ էլ. փոստի հասցեն): Երկրորդ, տեխնիկական հասցեն հայտնի լինելու դեպքում, անհրաժեշտ է բաժանորդի մասին տեղեկատվությունը՝ պարզելու համար համապատասխան անձի ինքնությունը: Բաժանորդների մասին այլ տեղեկությունները, ինչպիսիք են բաժանորդի ծախսերի և վճարումների մասին առևտրային բնույթի տեղեկությունները, նույնպես կարող են կարևոր լինել քրեական հետաքննության համար, հատկապես, երբ հետաքննվող հանցագործությունը վերաբերում է համակարգչային խարդախության կամ այլ տնտեսական հանցագործություններին (Եվրոպայի խորհուրդ, 2001b):

ժամանակում փոխանցվող տվյալների հավաքման: Որոշ դեպքերում հաղորդակցության բնույթը հնարավոր չէ բացահայտել առանց իրական ժամանակում բովանդակային տվյալների գաղտնալսման (տե՛ս նույն տեղը):

**Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 21 (Բովանդակային տվյալների գաղտնալսումը)**

1) Յուրաքանչյուր Մասնակից պետություն ընդունում է այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ, որոնք թույլ կտան իր իրավասու մարմիններին ներպետական օրենսդրությամբ սահմանված մի շարք լուրջ հանցանքների դեպում. ա) հավաքել կամ գրանցել տվյալներ այդ Մասնակից պետության տարածքում տեխնիկական միջոցների կիրառմամբ, և բ) ծառայություն տրամադրողին հարկադրել՝ վերջինիս ունեցած տեխնիկական հնարավորությունների սահմաններում. i) հավաքել կամ գրանցել տվյալներն այդ Մասնակից պետության տարածքում տեխնիկական միջոցների կիրառմամբ, կամ ii) համագործակցել իրավասու մարմինների հետ և աջակցել նրանց իրական ժամանակում թվային համակարգի միջոցով իր տարածքում փոխանցվող որոշ հաղորդակցությունների բովանդակային տվյալների հավաքման և գրանցման գործում:

Բովանդակային տվյալները առավել գաղտնի բնույթ ունեն, քանի որ դրանք պարունակում են այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են տեքստը, պատկերները, լուսանկարները, տեսանյութերը, ձայնը և այլն: Հետևաբար, տվյալների այլ ձևերի համեմատ դրանց նկատմամբ գործում են տվյալների պաշտպանության ավելի խիստ կանոններ: Նույնիսկ քրեական հետաքննության համատեքստում «Բովանդակային տվյալների հետ կապված գաղտնիության ավելի բարձր պահանջի պատճառով քննչական միջոցները սահմանափակվում են «ներպետական օրենսդրությամբ որոշվող ծանր հանցագործությունների շրջանակով» (տե՛ս նույն տեղը):

Ինչպես տեսանք, Բուդապեշտի կոնվենցիայի 16-ից 21-րդ հոդվածները լրացնում են Ստամբուլի կոնվենցիայի 50-րդ հոդվածը:

Դատավարության վերաբերյալ Ստամբուլի կոնվենցիայի մյուս դրույթները կարելի է վերլուծել՝ հաշվի առնելով բռնության այս տեսակները:

**Ստամբուլի կոնվենցիայի հոդված 51 (Ռիսկի գնահատում և ռիսկի կառավարում)**

1) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի բոլոր շահագրգիռ մարմինները կատարեն մահ պատճառելու ռիսկի, իրավիճակի լրջության և բռնության կրկնվելու ռիսկի գնահատումը՝ համապատասխան ռիսկը կառավարելու և անհրաժեշտության դեպքում համակարգված ձևով անվտանգություն և աջակցություն ապահովելու համար:

2) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն հոդվածի 1-ին մասում նշված ռիսկի գնահատման ընթացքում քննության պաշտպանության միջոցների կիրառման յուրաքանչյուր դեպքում պատշաճ կերպով հաշվի առնվի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության գործողություններ կատարողների մոտ հրազենի առկայությունը կամ դրա հասանելիությունը:

Իրոք, կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության շատ ձևեր պարունակում են կյանքին սպառնացող իրավիճակների վերածվելու վտանգ: Ինչպես ծանոթացանք վերևում՝ սեռական բռնությանը կարող են նախորդել առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող սպառնալիքները և հետամտումը: Ընտանեկան բռնության համատեքստում այն էլ ավելի տարածված է: Հետևաբար՝ ընտանեկան բռնության տուժողների համար պետք է հասանելի լինեն համակարգված անվտանգության և աջակցության մեխանիզմները, նաև այն դեպքում, երբ այն պա-

րունակում է առցանց կամ նոր տեխնոլոգիաների օժանդակությամբ իրականացվող բռնության տեսակներ:

### Ստամբուլի կոնվենցիայի հոդված 52 (Անհետաձգելի միջամտության որոշումներ) և հոդված 53 (Արգելող կամ պաշտպանական որոշումներ)

> Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի իրավասու մարմինները, վերահաս վտանգի առկայության պայմաններում, լիազորված լինեն կարգադրելու, որպեսզի ընտանեկան բռնություն կատարողը բավարար ժամանակով հեռանա տուժողի կամ վտանգի տակ գտնվող անձի բնակարանից կամ արգելելու բռնարարին, որպեսզի նա վերադառնա կամ շփում ունենա տուժողի կամ վտանգի տակ գտնվող անձի հետ: Սույն հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցները նախապատվությունը տալիս են տուժողների կամ վտանգի տակ գտնվող անձանց անվտանգությունը (Հոդված 52):
>
> 1) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի տուժողների համար առկա լինի արգելող կամ պաշտպանության համապատասխան կարգադրությունների արձակման հնարավորությունը:
>
> 2) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար, որպեսզի սույն հոդվածի 1-ին մասում նշված արգելող կամ պաշտպանության կարգադրությունները հնարավոր լինի արձակել անհապաղ պաշտպանություն տրամադրելու համար՝ առանց տուժողի համար անհարկի ֆինանսական կամ վարչական խոչընդոտների, վավեր լինեն կոնկրետ ժամանակահատվածի ընթացքում կամ ընդհուպ մինչև դրա փոփոխումը կամ գործողության ժամկետը լրանալը, արձակված լինեն ex parte կարգով և ուժի մեջ մտնեն անհապաղ, դրանք հնարավոր լինի արձակել այլ վարույթներից անկախ կամ ի լրումն այլ վարույթների, թույլատրված լինի ներկայացնել հետագա դատական գործընթացներում (Հոդված 53):

Անհետաձգելի միջամտության որոշումները և պաշտպանական որոշումները պետք է արդյունավետ ձևով արձագանքեն նոր տեխնոլոգիաների օժանդակությամբ իրականացվող ընտանեկան բռնության առցանց ձևերին: Իրականում անհետաձգելի միջամտության արգելող կամ պաշտպանական որոշումներում հազվադեպ է նշվում էլեկտրոնային հաղորդակցությունը՝ իրավապահ մարմինների կողմից նոր տեխնոլոգիաներով օժանդակվող բռնության բազմաթիվ ձևերի մասին բավական պատկերացում չունենալու պատճառով (Առաջադիմական հաղորդակցությունների միավորում/OHCHR, տարեթիվը նշված չէ): Որոշ երկրներում բացառություններ արվում են մասնավորապես երեխաներին առնչվող հաղորդակցության դեպքում, այդ թվում՝ բջջային հեռախոսով կամ թվային կապով, ինչն էլ ավելի է խճճում իրավիճակը: Քանի որ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներն ավելի են տարածվել և այժմ չափազանց բազմազան են, և ոչ այնքան պարզ ու անմիջական, սոցիալական մեդիայի որոշ գործառույթներ առնչվում են ոչ այնքան հաղորդակցությանը (հաղորդագրություններ կամ բովանդակության փոխանակում), որքան դիտելուն (որևէ անձի բովանդակության պասիվ դիտում առանց նրա հետ շփվելու), երբեմն նաև հետամտմանը, օրինակ՝ որևէ անձի «պատմություններն» առցանց դիտելուն կամ «ուղեծիր» վարքագծին՝ որևէ անձի հաղորդագրություններին չարձագանքելով, շարունակել դիտել նրա բովանդակությունն առցանց: Նման դեպքերում ավելի դժվար է գնահատել, թե ինչը կարող է սահմանվել որպես բռնարարի և տուժողի միջև հաղորդակցում (Fetters/The Atlantic, 2018թ.):

> Կարծում եմ, որ այն, ինչ մենք և մեր հաճախորդները համարում ենք վարկաբեկող, հետապնդող կամ սպառնացող վարքագիծ, պարտադիր չէ, որ լինի այդպիսին... Նույնիսկ, եթե մեր

հաճախորդներն այն ընկալում են որպես ճնշում և հետապնդում, որն ակնհայտորեն խախտում է պաշտպանական որոշումը՝ հետամտելու, վարկաբեկելու, հարկադրելու մտադրությամբ, օրենքի շրջանակներում այն դժվար է գնահատել որպես իրավախախտում (տե՛ս նույն տեղը):

### Ստամբուլի կոնվենցիայի հոդված 56 (Պաշտպանության միջոցներ)

1) Մասնակից պետությունները ձեռնարկում են օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ տուժողների իրավունքները և շահերը նախաքննական և դատական վարույթի բոլոր փուլերում պաշտպանելու նպատակով, ներառյալ՝ նրանց հատուկ կարիքները որպես վկա, մասնավորապես՝

ա) տուժողներին, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին և վկաներին՝ պաշտպանելով ճնշումներից, վրեժից և ռեվիկտիմիզացիայից.

բ) ապահովելով, որպեսզի տուժողները տեղեկացվեն կատարողին ժամանակավորապես կամ վերջնականապես ազատ արձակելու կամ վերջինիս փախուստի մասին՝ առնվազն այն դեպքերում, երբ տուժողի կամ նրա ընտանիքի անդամներին կարող է սպառնալ վտանգ.

գ) ներքին օրենսդրությամբ սահմանված պայմաններում տեղեկացնելով նրանց իրենց իրավունքների և իրենց տրամադրության տակ եղած ծառայությունների, բողոքների քննության ընթացքի, ներկայացված մեղադրանքների, ընդհանրապես նախաքննական կամ դատական վարույթի ընթացքի, իրենց ունեցած դատավարական դերի, ինչպես նաև իրենց գործի ելքի մասին.

դ) հնարավորություն տալով տուժողներին, ներպետական քրեադատավարական օրենքով սահմանված կարգով, արտահայտելու իրենց տեսակետը և ապահովելու ապացույցներ, ներկայացնելու սեփական դիրքորոշումը, կարիքները և մտահոգություններն՝ անձամբ կամ միջնորդավորված, իմանալով, որ դրանք կդիտարկեն.

ե) տուժողներին աջակցության համապատասխան ծառայություններ տրամադրելով, որպեսզի նրանց իրավունքներն ու շահերը ներկայացվեն և հաշվի առնվեն պատշաճ կերպով.

զ) ապահովելով միջոցներ տուժողի մասնավոր կյանքի անձեռնմխելիության կամ տուժողի հեղինակության պաշտպանության համար.

է) բոլոր հնարավոր դեպքերում բացառելով նախաքննության մարմնում կամ դատարանում տուժողների և բռնարարների միջև շփումները.

ը) ապահովելով տուժողների համար որակավորված անկախ թարգմանիչներ՝ թե՛ այն դեպքերում, երբ տուժողը հանդիսանում է դատավարության կողմ, թե՛ այն դեպքերում, երբ նա ցուցմունքներ է տալիս.

թ) ներպետական օրենսդրությամբ սահմանված կարգով տուժողներին ընձեռելով ցուցմունք տալու առանց դատական նիստին ներկայանալու կամ առնվազն դատական նիստից ենթադրյալ բռնարարի բացակայության պայմաններում՝ օգտագործելով հաղորդակցման համապատասխան տեխնոլոգիաներ, երբ հնարավոր է:

2) Կանանց նկատմամբ բռնության կամ ընտանեկան բռնության տուժող կամ վկա երեխաներին տրամադրվում են երեխայի լավագույն շահը հաշվի առնող պաշտպանության հատուկ միջոցներ, եթե հնարավոր է:

56-րդ հոդվածը շատ կարևոր է քրեական հետապնդման գործընթացի բոլոր փուլերում տուժողների կարիքները հաշվառելու առումով: Տուժողների՝ որպես վկաների, հատուկ կարիքները հաշվի առնելը, ինչպես նաև նրանց ընտանիքների և վկաների առցանց և նոր տեխնոլոգիաների օժանդակությամբ պաշտպանությունը ռեվիկտիմիզացիայից և վրեժից, կարող է վերացնել շատ սպառնալիքներ, որոնք պարունակում են այդ միջոցները: Բռնության այս միջոցները սովորաբար հեշտությամբ անտեսվում են, սակայն կարող են շատ մեծ բացասական ազդեցություն ունենալ տուժողների և վկաների վրա՝ հաճախ խոչընդոտելով արդարադատությանը: Բացի այդ պետք է հաշվի առնել նաև առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տուժողների դերն ապացույցների ապահովման հարցում՝ ի նկատի ունենալով էլեկտրոնային ապացույցների առանձնահատկությունները (օրինակ՝ տուժողի մոտ պահպանված հաղորդագրությունները, լուսանկարները կամ տեսաձայնագրությունները, որոնք իրավախախտ(ներ)ը հեռացրել են):

### Միջազգային համագործակցություն

Ինչ վերաբերում է Ստամբուլի կոնվենցիայի Մասնակից պետությունների միջև համագործակցությանը, 62-րդ հոդվածը սահմանում է, որ Մասնակից պետությունները պետք է «հնարավորինս ընդգրկուն» համագործակցություն ծավալեն, երբ խոսքը վերաբերում է իրավախախտման կանխարգելմանը, տուժողների պաշտպանությանը և աջակցությանը, Ստամբուլի կոնվենցիայում թվարկված իրավախախտումների հետ կապված հետաքննություններին կամ դատավարություններին, ինչպես նաև քրեական դատավճիռների և պաշտպանական որոշումների կատարմանը: Կոնվենցիայի բացատրական զեկույցում նշվում է, որ Մասնակից պետությունները պետք է «հնարավորինս նվազեցնեն տեղեկատվության և ապացույցների արագ շրջանառության խոչընդոտները» (Եվրոպայի խորհուրդ, 2011b):

Մասնակից պետությունների միջև համագործակցությունը կարևոր է նաև այն դեպքում, երբ մի Մասնակից պետությունում բնակվող տուժողը բողոք է ներկայացնում այլ Մասնակից պետությունում կատարված իրավախախտման վերաբերյալ: Բացատրական զեկույցում նշվում է, որ «առաջին պետության իշխանությունները կարող են այնուհետև վարույթ հարուցել, եթե նրանց օրենքը թույլ է տալիս, կամ բողոքը փոխանցել այն պետության իշխանություններին, որտեղ կատարվել է իրավախախտումը՝ համաձայն համագործակցության փաստաթղթերի համապատասխան դրույթների, որոնք կիրառելի են համապատասխան պետության նկատմամբ» (տե՛ս նույն տեղը):

Վերջապես, կոնվենցիան ընդգծում է այն փաստը, որ փոխադարձ իրավական օգնության (ՓԻՕ) հիմքերը նաև նախատեսված են Ստամբուլի կոնվենցիայում, նույնիսկ եթե  պետությունները չեն ստորագրել ՓԻՕ վերաբերյալ այլ հատուկ պայմանագիր, ինչը նպաստում է կոնվենցիայի կողմերի միջև իրավական ոլորտում համագործակցությանը:

Միջազգային համագործակցության, ՓԻՕ-ն և անդրսահմանային պայմաններում էլեկտրոնային ապացույցների հասանելիության հարցերում Բուդապեշտի կոնվենցիայի 25-րդ և 29-ից 35-րդ հոդվածները փոխլրացնող դեր ունեն:

#### Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 25 (Փոխադարձ օգնությանն առնչվող ընդհանուր սկզբունքներ)

> 1) Մասնակից պետությունները հնարավորինս լայն ծավալով միմյանց փոխադարձ օգնություն են ցուցաբերում թվային համակարգերի և տվյալների հետ կապված քրեական հանցագործությունների հետաքննության կամ հետապնդման նպատակների, ինչպես նաև քրեական հանցագործությունների էլեկտրոնային ձևերի ապացույցների հավաքման համար...
>
> 3) Յուրաքանչյուր Մասնակից պետություն կարող է հրատապ հանգամանքներում փոխա-

դարձ օգնություն կամ դրա հետ կապված հաղորդակցության մասին հարցում կատարել կապի արագ միջոցներով, այդ թվում՝ ֆաքսով և էլեկտրոնային փոստով, գաղտնիության և վավերականության համապատասխան աստիճան ապահովելու համար (ներառյալ ծածկագրերի օգտագործումը, անհրաժեշտության դեպքում)՝ ձեռք բերելով ձևական հաստատում հարցվող Մասնակից պետության պահանջի դեպքում: Հարցվող Մասնակից պետությունը պետք է ընդունի և պատասխանի հարցմանն արագ կապի որևէ միջոցով:

Բացատրական զեկույցում նշվում է, որ «համագործակցելու պարտավորությունը սկզբունքորեն վերաբերում է ինչպես թվային համակարգերին և տվյալներին առնչվող քրեական հանցագործություններին..., այնպես էլ քրեական հանցագործության վերաբերյալ էլեկտրոնային տվյալներ հավաքելուն»:

Ընդ որում, երբ էլեկտրոնային տվյալները անկայուն են (արագ պատճենվում կամ ջնջվում են),

ապա 3-րդ կետի նպատակն է նպաստել փոխադարձ օգնություն ստանալու գործընթացի արագացմանը, որպեսզի կարևոր տեղեկատվությունը կամ ապացույցները չկորչեն, այն պատճառով, որ դրանք ջնջվել են նախքան օգնության հարցումը պատրաստելը, փոխանցելը և դրան պատասխանելը:

Բուդապեշտի կոնվենցիայի 29-ից 30-րդ հոդվածները ՓԻՕ դիտարկում են ժամանակավոր միջոցների համատեքստում:

### Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 29 (Պահված համակարգչային տվյալների արագացված պաշտպանություն)

29-րդ հոդվածը սահմանում է այն պայմանները, որոնց դեպքում Մասնակից պետությունը կարող է դիմել մյուս Մասնակից պետությանը, որպեսզի այն պաշտպանի պահված համակարգչային տվյալները քրեական հետաքննության համատեքստում[34]: Այս հոդվածը Ստամբուլի կոնվենցիայի 16-րդ հոդվածի հայելային արտացոլումն է (ներպետական մակարդակ) միջազգային համագործակցության համատեքստում (Եվրոպայի խորհուրդ, 2001b):

Այսպիսով, կանանց նկատմամբ բռնության առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող ձևերը մասամբ կարգավորվում են Բուդապեշտի կոնվենցիայի 2-ից մինչև 11-րդ հոդվածներով: Որպեսզի այս դեպքերում պաշտպանությունը գործի. ա) Մասնակից պետությունները պետք է ճկուն կերպով կիրառեն երկակի հանցավորության դրույթը կամ բ) հայցող կողմը պետք է դիմի պաշտպանության համար՝ հիմնվելով 2-7 և 11-րդ հոդվածներից որևէ մեկով սահմանված օժանդակող հանցագործությունների վրա: Օրինակ՝ Մասնակից պետությունը կարող է պաշտպանություն հայցել կիբերսպառնալիքի դեպքում՝ հիմնվելով 2-րդ հոդվածի վրա՝ անօրինական մուտք դեպի տուժողի համակարգիչ (Եվրոպայի խորհուրդ, 2018c):

### Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 30 (Պահպանվող փոխանցված տվյալների արագացված տրամադրում)

30-րդ հոդվածը միջազգային համագործակցության համատեքստում համարժեք է Ստամբուլի կոնվենցիայի 17-րդ հոդվածին (ներպետական մակարդակի):

31-ից 34-րդ հոդվածներն անդրադառնում են հետաքննության լիազորությունների հետ կապված միջազգային համագործակցությանը:

---

34. Համակարգչային տվյալները սահմանվում են Բուդապեշտի կոնվենցիայի սահմանումների բաժնում որպես «փաստերի, տեղեկատվության կամ հասկացությունների այնպիսի ներկայացում, որը հարմար է թվային համակարգերում մշակման համար, ներառյալ այն ծրագրերը, որոնք ապահովվում են թվային համակարգի գործառումը»:

**Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 31 (Պահպանվող համակարգչային տվյալների հասանելիության հետ կապված փոխադարձ օգնություն)**

Հոդված 31-ը 19-րդ հոդվածի (ներպետական մակարդակի) հայելային արտացոլումն է և լրացուցիչ բացատրում է, որ Մասնակից պետությունները կարող են մեկ այլ Մասնակից պետության շահերից ելնելով որոնել կամ մուտք գործել, ապահովել և տրամադրել իրենց երկրի տարածքում գտնվող պահված համակարգչային տվյալները: Նրանք դա անում են արագացված ընթացակարգով, երբ առկա է տվյալների փոփոխման կամ կորստի վտանգ, կամ երբ կիրառելի պայմանագրերը, պայմանավորվածությունները կամ օրենքները թույլ են տալիս արագացված ընթացակարգը:

**Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 32 (Համաձայնության առկայության դեպքում կամ հանրայնացված պահպանվող համակարգչային տվյալների անդրսահմանային հասանելիություն)**

32-րդ հոդվածը նշում է այն իրավիճակները, երբ մի Մասնակից պետության իրավապահ մարմինները կարող են սահմանված հանգամանքներում միակողմանի քայլեր ձեռնարկել՝ մուտք գործելու պահված համակարգչային տվյալներ՝ «տվյալները բացահայտելու օրինական լիազորություն ունեցող անձի» համաձայնությամբ (որը կարող է լինել ենթադրյալ կասկածյալը) կամ երբ դրանք հանրության համար բաց են: Համաձայն 32-րդ հոդվածի ուղեցույցի, «ընդհանուր ճանաչված է, որ իրավապահ մարմինները կարող են օգտվել ցանկացած տվյալներից, որոնք հասանելի են հանրության համար, և այդ նպատակով բաժանորդագրվել կամ գրանցվել հանրությանը հասանելի ծառայություններին»: «Համաձայն ուղեցույցի, 32-րդ հոդվածի դրույթները բացառություն են կազմում տարածքային սկզբունքից, քանի որ այն թույլ է տալիս, առանց փոխադարձ օգնություն հարցելու, մուտք գործել արտերկրում պահվող տվյալներ» (Verdelho, 2019թ.):

**Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 33 (Փոխադարձ օգնություն փոխանցվող տվյալների իրական ժամանակում հավաքման գործում)**

33-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակից պետությունները պարտավոր են ՓԻՕ-ի շրջանակներում և քրեական հետաքննության համատեքստում հավաքել փոխանցվող տվյալներ այլ կողմի համար «առնվազն այն քրեական հանցագործությունների պարագայում, որոնց համար փոխանցվող տվյալների իրական ժամանակում հավաքումը հասանելի է նույնանման ներքին գործի դեպքում», խուսափելու ծառայություններ մատուցողների կողմից փոխանցվող կարևոր տվյալների ջնջումից կամ հեռացումից:

**Բուդապեշտի կոնվենցիայի հոդված 34 (Փոխադարձ օգնություն՝ կապված բովանդակային տվյալների հետ)**

34-րդ հոդվածը սահմանում է, թե ինչ պայմաններում կարող են հարցվել բովանդակային տվյալները: Քանի որ բովանդակային տվյալները առավել գաղտնի բնույթի են (և նրանց գաղտնիությունը ենթակա է պաշտպանության), հարցումները կախված են «գոյություն ունեցող փոխօգնության ռեժիմներից, օժանդակելու պարտավորության շրջանակից և սահմանափակումների վերաբերյալ ներպետական օրենքներից» (Եվրոպայի խորհուրդ, 2001b): Երկրի ներկայիս ներպետական օրենսդրությունն ինքնին կարող է չկարգավորել առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող իրավախախտումները: Այս դեպքում հարցվող երկիրը կարող է հաշվի առնել դիմող երկրի հարցման որոշ տարրերը, որպեսզի կարողանա համագործակցել: Երկիրը կարող է, օրինակ, հիմնվել այն փաստի վրա, որ եղել են սպառնալիքներ, առանց հաշվի առնելու այն փաստը, որ դրանք էլեկտրոնային եղանակով են ուղարկվել: Սակայն եթե ներպետական օրենսդրությունն ընդհանրապես չի սահմանում իրավախախտումը, և եթե օգտագործելի տարրերը չեն կարող չընդգրկվել ՓԻՕ-ի հարցման մեջ, ապա փոխանցվող կամ բովանդակային տվյալներ ստանալուն ուղղված միջազգային համագործակցությունը կարող է խափանվել (Եվրոպայի խորհուրդ, 2018c): Այդուհանդերձ, կարևոր է նշել, որ բովանդակային տվյալները կարող են առաջնային ապացույց հանդիսանալ

քրեական հետաքննության բազմաթիվ դեպքերում, այդ թվում՝ կանանց նկատմամբ բռնությանն առնչվող:

Այսպիսով, երկու կոնվենցիաների շատ դրույթներ կարող են փոխհամաձայնեցված լինել, երբ խոսքը գնում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության քրեական հետապնդման մասին: Բուդապեշտի կոնվենցիայի 16-ից 21-րդ հոդվածները լրացնում են Ստամբուլի կոնվենցիայի 50-րդ հոդվածը՝ ներպետական մակարդակով ապացույցներ ձեռք բերելու և ապահովելու հարցում: Բուդապեշտի կոնվենցիայի 25-րդ և 29-ից 35-րդ հոդվածները ընդլայնում են Բուդապեշտի կոնվենցիայի կողմերի հնարավորությունները՝ մուտք գործելու և ապահովելու էլեկտրոնային ապացույցները և ավելացնելու հետաքննության լիազորությունները փոխադարձ իրավական օգնության և միջազգային համագործակցության շրջանակներում:



# ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## Եզրափակիչ դիտարկումներ

Այս ուսումնասիրության կենտրոնում կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունն է, դրա պատճառները, հետևանքները, և նման բռնության տիրույթները՝ ցանկացած առցանց հարթակ և համացանցին միացված տեխնոլոգիական գործիքակազմ, որոնք հասանելի են օգտատերերին: Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությունն իրական կյանքում, օրինակ՝ փողոցում, գրասենյակում, դպրոցում և համալսարանում, տանը և կյանքի ցանկացած ոլորտում, կանանց նկատմամբ տեղի ունեցող բռնության տարբեր ձևերի կոնտինուումն է: Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ձևերի մեծ մասն արդեն իսկ գոյություն ունեն համացանցից դուրս և ընդլայնվել, ուժգնացել կամ ընդհանրացվել են վերջինիս միջոցով: Օրինակ, ընտանեկան բռնության պարագայում, բաժանումից հետո բռնությունը և հետամտումը:

Առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնությանը բնորոշ են նաև մի շարք առանձնահատկություններ. իրավախախտների քանակի, ներգրավված ալիքների բազմազանության, փախուստի անհնարինության և բովանդակությունը համացանցից ջնջելու դժվարության պատճառով վիկտիմիզացիան սաստկանում է: Այս հատկանիշներն ավելի են ուժգնացնում տուժողների վրա բռնության ազդեցությունը:

Բացի այդ, տուժողները իրավական պաշտպանություն փնտրելիս՝ բախվում են բազմաթիվ դժվարությունների՝ ապացույցների անկայունությունից մինչև օգնություն և աջակցություն գտնելու հետ կապված դժվարությունները: Քրեական հետապնդումը նույնպես բարդ է, քանի որ օրենքները տեխնոլոգիական առաջընթացին համընթաց չեն կատարելագործվում, իրավապահ մարմինների պաշտոնյաները չունեն բավարար պատրաստություն, միջոցներ և գործիքակազմ տուժողներին օգնելու համար:

Ստամբուլի կոնվենցիան՝ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հարցերին անդրադարձող մարդու իրավունքների առավել համապարփակ փաստաթուղթը, ունի լայն շրջանակ և ընդգրկում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր ձևերը՝ կյանքի բոլոր ոլորտներում, հետևաբար կիրառվում է նաև կանանց և աղջիկների նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության դեպքերում:

Կիբերհանցագործությունների մասին Բուդապեշտի կոնվենցիան և դրա լրացուցիչ արձանագրությունները (առցանց ռասիզմ և այլատյացությունը լուսաբանող առաջին լրացուցիչ արձանագրությունը և ակնկալվող երկրորդ արձանագրությունը՝ քրեական հետախուզության ոլորտում համագործակցության ամրապնդման և էլեկտրոնային ապացույցների տրամադրման հարցերի վերաբերյալ) անդրադառնում են համակարգչի միջոցով կամ թվային համակարգերին ուղղված բազմաթիվ իրավախախտումներին: Կոնվենցիայի Մասնակից պետություններից պահանջվում է ամրապնդել ներպետական քրեական դատավարական օրենսդրությունը և հզորացնել քրեական արդարադատության կարողությունները էլեկտրոնային ապացույցներ ապահովելու և կիբերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցներ պարունակող այլ իրավախախտումների հետաքննության և հետապնդման հարցում միջազգային համագործակցությանը և փոխադարձ իրավական օգնությանը արդյունավետորեն օժանդակելու համար:

Բացի այդ, մի շարք միջազգային և տարածաշրջանային փաստաթղթեր նույնպես որոշակիորեն անդրադառնում են այդ երևույթին, այդ թվում՝ ԿԽՎՄԿ-ի թիվ 35 ընդհանուր հանձնարարականը, սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի և գենդերային հավասարության ռազմավարության մասին Եվրոպայի խորհրդի հանձնարարականը, ԵՄ քաղաքականության մի քանի հատվածներ, ներառյալ ԵՄ գենդերային հավասարության ռազմավարությունը և ԵՄ-ի ռազմավարությունը զոհերի իրավունքների վերաբերյալ, ԵՄ-ի տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը, թվային ծառայությունների մասին օրենքը, էլեկտրոնային ապացույցների մասին առաջարկը և համագործակցության համաձայնագրերը, ինչպիսիք են ատելության անօրինական խոսքին հակազդելու վերաբերյալ ԵՄ վարքագծի կանոնագիրքը: Սակայն այս գործիքների միջև անհրաժեշտ է ավելի շատ փոխազդեցություն՝ համակողմանիորեն արձագանքելու կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տարբեր ձևերին:

Ուսումնասիրության ներքո մշակվել է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության տարբեր ձևերի դասակարգում, տրվել են սահմանումներ, որոնք վերլուծվել են Ստամբուլի կոնվենցիայի 33-րդ, 34-րդ և 40րդ հոդվածների շրջանակում՝ փոխլրացված Բուդապեշտի կոնվենցիայի դրույթներով: Ուսումնասիրվել են առցանց և նոր տեխնոլոգիաներով օժանդակվող սեռական հետապնդման ձևերը, ինչպիսիք են առանց անձի համաձայնության նրա պատկերների կամ տեսանյութերի տարածումը, ներառյալ այնպիսի բովանդակությունը, ինչպիսիք են պատկերների օգտագործմամբ սեռական բռնությունը, քրիփշոթերը, դիփֆեյքերը, հարկադրանք կամ սպառնալիքներ պարունակով սեռական հետամտման ձևերը, օրինակ՝ հարկադիր սեքսթինգը, սեռավարությունը, բռնաբարության սպառնալիքները, սեռականացված դոքսինգը և բուլինգը: Բուդապեշտի կոնվենցիայի 3-րդ, 8-րդ և 10-րդ հոդվածների դրույթները վերլուծվել են միմյանց փոխլրացնելու տեսանկյունից: Բուդապեշտի կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ հոդվածների լույսի ներքո վերլուծվել են առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող հետամտման ձևերը, ինչպիսիք են հետամտման էլեկտրոնային ծրագրերի տեղադրումը և IoT-ով օժանդակվող սեռական իրավախախտումները: Վերջապես, դիտարկվել են առցանց հոգեբանական բռնության ձևերը, այդ թվում՝ սեքսիստական ատելության խոսքը: Սեքսիստական ատելության խոսքն ավելի մանրամասն քննարկվում է Հավելված 2-ում՝ սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի հանձնարարականի և Բուդապեշտի կոնվենցիայի առաջին լրացուցիչ արձանագրության համատեքստում: Բուդապեշտի կոնվենցիայի դրույթների վերլուծությունը ցույց է տա-

լիս, որ կիբերհանցագործության շրջանակը կարող է կիրառվել կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության երևույթի նկատմամբ, և որ Կիբերհանցագործության մասին կոնվենցիայում պարունակվող սահմանումները լրացնում են Ստամբուլի կոնվենցիայում բռնության սահմանումները:

Վերջին բաժնում վերլուծվել է Ստամբուլի կոնվենցիայի դրույթների կիրառությունը բռնության այս ձևերի նկատմամբ ինտեգրված քաղաքականության, կանխարգելման, պաշտպանության և քրեական հետապնդման տեսանկյունից: Ստամբուլի կոնվենցիայի 50-րդ հոդվածը վերլուծվել է Բուդապեշտի կոնվենցիայի 16-ից 21-րդ հոդվածների հետ կապի տեսանկյունից, իսկ միջազգային համագործակցությանը վերաբերող Ստամբուլի կոնվենցիայի 62-րդ հոդվածը վերլուծվել է Բուդապեշտի կոնվենցիայի 25-րդ, 29-րդ, 30-րդ և 31-34-րդ հոդվածների հետ համադրությամբ:

Վերջապես այս ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երկու կոնվենցիաները կարող են դինամիկ փոխլրացնել միմյանց: Ստամբուլի կոնվենցիայի կարևորությունը կայանում է նրանում, որ կանանց նկատմամբ բռնությունը ճանաչվում է որպես բռնություն կանանց նկատմամբ՝ նրանց գենդերի պատճառով և, որ այն հստակ սահմանում է դրան արձագանքելու պետության պարտավորությունը, այդ թվում՝ համապատասխան ներպետական քրեական արդարադատության շրջանակներում: Բուդապեշտի կոնվենցիան կարևոր գործիքներ է տրամադրում հետաքննության, ապացույցների ապահովման և միջազգային համագործակցության համար, ոչ միայն առցանց և նոր տեխնոլոգիաներով օժանդակվող հանցագործությունների, այլև էլեկտրոնային ապացույցների հետ կապված ցանկացած հանցագործությունների հետաքննության համար:

Ինչ վերաբերում է համակարգված քաղաքականությանը, կանխարգելման և պաշտպանության ուղղությամբ քայլերին, Ստամբուլի կոնվենցիան առանցքային դեր ունի կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերին համաչափ արձագանքելու համար: Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության քրեական հետապնդման հարցում, ներառյալ անդրսահմանային մակարդակով, Բուդապեշտի կոնվենցիան Մասնակից պետությունների համար նախատեսում է կիրառելի գործիքներ և մեթոդաբանություն: Սակայն կիբերհանցագործությունների ոլորտը մինչ օրս գենդերային առումով չեզոք է՝ կանանց դեմ առցանց հանցագործությունները ձևակերպված չեն կիբերհանցագործությունների շրջանակում, և կիբերհանցագործությունների գենդերային չեզոք ընկալումը ներթափանցում է քաղաքականության մեջ: Ստամբուլի կոնվենցիայի լայն շրջանակը և համապարփակ մոտեցումը, հետևաբար, կարող են հիմք հանդիսանալ կիբերհանցագործությունների դաշտը «գենդերացնելու» համար և կանանց նկատմամբ կիբերհանցագործություններին արձագանքող գենդերազգայուն քաղաքականության նախագիծ:

Ի լրումն գործիքակազմերի նպատակային համադրության, ստորև ներկայացված են մի շարք առաջարկություններ:

## Առաջարկություններ

### Եվրոպայի խորհրդի մակարդակով

- Շատ կարևոր է համագործակցության զարգացումը Ստամբուլի կոնվենցիայի և Կիբերհանցագործությունների դեմ պայքարի կոնվենցիայի կոմիտեի (T-CY) մոնիթորինգի մեխանիզմի, ինչպես նաև Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի այլ հակախտրական մարմինների, օրինակ՝ Խտրականության

դեմ պայքարի, բազմազանության և ներառման ղեկավար կոմիտեի միջև[35]: Նման համագործակցությունը նախատեսում է կարծիքների և փորձի փոխանակում, անդրադառնալով կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության խնդրին՝ փոխհարստացնող և փոխլրացնող միասնական արձագանք ստեղծելու ակնկալիքով[36]:

- Որպես երկրորդ քայլ՝ կարելի է նախատեսել երկու կոնվենցիաների Մասնակից պետությունների կարողությունների զարգացմանն ուղղված միասնական գործողությունները՝ Ստամբուլի և Բուդապեշտի կոնվենցիաների Մասնակից պետությունների առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հարցում կոմպետենտությունը և նպատակային արձագանքը զարգացնելու համար:

### Ստամբուլի կոնվենցիայի մոնիթորինգի մեխանիզմի մակարդակով

- GREVIO-ի առաջին ընդհանուր հանձնարարականը, որն անդրադառնում է կանանց նկատմամբ թվային բռնությանը, նախատեսում է կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության ձևերին արձագանքման հարցում Մասնակից պետություններին աջակցելու համար միջոցների համապարփակ ցանկ: GREVIO-ն պետք է իր գնահատման ընթացակարգերում ուշադրությունը կենտրոնացնի այս խնդիրների վրա:
- Հարկավոր է ուսումնասիրել կանանց և աղջիկների նկատմամբ առցանց բռնությանը և Լանզարոտեի ու Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին կոնվենցիաներով սահմանված բռնության ձևերին արձագանքելու հարցում Բուդապեշտի, Լանզարոտեի և Մարդկանց թրաֆիքինգի դեմ գործողությունների մասին կոնվենցիաների միջև համագործակցության խորացման հնարավորությունները:

### Բուդապեշտի կոնվենցիայի քարտուղարության և Կիբերհանցագործությունների դեմ կոնվենցիայի կոմիտեի (T-CY) մակարդակով

- T-CY-ը կիբերբռնության քարտեզագրման 2018 թվականին մշակված ուսումնասիրության շրջանակներում պետք է շարունակի ճանաչել կանանց նկատմամբ առցանց բռնության գենդերային բնույթը, ներառյալ գենդերային հիմքով կիբերհանցագործությունները, և հորդորի Բուդապեշտի կոնվենցիայի Մասնակից պետություններին ստորագրել և վավերացնել Ստամբուլի կոնվենցիան[37]:
- T-CY-ը պետք է շարունակի համագործակցությունը և գործընկերությունը Եվրոպայի խորհրդի Գենդերային հավասարության և կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի բաժինների հետ:
- Կիբերհանցագործությունների դեմ պայքարի ծրագրի գրասենյակի (C-PROC) կողմից լիազորված գենդերային մեյնսթրիմինգի հարցերով համակարգողը պետք է ապահովի գենդերային հավասարության սկզբունքի ինտեգրումը համագործակցության բոլոր գործողությունների հայեցակարգման և իրականացման հարցում:

---

35. Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը մարդու իրավունքների մոնիթորինգի եզակի մարմին է, որը մասնագիտացած է Եվրոպայում ռասիզմի, խտրականության («ռասայի», էթնիկ/ազգային ծագման, մաշկի գույնի, քաղաքացիության, կրոնի, լեզվի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության և սեռի հիմքով), այլատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի հարցերում՝ www.coe.int/en/web/european-commission-against-racism-and-intolerance:

36. Հարցազրույց բժիշկ Գիզեմ Գյունեի հետ, սեպտեմբեր 2020թ:

37. T-CY Կիբերբռնության քարտեզագրման ուսումնասիրությունը (2018) ճանաչում է կիբերբռնության գենդերային բնույթը և առաջարկություններ է պարունակում: Բացի այդ, T-CY քարտուղարությունն աջակցել է կիբերհանցագործությունների/կիբերբռնության վերաբերյալ տեղեկատվական թերթիկի մշակմանը, որը հասանելի է հետևյալ հասցեով՝ https://rm.coe.int/gender-mainstreaming-toolkit-15-gender-equality-and-cybercrime-cybervi/168092e9b4:

- T-CY-ը կարող է դիտարկել կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության վերաբերյալ Բուդապեշտի կոնվենցիայիին ընդհանուր հանձնարարական կազմելու հնարավորությունը՝ նպատակ ունենալով լրացնել այդ ուղղությամբ GREVIO-ի ընդհանուր հանձնարարականը:

### Մասնավոր հատվածի մակարդակով

- Հարթակներին խորհուրդ է տրվում առաջնորդվել մարդու իրավունքների միջազգային իրավական փաստաթղթերով, ներառյալ կանանց իրավունքների շրջանակների և նորմերի, նաև ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել տուժողների համար կանխարգելիչ և վերականգնող միջոցների ապահովման հարցում:
- Պետությունները պետք է հատուկ պնդեն նշված հարթակներում կանանց նկատմամբ բռնության յուրաքանչյուր տեսակի վերաբերյալ կոնկրետ տվյալների թափանցիկությունը և հասանելիությունը:
- Համացանցային հարթակների օգտատերերը պետք է հնարավորություն ունենան մուտք գործել հրատապ հաղորդման համակարգեր՝ ինչպես ծառայություններ մատուցողների, այնպես էլ իրավապահ մարմինների հարթակներում: Անհրաժեշտ է, որ այդ համակարգերը հաշվի առնեն ինտերսեկցիոնալությունը:
- Իրավական տեղեկատվությունը պետք է հասանելի լինի յուրաքանչյուր հարթակում՝ ըստ օգտատերերի բնակության երկրի:
- Մոդերատորական աշխատանքը պետք է հաշվի առնի կանանց նկատմամբ առցանց բռնության բոլոր ձևերը:
- Ինչ վերաբերում է IoT-ի միջոցով օժանդակվող կանանց նկատմամբ բռնությանը, ապա նման սարքերի մշակողները պետք է օգտագործեն ինչպես ընտանեկան բռնության արձագանքողների, այնպես էլ կանանց կիբերանվտանգության հարցերով փորձագետների փորձը, որպեսզի սարքերի արտադրության փուլից սկսած ապահովեն անվտանգությունը:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1.

# ՊԱՏԿԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍԵՌԱԿԱՆ ԵՎ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՔՈՎ ԿԻԲԵՐՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԱՆՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ ԱՌՑԱՆՑ ՍԵՌԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ՁԵՎ

Պատկերի վրա հիմնված սեռական բռնությունն ինտիմ հարաբերությունների ընթացքում տուժողից ստացած կամ նրա սարքերից գողացած անձնական պատկերների կամ տեսանյութերի առցանց տարածումն է առանց տուժողի համաձայնության, երբեմն դոքսինգի մարտավարությանը զուգահեռ:

Պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը այլ կերպ կոչվում է պատկերի վրա հիմնված սեռական շահագործում (Powell and Henry, 2016), առանց անձի համաձայնության նրա սեռական բնույթի լուսանկարի կամ տեսանյութի տարածում (ԱՀՍՊ, տե՛ս օրինակ Facebook, տարեթիվը նշված չէ), առանց համաձայնության պոռնոգրաֆիա (ԱՀՊ, տե՛ս Citron and Franks, 2014) կամ «վրեժխնդրության պոռնոգրաֆիա»: Շատ տեսաբաններ իրականում ընդգծում են մեդիայի կողմից կիրառվող «վրեժխնդրության պոռնոգրաֆիա» եզրույթից հրաժարվելու կարիքը՝ զոհակենտրոն մոտեցում ցուցաբերելու նպատակով:

Մի քանի հեղինակներ այժմ դասակարգում են նման հանցագործությունները որպես կանանց թիրախավորող կիբերհանցագործության տեսակ:

Մերի Ռոջերսը, օրինակ, առաջարկում է Բուդապեշտի կոնվենցիայում իրավախախտումների թվին դասել պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը և այն որակում է որպես գենդերային հիմքով կիբերհանցագործություն: Նա վկայակոչում է առանց անձի համաձայնության պոռնոգրաֆիայի (ԱՀՊ) վերաբերյալ ԱՄՆ-ի իրավակարգավորումները.

> Պետություններն աստիճանաբար ներառում են ԱՀՊ-ի վերաբերյալ դրույթներն իրենց քրեական օրենսգրքերում, սակայն գործընթացը դանդաղ է ընթանում և զուրկ է միաձնությունից: Շատ տուժողների համար միակ հնարավորությունը հեղինակային իրավունքի մասին օրենքն է, որը քաղաքացիական պաշտպանության միջոց է և շատ դեպքերում չի կարող կանխել համացանցում արդեն իսկ տեղադրված պատկերի շարունակական տարածումը: Հետևաբար ԱՀՊ-ի ընդգրկումը կոնվենցիայում կապահովի շատ անհրաժեշտ գլոբալ ուղեցույց և կխրախուսի քրեականացման միասնական չափանիշները (Rogers, 2018թ.):

Սլովենիայի Մարիբորի համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Միհա Շեպեկն ընդգծում է այս հարցը կարգավորող իրավական շրջանակների միջև առկա դիալեկտիկան: Որոշ երկրներ պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը որակում են որպես սեռական հանցագործություն, մինչդեռ այլ երկրներ այն որակում են որպես տուժողի անձնական կյանքի իրավունքի դեմ ուղղված հանցագործություն: Շեպեկը դիտարկում է պատկերի վրա հիմնված սեռական բռնու-

թյունը որպես «բովանդակության հետ կապված կիբերհանցագործություն»՝ երեխաների սեռական բռնության նյութերի նման: Որպես օրինակ նա մեջբերում է Սլովենիայի քրեական օրենսգիրքը (2017թ.), որը քրեականացնում է պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը, եթե պատկերների տարածումը լրջորեն ազդում է մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության վրա: Շեպեկը բացատրում է, որ խնդրի այս շրջանակը պետք է 1) պարունակի անհանգստություն պատճառելու մտադրություն և 2) լրջորեն ազդի տուժողի անձնական կյանքի անձեռնմխելիության վրա: Հեղինակի համար դա սահմանափակ իրավական մոտեցում է, որը հաշվի չի առնում տուժողի նկատմամբ պատկերի վրա հիմնված սեռական բռնություն գործադրելու անսահման հնարավորությունները (զվարճանքի, պարծենալու, շահույթ ստանալու համար և այլն):

> Շատ հեղինակներ առաջարկել են, որ վրեժխնդրության պոռնոգրաֆիան դիտարկվի որպես տեխնոլոգիապես օժանդակվող սեռական բռնություն (Henry & Powell, 2016թ.) կամ կիբեր-սեռական բռնություն (Cripps & Stermac, 2018թ.) կամ սեռական ոտնձգություն (Citron & Franks, 2014թ.) կամ սեռական հանցագործություն (McGlynn, Rackley & Houghton, 2017թ.) կամ նույնիսկ որպես «կիբերբռնաբարություն», որը խախտում է հարձակման ենթարկված անձի սեռական ինքնությունն ու սեռական անձեռնմխելիությունը: Կարող ենք անվանել սա ժամանակակից մոտեցում, որը վրեժխնդրության պոռնոգրաֆիան համարում է լուրջ սեռական հանցագործություն: Մյուս կողմից, մայրցամաքային քրեական իրավունքի ավանդական հայեցակարգը խարսխված է այն համոզմունքի վրա, որ վրեժխնդրության պոռնոգրաֆիայի թիրախը անձնական կյանքի իրավունքն է և անձի արժանապատվության և բարի անվան իրավունքը: Այդ պատճառով մայրցամաքային Եվրոպայի քրեական օրենսգրքերը հաճախ սահմանում են վրեժխնդրության պոռնոգրաֆիան որպես անձնական կյանքի  անձեռնմխելիության և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություն, այսինքն՝ զուտ որպես անձնական կյանքի անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություն: Հետևաբար, այդ երկրներում նման իրավախախտմանն այնքան լուրջ չեն վերաբերվում, որքան այն երկրներում, որտեղ դա համարվում է սեռական բնույթի հանցագործություն (Šepec, 2019թ.):

Հեղինակը պնդում է, որ պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը «սեռական հանցագործություն է, քանի որ մարդու սեռական անձեռնմխելիության վրա ազդեցությունն ավելի նման է սեռական այլ հանցագործությունների հետևանքներին (հատկապես մանկական պոռնոգրաֆիայի կամ սեռական բռնության և ոտնձգության) քան անձնական կյանքի իրավունքի խախտմանը» (Šepec, 2019թ.):

Անշուշտ, Ստամբուլի կոնվենցիայի շատ Մասնակից պետություններում գործում են օրենքներ, որոնք կիրառելի են պատկերի վրա հիմնված սեռական բռնության դեպքում: Դրանց մի մասն այն որակավորում են որպես անձնական կյանքի իրավունքի խախտում, մյուսները հաշվի են առնում հանցագործության սեռական հարթությունը:

- Անդորրայի Քրեական օրենսգրքում այն որակվում է որպես պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություն (Գլուխ IX) կամ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի խախտում (Գլուխ X):
- Ավստրիայում այն ներառված է Քրեական օրենսդրության մեջ՝ «Հեռահաղորդակցության կամ թվային համակարգերի հետ կապված շարունակական հետապնդում» (հոդված 107գ) և «պատկերների չարտոնված պատրաստում» (հոդված 120ա) հոդվածների ներքո:
- Խորվաթիան քրեականացնում է անձնական պատկերների ստեղծումը, օգտագործումը կամ տարածումը Քրեական օրենսգրքի XIV-րդ գլխի «Անձնական կյանքի անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ» 144-րդ հոդվածում (Պատկերների չարտոնված պատրաստում):

- Էստոնիան Քրեական օրենսգրքի 157-րդ և 157-1 հոդվածներով քրեականացնում է անձնական տվյալների անօրեն կերպով տարածումը և զգայուն անձնական տվյալների անօրեն կերպով հրապարակումը: 18 տարեկանից բարձր անձանց թիրախավորման դեպքում սեռական և գենդերային ծանրացուցիչ որևէ հանգամանքներ սահմանված չեն:
- Ֆրանսիայի Քրեական օրենսգրքի 226-2-1-րդ հոդվածում այս իրավախախտումը սահմանված է որպես անձնական կյանքի իրավունքի խախտում ծանրացուցիչ սեռական հանգամանքներով, որի դեպքում իրավախախտը պատժվում է երկու տարվա ազատազրկմամբ և 60 000 եվրո տուգանքով:
- Գերմանիայում Քրեական օրենսգրքի 201ա բաժինը վերաբերում է «լուսանկարելու կամ այլ պատկերների միջոցով անձի ինտիմ կյանքի իրավունքի խախտմանը»:
- Լեհաստանում տուժողի կամ նրա հետ սերտ առնչություն ունեցող այլ անձի մշտական հետամտումը, որը սահմանված է Քրեական օրենսգրքի 190ա հոդվածում, ընդգրկում է նաև նման վարքագծի որոշ կարևոր առցանց դրսևորումները: Այդ առումով օրենքը հատուկ քրեականացնում է համացանցում անձի ինքնության գողությունը՝ ֆինանսական շահույթ կորզելու կամ անձնական վնաս պատճառելու նպատակով:
- Սլովենիայի Քրեական օրենսգրքում հետամտումը ներառվել է որպես առանձին հանցագործություն, որն ընդգրկում է մարդկանց հետևելն իրական կյանքում, ինչպես նաև կապի էլեկտրոնային միջոցներով հետամտումը (հոդված 134ա):
- Շվեյցարիայում օրենքը առանձին չի սահմանում պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը որպես հանցագործություն: Քրեական օրենսգիրքը սահմանում է պոռնոգրաֆիան որպես հանցագործություն (հոդված 197) կամ անձնական կյանքի իրավունքի խախտում (հոդված 179), որը հաշվի է առնում անձի կամքին հակառակ գործելու հանգամանքը:
- Իսպանիայում Քրեական օրենսգրքի վերանայած 197-րդ հոդվածը քրեականացնում է անձնական գաղտնի տվյալների բացահայտումը և հրապարակումը: Ծանրացուցիչ հանգամանք է համարվում, երբ այն տեղի է ունենում (նախկին) ինտիմ հարաբերությունների համատեքստում:

Բուդապեշտի կոնվենցիայի ֆեմինիստական հարթությամբ համալրված Ստամբուլի կոնվենցիայի շրջանակը թույլ է տալիս պատկերի վրա հիմնված սեռական բռնության հարցը դիտարկել որպես համացանցում տեղի ունեցող և նոր տեխնոլոգիաներով օժանդակվող սեռական հետամտման ձև: Նման մոտեցման առավելությունն այն է, որ հաշվի է առնվում հանցագործության սեռական հարթությունը, հետամտման կրկնվող բնույթը  և տուժողի վրա ազդեցությունը, քանի որ սեռական բռնությունը սահմանվում է որպես «սեռական բնույթի անցանկալի վերբալ, ոչ վերբալ կամ ֆիզիկական վարքագիծ՝ անձի արժանապատվությունը ոտնահարելու նպատակով կամ դրան հանգեցնող, մասնավորապես, երբ ստեղծվում է վարկաբեկող, թշնամական, նվաստացուցիչ, նվաստացնող կամ վիրավորական միջավայր»: Ինչպես և ընտանեկան բռնության այլ տեսակների դեպքում Ստամբուլի կոնվենցիան այն որակում է որպես ծանր հանցագործություն, որպես ծանրացուցիչ հանգամանք դիտարկելով այն փաստը, որ «հանցագործությունը կատարվել է նախկին կամ ներկա ամուսնու կամ զուգընկերոջ նկատմամբ՝ ներպետական իրավունքում դրանց տրված իմաստով, ընտանիքի անդամի, տուժողի հետ համատեղ բնակվող կամ տուժողի նկատմամբ ունեցած իշխանությունը չարաշահած անձի կողմից» (հոդված 46):

## ՀԱՎԵԼՎԱԾ 2.

# ԱՌՑԱՆՑ ՍԵՔՍԻՍՏԱԿԱՆ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ՝ ՕՐԵՆՔՈՒՄ ՈՒ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐՈՒՄ

Սեքսիզմի կանխարգելման և դրա դեմ պայքարի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի վերջին հանձնարարականն այն սահմանում է հետևյալ կերպ.

> Ցանկացած արարք, ժեստ, տեսողական պատկեր, բանավոր կամ գրավոր խոսք, գործելակերպ կամ վարքագիծ, որը հիմնված է այն մտքի վրա, որ անձը կամ մարդկանց խումբը ստորադաս է իրենց սեռի պատճառով, որը տեղի է ունենում հանրային կամ մասնավոր ոլորտում, լինի դա առցանց, թե անցանց, հետևյալ նպատակով կամ ազդեցությամբ՝ անձի կամ մի խումբ անձանց արժանապատվության կամ իրավունքների ոտնահարում, մարդուն կամ մարդկանց խմբին ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ սոցիալ-տնտեսական վնասի կամ տառապանքի պատճառում, ահաբեկող, թշնամական, նսեմացնող, նվաստացնող կամ վիրավորական միջավայրի ստեղծում, անձի կամ մի խումբ անձանց կողմից մարդու իրավունքների ազատ և լիարժեք իրացմանը խոչընդոտում. գենդերային կարծրատիպերի ստեղծում և խորացում (Եվրոպայի խորհուրդ, 2019):

Առցանց սեքսիստական ատելության խոսքը ներառում է բառերի, վիրավորանքի, հայհոյանքների և հաճախ պատկերների օգտագործումը՝ աղջիկների և կանանց նկատմամբ թշնամանք հաղորդելու համար, քանի որ նրանք կին են: Որպես կանոն, հետամտողները դիմում են վիրավորանքների և մեկնաբանություններ են անում կանանց ֆիզիկական արտաքնի կամ մարմնի կազմվածքի, գենդերային կարծրատիպերին համապատասխանելու կամ չհամապատասխանելու կամ սեռականության վերաբերյալ:

Սեքսիզմի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի հանձնարարականն ընդգծում է, որ «համացանցը նոր հարթություն և մեծ լսարան է ապահովել սեքսիզմի, հատկապես սեքսիստական ատելության խոսքի արտահայտման և փոխանցման համար, թեև սեքսիզմի արմատները ոչ թե տեխնոլոգիայի, այլ պահպանվող գենդերային անհավասարության մեջ են»:

Առցանց սեքսիստական ատելության խոսքը միտված է նույն նպատակին, ինչ որ անցանց և առցանց ատելության խոսքի այլ դրսևորումները՝ սահմանափակել ներկայությունը հանրային տարածքում, նվաստացնել կամ «այլակերպել», գերակայություն և իշխանություն հաստատել, ահաբեկել և վախեցնել՝ լռեցնելու և «անտեսանելի» դարձնելու նպատակով»:

Առցանց սեքսիստական ատելության խոսքի մասին քննարկման գլխավոր թեմաներից է ատելության խոսքի և խոսքի ազատության միջև դիալեկտիկան.

> Կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության երևույթի դեմ պայքարի ջանքերը դադարեցվել են գենդերային հավասարության փաստարկները խոս-

քի ազատության նկատառումների հետ համադրելու արդյունքում, ինչը հանգեցրել է մի իրավիճակի, երբ կանայք շարունակում են ենթարկվել առցանց բռնության և ատելության, նրանց ձայնը լռեցվում է, ինչը և ընդգծել են ՄԱԿ-ի հատուկ զեկուցողները (Barker and Jurasz, 2019թ.):

Հարկ է նշել, որ ատելության խոսքն, ի սկզբանե, ձևավորվել և սահմանվել է ռասիզմի և հակասեմիտիզմի համատեքստում, հետևաբար սեքսիստական ատելության խոսքը պարունակում է նաև ռասայի գործոնը: «Ատելության խոսքի» մասին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 հանձնարարականն այն սահմանում է հետևյալ կերպ.

արտահայտման բոլոր ձևերը, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, այլատյացությունը, հակասեմիտիզմը կամ անհանդուրժողականության վրա հիմնված ատելության այլ ձևերը, ներառյալ՝ ագրեսիվ ազգայնականությամբ և էթնոցենտրիզմով արտահայտված անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների, միգրանտների և ներգաղթյալների նկատմամբ խտրականությունն ու թշնամանքը:

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ՌԱԵՀ) 2015 թվականի դեկտեմբերի թիվ 15 Ընդհանուր քաղաքականության հանձնարարականը ատելության խոսքը սահմանում է հետևյալ կերպ.

որևէ անձի կամ անձանց խմբի նվաստացման, նրանց նկատմամբ ատելության կամ վիրավորանքի, ինչպես նաև ցանկացած հետապնդման, հարձակման, բացասական կարծրատիպերի, հասարակության կողմից պարսավանքի կամ սպառնալիքի քարոզչություն, խրախուսում կամ հրահրում, ցանկացած ձևով, այդ անձի կամ անձանց խմբի նկատմամբ, որը հիմնվում է «ռասայի», մաշկի գույնի, ծագման, ազգային կամ էթնիկ պատկանելիության, տարիքի, հաշմանդամության, լեզվի, կրոնի կամ հավատքի, սեռի, գենդերի, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշման և այլ անձնական հատկանիշների կամ կարգավիճակի վրա[38]:

Ի լրումն, Եվրոպայի խորհրդի կիբերհանցագործությունների մասին կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, որը վերաբերում է թվային համակարգերի միջոցով իրականացվող ռասիստական և այլատյաց բնույթի գործողությունների քրեականացմանը, Մասնակից պետություններից պահանջում է ընդունել համապատասխան օրենսդրություն և ապահովել դրա արդյունավետ կիրարկումը: Պետությունները պետք է նաև ընդունեն օրենքներ և այլ օրենսդրական ակտեր, որոնք քրեականացնում են «թվային համակարգի միջոցով հանրության շրջանում ռասիստական և այլատյաց նյութերի տարածումը կամ դրանք այլ կերպ հասանելի դարձնելը» (Եվրոպայի խորհուրդ, 2020b):

Սառա Բանեթ-Վայզերը և Քեյթ Միլթները (2016թ.) «#Փխրունառնականություն. մշակույթ, կառուցվածք և ցանցային կնատյացություն» աշխատությունում փորձում են պատասխան տալ «թե ինչու հենց այս պատմական պահին է ուղեկցում կանանց նկատմամբ առանձնապես կատաղի բռնության և թշնամանքի ալիքը»: Ըստ հեղինակների՝ բռնության այս ձևերը «ոչ միայն գենդերային, այլ նաև հաճախ ռասիստական բնույթ ունեն և թիրախավորում են տարբեր ռասաների ներկայացուցիչ կանանց»: Հեղինակները շրջանառության մեջ են դնում ցանցային կնատյացության հայեցակարգը՝ ընդգծելով մշակութային և կառուցվածքային ինտերսեկցիոնալությունը, որն առաջացնում է կանանց և հատկապես տարբեր ռասաների ներկայացուցիչ կանանց նկատմամբ առցանց ատե-

---

38. ՌԱԵՀ (2015թ.), ՌԱԵՀ-ի 2015 թվականի դեկտեմբերի թիվ 15 Ընդհանուր քաղաքականության հանձնարարականը ատելության խոսքի դեմ պայքարի մասին, հասանելի է հետևյալ հասցեով՝ https://rm.coe.int/ecri-general-policy-recommendation-no-15-on-combating-hate-speech/16808b5b01:

լության այս մակարդակը: Որոշ խմբեր քարոզում են սեքսիզմի, ռասիզմի և բռնության այս փուլը, նրանցից ոմանք օգտագործելով ծայրահեղ աջ ավանդական խոսույթը բռնությունն արդարացնելու համար, մյուսները՝ ձևավորելով առցանց հարթակներին հարմարեցված ծայրահեղ աջ նառատիվների նոր եղանակներ (Hampton/Slate, 2019, Lavin, 2020):

Նաև այս պատճառով է հեղինակ Մարգարիտա Սալասը նկարագրում առցանց սեքսիստական ատելության խոսքի և խոսքի ազատության դիալեկտիկան որպես «կեղծ պարադոքս» և կոչ է անում ճանաչել սեքսիստական ատելության խոսքը որպես բռնության ձև, որը նման է ռասիզմին և այլատյացությանը:

> Երբ մենք խոսում ենք խոսքի ազատության մասին, մենք մարդու իրավունքների հարացույցի շրջանակներում ենք: Մարդու իրավունքներն անքակտելի են, փոխկապակցված և փոխազդող, ինչը նշանակում է, որ մի իրավունքի բարելավումը նպաստում է մյուսների առաջխաղացմանը, իսկ մեկ իրավունքից զրկելը բացասաբար է անդրադառնում մյուս իրավունքների իրացման վրա: Դա նաև նշանակում է, որ դրանք չպետք է աստիճանակարգվեն՝ խոսքի ազատությունը գերակա չէ բռնությունից զերծ կյանքով ապրելու իրավունքի նկատմամբ: Դա նաև նշանակում է, որ խոսքի ազատությունն ունի օրինական սահմանափակումներ՝ մարդու այլ իրավունքների հետ հավասարակշռություն հաստատելու համար (Salas/ GenderIT, 2013թ.):

Եվրոպայի խորհուրդը երկար տարիներ աշխատում է ատելության խոսքի խնդրի վրա և ուսումնասիրվել են բազմաթիվ ոլորտներ, ներառյալ, վերջերս ուսումնասիրված, առցանց ատելության խոսքը: «Ատելության խոսքի առցանց տարածման պատճառով հատուկ ջանքեր են գործադրվել հասկանալու դրա առանձնահատուկ բնույթը և դիմակայելու դրանով պայմանավորված բազմաթիվ մարտահրավերներին: Թեև համացանցում ատելության խոսքի տարածումն էապես չի տարբերվում իրական կյանքում դրա տարածումից, սակայն առցանց միջավայրերի բնույթը դժվարացնում է պատասխանատուների նույնականացման խնդիրը և համապատասխան իրավական միջոցների մշակումը» (Եվրոպայի խորհուրդ, 2020b):

Եվրոպայի խորհրդի առցանց ատելության խոսքի վերաբերյալ 2020թ. ուսումնասիրությունը պարունակում է 30 ցուցիչներից բաղկացած մոդել, այդ թվում՝ պաշտպանության և փոխհատուցման միջոցով առցանց ատելության խոսքի կանխարգելման և վերացման լավ քաղաքականության իրականացման և գնահատման համար: Այս ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ շահագրգիռ կողմեր կոնկրետ արձագանքներ են մշակում առցանց ատելության խոսքին տարբեր մակարդակներում, այդ թվում՝ միջազգային կամ տարածաշրջանային կազմակերպությունները, պետությունները և տեխնոլոգիական ընկերությունները, կանանց իրավունքների պաշտպանության և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները: Ըստ ուսումնասիրության հեղինակի «կառավարական մարմինները, համացանցային հարթակները և քաղաքացիական կազմակերպությունները պետք է ստանձնեն առցանց ատելության խոսքի դեմ պայքարի պատասխանատվությունը և ապահովեն դրա գործնական իրացման և իրավական պատասխանատվության համաչափ բաշխումը» (Եվրոպայի խորհուրդ, 2020a):

Համացանցային հարթակների մակարդակով օգտագործվում են երկու տեսակի գործիքներ ընկերության բովանդակային կանոնները խախտող անօրինական ատելության խոսքը բացահայտելու և հեռացնելու համար: Բովանդակության մոդերատորական համակարգերը վերահսկում և կիրառում են (տեքստի արդյունահանման և մեքենայական ուսուցման, ալգորիթմների կամ մարդկանց մոդերատորների միջոցով) մի շարք կանոններ և ուղեցույցներ օգտատերերի հրապարակումների (մասնավորապես՝ տեքստերի) վերաբերյալ որոշելու համար՝ արդյոք դա ընդունելի է, թե խախտում է հարթակից օգտվելու պայմանները (ներառյալ՝ տեղական օրենսդրության պահանջները): Շատերը քննադատում են ինչպես ալգորիթմական լուծումները (բավականաչափ մանրազնին չլի-

նելու, համատեքստը հաշվի չառնելու, մեքենայական ուսուցման գործիքների կամ ալգորիթմների կողմից օգտագործվող «ուսուցման տվյալների բազայից» չափազանց կախված լինելու համար, որը երբեմն կանխակալ է, անորոշ իրավիճակներում մոդերացման դեպքում սահմանափակ վստահելիություն համար), այնպես էլ մոդերացման մարդկային գործոնը (աշխատանքային վատ պայմանները, քանի որ այդ աշխատանքը սովորաբար արտապատվիրվում է ոչ այնքան խիստ աշխատանքային օրենսդրությամբ երկրներ, ուսուցման անբավարար մակարդակը, հետտրավմատիկ սթրեսի առաջացման ռիսկը) (Cambridge Consultants/OfCom, 2019թ., Sinders, 2017թ., Breslow, 2018թ.): Բովանդակությունն այնուհետև ուղարկվում է իրավաբանական թիմին, որը վերլուծում և հեռացնում է անօրինական բովանդակությունը՝ տեղական օրենսդրության համապատասխան:

Առցանց ատելության խոսքի դեմ պայքարելու համար համացանցային հարթակների կողմից կիրառվող երկրորդ մեխանիզմը հաղորդումների հոսքերի վերահսկումն է: Յուրաքանչյուր սոցիալական մեդիա հարթակ ունի հաղորդումների մի շարք գործիքներ, որոնց միջոցով մարդիկ բողոք են ներկայացնում առցանց բռնության դեպքերում: Օգտատերերին խնդրում են հաղորդել բովանդակության մասին, որը խախտում է ընկերության կանոնները կամ տեղական օրենքները: Կազմակերպությունները, որոնք աշխատում են որպես վստահելի ազդարարներ կամ մոնիթորինգ իրականացնող մարմիններ, նույնպես զեկուցում են անօրինական բովանդակության մասին: Որոշ հարթակներ մեծ առաջընթաց են գրանցել հաղորդումների համապարփակ ուղեցույցների մշակման գործում՝ բռնության տեսակների սահմանումներով և իրազեկմամբ, մյուսները դեռևս սկզբնական փուլում են, և բռնության մասին հաղորդելու համար օգտատերերի հնարավորությունները սահմանափակ են: Հարկ է նշել, որ հարթակներում բռնության սահմանումների մեծ մասը գենդերային չեզոք է և ընդհանրապես հաշվի չի առնում ինտերսեկցիոնալությունը[39]:

Հարթակների կողմից ստեղծվում են նաև վերահսկողության կառույցներ, ներառյալ հարթակների բովանդակության կանոնների և բովանդակության մոդերատորության ուղեցույցների և գործընթացների վերաբերյալ հանրային խորհրդակցություններ: Վերահսկողության այդ ձևը Ալեքսանդր Բրաունի կողմից բնութագրվում է որպես «վերահսկողության ամենաստորին հնարավոր մակարդակ» (Եվրոպայի խորհուրդ, 2020a)՝ համացանցային հարթակի մակարդակով ստեղծված ներքին բողոքարկման գործընթացներն են, որոնք օգտագործվում են բովանդակությունը հեռացնելու կամ չհեռացնելու որոշումները բողոքարկելու համար, և վերահսկիչ խորհուրդները, ղեկավար կոմիտեները կամ վերահսկիչ խորհուրդները, որոնց նպատակն է վճիռ կայացնել անորոշ իրավիճակներում:

Անդրադառնալով մասնավոր հատվածի և պետությունների կողմից ինքնակարգավորման վրա հիմնված, համակարգված համատեղ արձագանքին, կարելի է վկայակոչել Եվրոպական հանձնաժողովի և սոցիալական մեդիա հարթակների մեծ մասի կողմից ստորագրված առցանց ատելության խոսքին հակազդելու վարքագծի կանոնագիրքը):

Վերջապես, Եվրոպայում շրջանառության մեջ է դրվել առցանց ատելության խոսքի տարբեր դրսևորումներին արձագանքելու օրենսդրությունը: Այն սահմանում է պարտավորություններ հարթակների համար որոշակի ժամկետներում հեռացնելու ատելության ապօրինի խոսքը (24 ժամ կամ յոթ օր՝ կախված բովանդակության տեսակից), սակայն պարունակում է մի շարք թերություններ: Ատելության խոսքի մասին օրենսդրությունը, որպես կանոն, նախատեսում է տուգանքներ՝ սահմանված ժամկետում բովանդակությունը հեռացնելու պարտականությունը շարունակաբար խախտելու դեպքերում, դրանով իսկ հնարավորություն տալով հարթակներին վճարել տուգանքը, այլ ոչ թե փոխել իրենց գործելակերպը՝ հարմարեցնելով պահանջներին: Խոսքի ազատության մասնա-

39. Տե՛ս, օրինակ՝ Facebook-ի օգնության կենտրոնները (հասանելի են հետևյալ հասցեով՝ www.facebook.com/help/1126628984024935?helpref=hc_global_nav), Twitter-ի (հասանելի է՝ https://help.twitter.com/en/rules-and- politikas/twitter-report-violation), Snapchat-ի (հասանելի է՝ https://support.snapchat.com/fr-FR ) և TikTok-ի (հասանելի է՝ https://support.tiktok.com/en/):

գետներն ընդգծում են դատական լիազորությունները մասնավոր դերակատարներին վստահելու, հարթակների կողմից ատելության խոսքի հեռացման մասին որոշումն առանց արտաքին վերահսկողության կայացնելու կամ անգամ պատասխանատվությունից խուսափելու համար անհրաժեշտից շատ բովանդակություն հեռացնելու ռիսկերը, հատկապես հատուկ բովանդակության պարագայում, ինչպիսին է լրագրությունը (տե՛ս նույն տեղը):

Գերմանիայում անօրինական ատելության խոսքի դեմ պայքարելու նպատակով կիրառվող «Ցանցերում իրավունքների պաշտպանության մասին» օրենքը (NetzDG Act), որը մոտ ժամանակներս թարմացվելու է, քննադատության է ենթարկվել խոսքի ազատության և տվյալների պաշտպանության մասնագետների կողմից, քանի որ հարթակներից պահանջվող իրավական պատասխանատվությունը «խնդրահարույց է, այն փոխանցում է քվազի-դատական կամ քրեական արդարադատության լիազորությունները համացանցային հարթակներին, թեև համացանցային հարթակները, որպես կանոն, չունեն կարողություն և փորձ՝ ապահովելու գործընթացի պատշաճ բարձր մակարդակ, որն ապահովվում է դատական գործընթացներում» (տե՛ս նույն տեղը):

Ֆրանսիայում «Ավիայի օրենքը», որը հարթակներին պարտադրում է 24 ժամվա ընթացքում հեռացնել դրոշակավորած «ակնհայտ ապօրինի» ատելության խոսքը և մեկ ժամվա ընթացքում երեխաների սեռական բռնություն պարունակող նյութերը և ահաբեկչական քարոզչությունը կամ տուգանվելու վտանգի տակ հայտնվել, 2020 թվականի հունիսին մերժվեց Սահմանադրական Խորհրդի կողմից՝ նույն պատճառներով:

> Հաշվի առնելով դրոշակավորած բովանդակության անօրինականությունը սահմանված ժամկետում որոշելու և առաջին խախտման համար տույժի չափը սահմանելու դժվարությունները, և պատասխանատվությունից ազատող սահմանված հիմքերի բացակայությունը, [օրենսդրությունը] կարող է միայն դրդել առցանց հարթակի օպերատորներին հեռացնել դրոշակավորած բովանդակությունը, անկախ նրանից, թե այն ակնհայտ անօրինական բնույթ ունի, թե ոչ (Politico, 2020թ.):

Ինչպես եզրակացնում է Ալեքսանդր Բրաունը, «խորհուրդ է տրվում, որ պետական գործակալությունները, համացանցային հարթակները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, այդ թվում մոնիթորինգի մարմինները զգայուն մոտեցում դրսևորեն տուժողների նկատմամբ, որպես կառավարման գործիքների հաջողության կամ առաջընթացի երաշխիք և նախապայման» (Եվրոպայի խորհուրդ, 2020a): Ավելին, Ստամբուլի կոնվենցիայի շրջանակներում սեքսիստական ատելության խոսքի դասակարգումը որպես ծանրացուցիչ հանգամանքներով (օրինակ՝ հաշվի առնելով ներգրավված իրավախախտների թիվը) հոգեբանական բռնություն, կարող է նպաստել զոհակենտրոն մոտեցման որդեգրմանը ատելության խոսքի դեմ պայքարի գործում, հատկապես սեքսիստական և ինտերսեկցիոնալ ատելության խոսքից տուժողների պարագայում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 3.
# ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ

**Ալգորիթմ**

Ալգորիթմը հրահանգների փաթեթ է կամ հաջորդականություն, որն օգտագործվում է թվային համակարգում ավտոմատացված առաջադրանք կատարելու կամ խնդրի լուծում գտնելու համար:

**Ամպ**

Ամպը համակարգչային տվյալների պահպանման այլընտրանքային եղանակ է, որտեղ թվային տվյալները պահվում են ոչ թե օգտատիրոջ ֆիզիկական հիշողության սկավառակի վրա, այլ արտաքին սերվերների վրա, երբեմն մի քանի վայրերում, որոնք պատկանում և կառավարվում են հոսթինգ ընկերության կողմից:

**Աշխարհագրական տեղորոշում**

Աշխարհագրական տեղորոշումը սարքի աշխարհագրական դիրքը պարզելու հատկությունն է՝ GPS ազդանշանների կամ կապի այլ ձևերի միջոցով:

**Աութինգ**

Աութինգ որևէ անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության բացահայտման պրակտիկան է առանց այդ անձի համաձայնության, հաճախ հրապարակայնորեն:

**Ափսքիրթինգ**

Առանց անձի թույլտվության նրա կիսաշրջազգեստի տակ սեռական բնույթի լուսանկար կատարելը՝ հաճախ այն առցանց տարածելու մտադրությամբ:

**Դեդնեյմինգ**

Դեդնեյմինգը տրանս անձի ծննդյան ժամանակ տրված անվան (ներկայիս սեռին չհամապատասխանող) միտումնավոր օգտագործումն է՝ նրան խայտառակելու, սպառնալու, վախեցնելու կամ վիրավորելու նպատակով:

**Դիփֆեյքեր**

Դիփֆեյքերը տեսահոլովակներ են, որոնցում մեկ անձի դեմքն աննկատ փոխարինվում է մեկ այլ անձի դեմքով՝ օգտագործելով ալգորիթմներ, մեքենայական ուսուցում և մանիպուլյացիայի ենթարկելով ձայնը, որպեսզի պատրանք ստեղծվի, որ ներկայացվում են թիրախավորված անձի գործողությունները:

**Դոքսինգ**

Դոքսինգը թիրախավորված անձի անձնական տեղեկատվության (հեռախոսահամար, էլ. փոստի հասցե, տան հասցե, մասնագիտական կոնտակտներ) առցանց տարածումն է՝ առանց նրա համաձայնության՝ բռնությունը խրախուսելու նպատակով:

### Էլեկտրոնային ապացույցներ

Էլեկտրոնային ապացույցները ստացվում են ցանկացած թվային կամ տեխնոլոգիական սարքում պարունակվող կամ արտադրված տվյալներից:

### Իրերի համացանց (IoT)

Իրերի համացանցը ֆիզիկական օբյեկտների ցանց է, որոնք միացված են իրար և համացանցին, ինչի արդյունքում գրանցում և փոխանցում են դրանց օգտագործման վերաբերյալ տվյալները:

### Լրտեսող/հետամտման ծրագրեր

Լրտեսող ծրագրերը, որպես կանոն, հավելվածի տեսքով ծրագրային ապահովում է, որը ներբեռնվում է ինչ-որ մեկի հեռախոսի կամ սարքի վրա և օգտագործվում այդ սարքի աշխատանքին հետևելու համար: Ընտանեկան բռնության համատեքստում լրտեսող ծրագրերը համարվում են հետամտման ծրագրեր:

### Կիբերբուլինգ

Կիբերբուլինգը բուլինգի տեսակ է, որը տեղի է ունենում թվային գործիքների և կարգավորումների միջոցով և, որպես կանոն, թիրախավորում է անչափահասներին:

### Կիբերֆլեշինգ

Կիբերֆլեշինգն առանց անձի համաձայնության նրա սեռական պատկերներն ուղարկելն է՝ ծանոթությունների հավելվածների, հաղորդագրությունների, Airdrop-ի կամ Bluetooth-ի միջոցով:

### Կրվող պարագաներ

Կրվող պարագաները մարմնի վրա կրվող խելացի սարքեր են, որոնք հավաքում, վերլուծում և կիսում են անձի մասին ֆիզիկական տեղեկատվությունը՝ նպատակ ունենալով հետևել նրա սովորություններին կամ առողջությանը:

### Հաքերային հարձակում

Հաքերային հարձակումը թվային համակարգ կամ ցանց ապօրինի կամ առանց անձի համաձայնության մուտք գործելն է:

### Մարմնի խայտառակում

Մարմնի խայտառակումն ինչ-որ մեկի մարմնի ձևը, չափը կամ արտաքին տեսքը մեկնաբանելն է և ծաղրելը:

### Պատկերի վրա հիմնված սեռական բռնություն

Պատկերի վրա հիմնված սեռական բռնությունը ենթադրում է բռնարարի կողմից զուգընկերային հարաբերությունների ընթացքում բացահայտ սեռական պատկերների կամ տեսանյութերի ստացում, կամ տուժողի համակարգչից, սոցիալական ցանցերի հաշիվներից կամ հեռախոսից դրանց գողացում և կոտրում՝ առցանց տարածելու նպատակով:

### Սեռավարություն

Սեռավարությունը սեռական բովանդակության (պատկերներ, տեսանյութեր, դիփֆեյքեր, սեռական ասեկոսեներ) հրապարակման սպառնալիքն է՝ անձին վախեցնելու, հարկադրելու կամ շանտաժի ենթարկելու համար՝ լրացուցիչ սեռական նյութեր կամ գումար ստանալու համար, երբեմն՝ երկուսը միասին:

### Սեքսթինգ

Սեքսթինգը տեքստի կամ չաթի միջոցով սեռական բնույթի հաղորդագրություններ փոխանակելն է, ուղարկելը կամ ստանալը, որոնք հաճախ պարունակում են նկարներ կամ տեսանյութեր:

### Տրոլինգ

Տրոլինգը համացանցում վիրավորական մեկնաբանությունների դիտավորյալ տեղադրումն է՝ տագնապ, անհանգստություն կամ նվաստացում առաջացնելու բացահայտ մտադրությամբ: Հարձակումները կարող են իրականացվել նաև մի խումբ մարդկանց կողմից՝ համակարգված և նպատակաուղղված եղանակով:

### Ուղեծրում (Orbiting)

Ուղեծրումն ինչ-որ մեկի հաղորդագրություններին չպատասխանելն է կամ ուղղակիորեն նրա հետ շփվելը, շարունակելով առցանց դիտել նրա բովանդակությունը (հավանել, դիտել պատմություններ և այլն):

### «Ուրախ ապտակ» (Նկարահանված հարձակում)

«Ուրախ ապտակը»/Նկարահանված հարձակումը տուժողի վրա հարձակվելու (ֆիզիկական հարձակում կամ սեռական ոտնձգություն) գործողություն է, որի նպատակն է տեսաձայնագրել հարձակումը և տարածել այն առցանց:

### Քրիփշոթեր

Քրիփշոթերն առանց կնոջ համաձայնության արված սեքսուալ մտքեր առաջացնող նկարներն են:

### Ֆլեյմինգ

Ֆլեյմինգը վիրավորական կամ թշնամական հաղորդագրությունների՝ ներառյալ վիրավորանքները, տեղադրումն է սոցիալական ցանցերում կամ ֆորումներում:

### Airdrop

Airdrop-ը Apple-ի կողմից մշակված ծառայություն է, որը թույլ է տալիս օգտատերերին բովանդակություն փոխանակել մոտակայքում գտնվող Apple արտադրանքի մեկ այլ օգտատիրոջ հետ:

### DDoS գրոհ (Ծառայության բաշխված մերժում)

DDoS գրոհը սերվերը կամ ծառայությունը համացանցային տրաֆիկով գերծանրաբեռնելու փորձ է՝ այն ճնշելու, խափանելու կամ անջատելու նպատակով:

### IP հասցե (Համացանցային կանխագրի հասցե)

IP հասցեն համացանցին միացված սարքին հատկացված եզակի համար է, որը թույլ է տալիս նույնականացնել այդ սարքը և դրա գտնվելու վայրը:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


Abdul Aziz Z. (2017), “Due Diligence and Accountability for Online Violence against Women”, հասանելի է՝ www.duediligenceproject.org:

Active Bystander UK (n.d.), accessed on 25 September 2020, հասանելի է՝ www.activebystander.co.uk/:

Ajder H., Patrini G., Cavalli F. and Cullen L. (2019), “The State of Deepfakes: Landscape, Threats, and Impact”, հասանելի է՝ https://sensity.ai/mapping-the-deepfake-landscape/:

Algorithm Watch (2020), “Our response to the European Commission’s planned Digital Services Act”, հասանելի է՝ https://algorithmwatch.org/en/submission-digital-services-act-dsa/:

Amnesty International (2018), “Toxic Twitter – a toxic place for women”, հասանելի է՝ www.amnesty.org/en/latest/research/2018/03/online-violence-against-women-chapter-1:

Amnesty International (2020), “Twitter Scorecard”, հասանելի է՝ www.amnesty.be/IMG/pdf/20200922_rapport_twitter_scorecard.pdf:

Association for Progressive Communications/OHCHR (n.d.), “Input on Protection Orders”, accessed on 14 October 2020, հասանելի է՝ www.ohchr.org/Documents/Issues/Women/SR/Shelters/APC_UNSRVAW_input%20on%20protection%20orders.pdf:

Banet-Weiser S. and Miltner K. M. (2016), “#MasculinitySoFragile: culture, structure, and networked misogyny”, in *Feminist Media Studies*, հասանելի է՝ www.tandfonline.com/doi/full/10.1080/14680777.2016.1120490:

Barker K. and Jurasz O. (2019), “Online Violence Against Women: addressing the responsibility gap?”, հասանելի է՝ http://eprints.lse.ac.uk/103941/1/WPS_2019_08_23_online_violence_against_women_addressing_the_responsibility_gap.pdf:

BBC (2019a), “Cyber-flashing: ‘I froze when penis picture dropped on to my phone’”, available at: www.bbc.com/news/uk-48054893.

BBC (2019b), “Instagram: Girl tells how she was ‘hooked’ on self-harm images”, հասանելի է՝ www.bbc.com/news/uk-47069865:

BBC (2020), “How your smart home devices can be turned against you”, հասանելի է՝ www.bbc.com/future/article/20200511-how-smart-home-devices-are-being-used-for-domestic-abuse:

Boukemidja N. B. (2018), “Cyber Crimes against Women: Qualification and Means”, in *European Journal of Social Sciences*, հասանելի է՝ https://journals.euser.org/files/articles/ejss_v1_i3_18/Boukemidja.pdf:

Breslow J. (2018), “Moderating the ‘worst of humanity’: sexuality, witnessing, and the digital life of coloniality”, հասանելի է՝ www.tandfonline.com/doi/full/10.1080/23268743.2018.1472034:

Cambridge Consultants/OfCom (2019), “Use of AI in Online Content Moderation”, հասանելի է՝ www.ofcom.org.uk/__data/assets/pdf_file/0028/157249/cambridge-consultants-ai-content-moderation.pdf:

CBC (2017), “Aydin Coban sentenced in Dutch court to 10 years for online fraud, blackmail”, հասանելի է՝ www.cbc.ca/news/canada/british-columbia/aydin-coban-sentenced-netherlands-online-fraud-blackmail-1.4027359:

Centre Hubertine Auclert (2018), “Cyber-violences conjugales”, հասանելի է՝ www.centre-hubertine-auclert.fr/sites/default/files/documents/rapport_cyberviolences_conjugales_web.pdf:

Childnet/Save the Children/UCLan (2019), Project DeShame, հասանելի է՝ www.childnet.com/our-projects/project-deshame:

Citizen Lab (2020), “Installing Fear”, հասանելի է՝ https://citizenlab.ca/2019/06/installing-fear-a-canadian-legal-and-policy-analysis-of-using-developing-and-selling-smartphone-spyware-and-stalkerware-applications/:

Citron D. and Franks M. A. (2014), “Criminalizing Revenge Porn”, հասանելի է՝ https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2368946:

Committee on the Elimination of Discrimination against Women (2017), General recommendation No. 35 on gender-based violence against women, updating general recommendation No. 19, հասանելի է՝ https://tbinternet.ohchr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/1_Global/CEDAW_C_GC_35_8267_E.pdf:

Council of Europe (2001a), Convention on Cybercrime, հասանելի է՝ https://rm.coe.int/1680081561:

Council of Europe (2001b), Explanatory Report to the Convention on Cybercrime, հասանելի է՝ https://rm.coe.int/16800cce5b:

Council of Europe (2003), Additional Protocol to the Convention on Cybercrime, concerning the criminalisation of acts of a racist and xenophobic nature committed through computer systems, հասանելի է՝ https://rm.coe.int/168008160f:

Council of Europe (2007), “Trafficking in human beings: Internet recruitment”, հասանելի է՝ https://rm.coe.int/16806eeec0:

Council of Europe (2011a), Council of Europe Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence, հասանելի է՝ https://rm.coe.int/168008482e:

Council of Europe (2011b), Explanatory Report to the Council of Europe Convention on preventing and combating Violence Against Women and domestic violence, Council of Europe Treaty Series No. 210, հասանելի է՝ https://rm.coe.int/16800d383a:

Council of Europe (2015a), Committee of the Parties, Council of Europe Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence, Rules of Procedure of the Committee of the Parties, հասանելի է՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168046325b:

Council of Europe (2015b), “Encouraging the participation of the private sector and the media in the prevention of violence against women and domestic violence”, հասանելի է՝ https://rm.coe.int/16805970bd:

Council of Europe (2017a), *Journalists under pressure – Unwarranted interference, fear and self-censorship in Europe*, հասանելի է՝ https://book.coe.int/en/human-rights-and-democracy/7295-pdf-journalists-under-pressure-unwarranted-interference-fear-and-self-censorship-in-europe.html:

Council of Europe (2017b), Partnership with Digital Companies, հասանելի է՝ https://rm.coe.int/leaflet-partnership-with-internet-companies-en/168079ced2:

Council of Europe (2018a), Convention 108 +, Convention for the protection of individuals with regard to the processing of personal data, հասանելի է՝ https://rm.coe.int/convention-108-convention-for-the-protection-of-individuals-with-regar/16808b36f1:

Council of Europe (2018b), Council of Europe Gender Equality Strategy 2018-2023, հասանելի է՝ https://rm.coe.int/prems-093618-gbr-gender-equality-strategy-2023-web-a5/16808b47e1:

Council of Europe (2018c), “*Mapping study on cyberviolence*”, Cybercrime Convention Committee, Working Group on cyberbullying and other forms of online violence, especially against women and children (CBG), հասանելի է՝ https://rm.coe.int/t-cy-mapping-study-on-cyberviolence-final/1680a1307c:

Council of Europe (2019), Recommendation CM/Rec(2019)1 of the Committee of Ministers to member States on preventing and combating sexism, հասանելի է՝ https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=090000168093b26a:

Council of Europe (2020a), Brown A., “Models of Governance of Online Hate Speech. On the emergence of collaborative governance and the challenges of giving redress to targets of online hate speech within a human rights framework in Europe”, հասանելի է՝ https://rm.coe.int/models-of-governance-of-online-hate-speech/16809e671d:

Council of Europe (2020b), Committee of Experts on combating hate speech, background document, հասանելի է՝ https://rm.coe.int/background-for-adi-msi-dis-june-2020/16809f6b6d:

Council of Europe (2020c), “4 Ps Brochure”, հասանելի է՝ https://rm.coe.int/istanbul-convention-violence-against-women-brochure-4ps-en/16809ecc93:

Council of Europe (2020d), Statement by the Lanzarote Committee Chair and Vice-Chairperson on stepping up protection of children against sexual exploitation and abuse in times of the COVID-19 pandemic, հասանելի է՝ https://rm.coe.int/covid-19-lc-statement-en-final/16809e17ae:

Council of Europe (2021), Group of Experts on Action against Violence against Women and Domestic Violence, “General Recommendation No.1 on the Digital Dimension of Violence against Women”, հասանելի է՝ կթարմացվի նոյեմբերի 24-ից հետո:

Daskal J. and Kennedy-Mayo D. (2020), "Budapest Convention: What is it and how is it being updated?", Cross-Border Data Forum, հասանելի է՝ www.crossborderdataforum.org/budapest-convention-what-is-it-and-how-is-it-being-updated/:

Dodaj A. and Sesar K. (2020), "Sexting categories", in *Mediterranean Journal of Clinical Psychology*, հասանելի է՝ https://cab.unime.it/journals/index.php/MJCP/article/view/2432/0:

Dreßing H., Bailer J., Anders A., Wagner H. and Gallas C. (2014), "Cyberstalking in a large sample of social network users: Prevalence, characteristics, and impact upon victims", in *Cyberpsychology, Behavior, and Social Networking*, 17(2), 61-67, հասանելի է՝ www.few.vu.nl/~eliens/sg/local/cyber/social-stalking.pdf:

European Agency for Fundamental Rights (2014), "Violence against women: an EU-wide survey. Main results report", հասանելի է՝ https://fra.europa.eu/en/publication/2014/violence-against-women-eu-wide-survey-main-results-report:

European Commission (2019), "E-evidence - cross-border access to electronic evidence", հասանելի է՝ https://ec.europa.eu/info/policies/justice-and-fundamental-rights/criminal-justice/e-evidence-cross-border-access-electronic-evidence_en:

European Commission (2020a), Communication from the Commission to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions, A Union of Equality: Gender Equality Strategy 2020-2025, հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:52020DC0152&from=EN:

European Commission (2020b), Communication From The Commission to the European Parliament, The Council, The European Economic and Social Committee and the Committee of the Regions, EU Strategy On Victims' Rights (2020-2025), հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:52020DC0258&from=EN#footnoteref32:

European Commission (2020c), Countering illegal hate speech online, 5th evaluation, of the Code of Conduct, հասանելի է՝ https://ec.europa.eu/info/sites/info/files/codeofconduct_2020_factsheet_12.pdf:

European Commission (2020d), Proposal for a Regulation of the European Parliament and of the Council on a Single Market For Digital Services (Digital Services Act) and amending Directive 2000/31/EC, հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52020PC0825&from=en:

European Parliament (2020), Answer to a Parliamentary question, հասանելի է՝ www.europarl.europa.eu/doceo/document/E-9-2020-002184-ASW_EN.html#def1:

European Parliamentary Research Service (2021), "Combating gender-based violence: Cyber violence, European added value assessment", հասանելի է՝ www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2021/662621/EPRS_STU(2021)662621_EN.pdf:

European Union (2008), Council Framework Decision 2008/913/JHA of 28 November 2008 on combating certain forms and expressions of racism and xenophobia by means of criminal law, հասանելի է՝ https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=LEGISSUM%3Al33178:

European Women's Lobby (2017), "#HerNetHerRights resource pack" հասանելի է՝ www.womenlobby.org/IMG/pdf/hernetherrights_resource_pack_2017_web_version.pdf:

Europol (n.d.), "High-Tech crime, Crime areas", accessed on 1 October 2020, հասանելի է՝ www.europol.europa.eu/crime-areas-and-trends/crime-areas/cybercrime/high-tech-crime:

Facebook (n.d.), "Not without my Consent", հասանելի է՝ www.facebook.com/safety/notwithoutmyconsent/pilot, accessed on 14 October 2020:

Fetters A./*The Atlantic* (2018), "Why It's Hard to Protect Domestic-Violence Survivors Online", հասանելի է՝ www.theatlantic.com/family/archive/2018/07/restraining-orders-social-media/564614/:

Fondation des Femmes (n.d.), Une Force Juridique, accessed on 20 September2021, հասանելի է՝ https://fondationdesfemmes.org/une-force-juridique/:

FRA (Fundamental Rights Agency) (2014), "Violence against women: an EU-wide survey. Main results report", հասանելի է՝ https://fra.europa.eu/en/publication/2014/violence-against-women-eu-wide-survey-main-results-report:

German Criminal Code (Strafgesetzbuch – StGB) (1998/2019), Criminal Code in the version published on 13 November 1998 (Federal Law Gazette I, p. 3322), as last amended by Article 2 of the Act of 19 June 2019 (Federal Law Gazette I, p. 844), հասանելի է՝ www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html:

Ging D. and Siapera E. (2018), "Special issue on online misogyny", in *Feminist Media Studies*, հասանելի է՝ https://doi.org/10.1080/14680777.2018.1447345:

Glitch UK (n.d.), "A little means a lot", accessed on 1 October 2020, հասանելի է՝ https://fixtheglitch.org/almal/:

Glitch and End Violence against Women (2020), "The Ripple Effect, Covid-19 and the epidemic of online abuse", հասանելի է՝ https://glitchcharity.co.uk/wp-content/uploads/2021/04/Glitch-The-Ripple-Effect-Report-COVID-19-online-abuse.pdf:

Guney G. (2020), "The Group of Experts under the Istanbul Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence and the ECtHR: Complementary or Contradictory Tools?", EJIL:Talk!, Blog of the *European Journal of International Law*, հասանելի է՝ www.ejiltalk.org/the-group-of-experts-under-the-istanbul-convention-on-preventing-and-combating-violence-against-women-and-domestic-violence-and-the-ecthr-complementary-or-contradictory-tools/:

Hampton R./Slate (2019), "The Black Feminists Who Saw the Alt-Right Threat Coming", հասանելի է՝ https://slate.com/technology/2019/04/black-feminists-alt-right-twitter-gamergate.html:

Megarry J. (2014), "Online incivility or sexual harassment? Conceptualising women's experiences in the digital age", in *Women's Studies International Forum*, 47, pp. 46-55, հասանելի է՝ www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0277539514001332:

Harris B. (2020a), "Technology, domestic and family violence: perpetration, experiences and responses", QUT Centre for Justice, հասանելի է՝ https://eprints.qut.edu.au/199781/1/V1_Briefing_Paper_template.pdf:

Harris B. (2020b), “Technology and Violence Against Women”, in Walklate S., Fitz-Gibbon K., Maher J. and McCulloch J. (eds), *The Emerald Handbook of Feminism, Criminology and Social Change* (Emerald Studies in Criminology, Feminism and Social Change), Emerald Publishing Limited, pp. 317-336, հասանելի է՝ https://doi.org/10.1108/978-1-78769-955-720201026:

Hinson L., Mueller J., O’Brien-Milne L. and Wandera N. (2018), “Technology-facilitated gender-based violence: What is it, and how do we measure it?”, International Center for Research on Women, հասանելի է՝ www.icrw.org/publications/technology-facilitated-gender-based-violence-what-is-it-and-how-do-we-measure-it/:

IPU (2018), “Sexism, harassment and violence against women in parliaments in Europe”, հասանելի է՝ www.ipu.org/resources/publications/issue-briefs/2018-10/sexism-harassment-and-violence-against-women-in-parliaments-in-europe:

Kelly L. (1988), *Surviving Sexual Violence* (Feminist Perspectives Series), University of Minnesota Press:

Khouiel L./Vice (2020), “Quand le revenge porn s’adapte au confinement”, հասանելի է՝ www.vice.com/fr/article/bvg4pz/quand-le-revenge-porn-sadapte-au-confinement:

Klein J. (2020), “Virtual parental visitation could have unintended consequences for abuse survivors”, in *The Atlantic*, հասանելի է՝ www.theatlantic.com/family/archive/2020/06/dangers-virtual-visitation-abuse-victims/613243/:

Langlais-Fontaine C. (2020), “Démêler le vrai du faux : étude de la capacité du droit actuel à lutter contre les deepfakes”, in *La Revue des droits de l’homme*, հասանելի է՝ http://journals.openedition.org/revdh/9747:

Lavin T. (2020), *Culture Warlords: My Journey Into the Dark Web of White Supremacy*, Hachette, New York:

Laxton C./Women’s Aid (2014), “Virtual World, Real Fear, Women’s Aid report into online abuse, harassment and stalking”, հասանելի է՝ http://bit.ly/2h0W4OX:

Legifrance (2018), Loi no. 2018-703 du 3 août 2018 renforçant la lutte contre les violences sexuelles et sexistes, հասանելի է՝ www.legifrance.gouv.fr/jorf/id/JORFTEXT000037284450/:

Legifrance (2020), Loi no. 2020-936 du 30 juillet 2020 visant à protéger les victimes de violences conjugales, հասանելի է՝ www.legifrance.gouv.fr/jorf/id/JORFTEXT000042176652:

Liggett O’Malley R. (2020), “Cyber Sextortion: An Exploratory Analysis of Different Perpetrators Engaging in a Similar Crime”, հասանելի է՝ www.researchgate.net/publication/339798771_Cyber_Sextortion_An_Exploratory_Analysis_of_Different_Perpetrators_Engaging_in_a_Similar_Crime:

Maple C., Shart E. and Brown A. (2011), “Cyber stalking in the United Kingdom: An Analysis of the ECHO Pilot Survey”, University of Bedfordshire, հասանելի է՝ www.beds.ac.uk/media/244385/echo_pilot_final.pdf:

Markit I. (2017), “The Internet of Things: A movement, not a market”, cited in Lopez-Neira I., Patel T., Parkin S., Danezis G. and Tanczer L. (2019), “‘Internet of Things’: How abuse is getting smarter”, Safe – The Domestic Abuse Quarterly, hասանելի է՝ https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=3350615:

McGlynn C., Rackley E. and Houghton R. (2017), “Beyond ‘Revenge Porn’: The Continuum of Image-Based Sexual Abuse”, hասանելի է՝ https://link.springer.com/article/10.1007/s10691-017-9343-2#citeas:

Morgan C., Webb R. T., Carr M. J., Kontopantelis E., Green J., Chew-Graham C. A., Kapur N. and Ashcroft D. M. (2017), “Incidence, clinical management, and mortality risk following self-harm among children and adolescents: cohort study in primary care”, in *BMJ 359*, j4351, hասանելի է՝ www.bmj.com/content/359/bmj.j4351:

Morrow S. (2019), “Should We Worry About IoT Being Used as a Weapon of Mass Control?”, IoTforall, hասանելի է՝ www.iotforall.com/iot-domestic-abuse:

NPR (National Public Radio) (2014), “Smartphones Are Used To Stalk, Control Domestic Abuse Victims”, hասանելի է՝ www.npr.org/sections/alltechconsidered/2014/09/15/346149979/smartphones-are-used-to-stalk-control-domestic-abuse-victims:

O’Connell A. and Bakina K. (2020), “Using IP rights to protect human rights: copyright for ‘revenge porn’ removal”, in *Legal Studies*, Cambridge University Press, hասանելի է՝ www.cambridge.org/core/journals/legal-studies/article/using-ip-rights-to-protect-human-rights-copyright-for-revenge-porn-removal/2C1840AC0EB870FB2134CEE9586E76D6:

Pariser E. (2011), *The Filter Bubble: What the Internet Is Hiding from You*, Penguin UK:

Peppet S. R. (2014), “Regulating the Internet of Things: First Steps Toward Managing Discrimination, Privacy, Security, and Consent”, hասանելի է՝ https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2409074:

Plan International (2020), “Free to be online? A report on girls’ and young women’s experiences of online harassment”, hասանելի է՝ https://plan-international.org/publications/freetobeonline:

Politico (2020), “French constitutional court strikes down most of hate speech law”, hասանելի է՝ www.politico.eu/article/french-constitutional-court-strikes-down-most-of-hate-speech-law/:

Powell A. and Henry N. (2016), “Policing technology-facilitated sexual violence against adult victims: police and service sector perspectives”, hասանելի է՝ www.researchgate.net/publication/297673926_Policing_technology-facilitated_sexual_violence_against_adult_victims_police_and_service_sector_perspectives:

Powell A., Scott A. J., Flynn A. and Henry N. (2020), “Image-based sexual abuse: An international study of victims and perpetrators”, hասանելի է՝ www.researchgate.net/publication/339488012_Image-based_sexual_abuse_An_international_study_of_victims_and_perpetrators:

Rogers M. (2018) “No More Revenge: Criminalizing Non-Consensual Pornography Through the Convention on Cybercrime”, *Michigan Journal of International Law*, University of Michigan Law School, Ann Arbor, Michigan, hասանելի է՝ www.mjilonline.org/no-more-revenge-criminalizing-non-consensual-pornography-through-the-convention-on-cybercrime/:

Salas M./GenderIT (2013), “The false paradox: freedom of expression and sexist hate speech”, հասանելի է՝ www.genderit.org/es/node/3820:

Salter M., Dragiewicz M., Burgess J., Fernández A., Suzor N., Woodlock D. and Harris B. (2018), “Technology facilitated coercive control: Domestic violence and the competing roles of digital media platforms”, *Feminist Media Studies*, հասանելի է՝ www.researchgate.net/publication/323847103_Technology_facilitated_coercive_control_Domestic_violence_and_the_competing_roles_of_digital_media_platforms:

Šepec, M., (2019), “Revenge Pornography or Non-Consensual Dissemination of Sexually Explicit Material as a Sexual Offence or as a Privacy Violation Offence”, International Journal of Cyber Criminology, հասանելի է՝ https://www.cybercrimejournal.com/MihaSepecVol13Issue2IJCC2019.pdf:

Setterfield R. (2019), “The regulation of ‘revenge porn’ in England and Wales: are existing legal solutions effective?”, University of Surrey, հասանելի է՝ https://openresearch.surrey.ac.uk/esploro/outputs/doctoral/The-regulation-of-revenge-porn-in/99515640902346?institution=44SUR_INST:

Simonovic D. (2020), UN Human Rights Council, Special Rapporteur on Violence against Women, “Report of the Special Rapporteur on Violence against Women, Its Causes and Consequences on online Violence Against Women and girls from a human rights perspective”, հասանելի է՝ https://digitallibrary.un.org/record/1641160:

Sinders C. (2017), “Current Reading List (of papers) on Online Harassment and Machine Learning”, հասանելի է՝ https://medium.com/@carolinesinders/current-reading-list-of-papers-on-online-harassment-and-machine-learning-c70fe674f9d1:

Starr T. S. and Lavis T. (2018), “Perceptions of Revenge Pornography and Victim Blame”, in *International Journal of Cyber Criminology*, Volume 12, Issue 2 July-December 2018, հասանելի է՝ www.cybercrimejournal.com/Starr&Lewisvol12issue2IJCC2018.pdf:

Van der Wilk A. (2018), Policy Department for Citizens’ Rights and Constitutional Affairs, “Cyber violence and hate speech online against women”, հասանելի է՝ www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2018/604979/IPOL_STU(2018)604979_EN.pdf:

Verdelho P. (2019), “Obtaining digital evidence in the global world”, UNIO – EU Law Journal, հասանելի է՝ https://revistas.uminho.pt/index.php/unio/article/view/2298:

Woodlock D. (2017), “The Abuse of Technology in Domestic Violence and Stalking”, Violence Against Women, հասանելի է՝ http://marvin.cs.uidaho.edu/Teaching/CS112/domesticAbuseStalking.pdf:

Ստամբուլի կոնվենցիան կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի առավել համապարփակ միջազգային պայմանագիրն է: Դրա դրույթների բազմակողմանի փաթեթն ընդգրկում է կանխարգելիչ և պաշտպանական լայնածավալ միջոցներ, ինչպես նաև մարդու իրավունքների նման լուրջ խախտումներին քրեական արդարադատության համարժեք արձագանքն ապահովելու մի շարք պարտավորություններ: Կիբերհանցավորության մասին Բուդապեշտի կոնվենցիան կիբերհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների վերաբերյալ ամենաարդիական միջազգային համաձայնագիրն է: Այն նախատեսում է համակարգիչների դեմ ուղղված և դրանց միջոցով իրավախախտումների քրեականացում, էլեկտրոնային ապացույցներ ապահովելու համար դատավարական իրավունքի գործիքակազմ և Կողմերի միջև միջազգային համագործակցություն:

Այս ուսումնասիրությունն անդրադառնում է այդ երկու կոնվենցիաների փոխլրացնող կիրառությունը՝ կանանց նկատմամբ առցանց և տեխնոլոգիապես օժանդակվող բռնության հաղթահարմանն ուղղված համակարգված քաղաքականության, կանխարգելման, պաշտպանության, քրեական հետապնդման և միջազգային համագործակցության միջոցով:

PREMS 153621

HYE

**www.coe.int**

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է մայրցամաքում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 46 պետություններ, այդ թվում՝ Եվրոպական միության բոլոր անդամ պետությունները: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագրի:
Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE